



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6971

1011

2003

Հաշիւ
N 5. 4. 4. Նախաբան 4 արտաբեր
Հրատարակչի:

ԶԱՐԿԵԱՐԻ ՔՆԱՐԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ.ՈՂՈՎԵՑ-ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ.

Բանաստեղծներ շատ կայ, խօսքն զին ունի,
Զարկեարն անզին ա, նորան զին չունի:

Մ ա ի ի Ք:

ԵՐԿՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Բ Ա Գ Ո Ւ



Տպարան Ս. Բ. Տէր-Յովհաննիստեանցի



1890.

391.99
P-12

Բարկայան. Արքայապետ

Զ Ա Ր Կ Ե Ա Ր Ի

Ք Ն Ա Ր Ը

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԺՈՂՈՎԱԾ-ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՑ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ.

Բանաստեղծներ շատ կայ,
Խօսքն զին ունի,
Զարկեարն անզին ա,
Նորան զին չունի:
Մ ա յ Ի ֆ:

ԵՐԿՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Բ Ա Գ Ո Ւ

ՏՊԱՐԱՆ Ս. Բ. ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

1890.

ЛИРА ЗАРГАРА

ПОЭЗИЯ

ИЗДАНИЕ

Священника Григорія Григорянца.

БАКУ.

Типо-Литографія С. Б. Теръ-Ованесва.

1890.

Дозволено Цензурою. Тифлисъ, 12 Марта 1890 г.

К

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ




37-89393

R
48420-տի



34283-654



ՄԵԾԱՊԱՏԻ ՏԵՐ

ՍԱՄՈՒԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԲԱՂԻՐԵԱՆՑԻՆ

ՍԻՐՈՅ ԶԳԱՅՄՈՒՆԻՔՈՎ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ՀՐԱՏԱԲԱԿԻՉԸ

ՄԵԾԱՊԱՏԻԻ ՏԷՐ,

Պ. ԲԱՂԻՐԵԱՆՑ.

Այս Գիրքը, որ ես հրատարակում եմ, Ձեր համա-
քաղաքացուն է և Ձեր բանաստեղծինը: Յուսարով, որ
քաղցր կ'լինի Ձեզ համար կարդալ սորան և ուրախանալ,
իբրև հայրենակից, այս առիժով, ահա, ամենայն լարզան-
քով մատուցանում եմ սորան Ձեզ, մնալով Ձեզ միշտ
ամենայն բարիք ցանկացող՝

Գրիգոր քահանայ Գրիգորեանց:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ.

Հրատարակելով «Չարկեարի Քնարը» ԵՐԿՐՈՐԴ
ՏՊԱԳՐՈՒԹԵԱՍԲ, աւելորդ չեմ համարում ասելու,
որ սորա ԱՌԱՋԻՆ Հրատարակութեան արդիւնքը յատ-
կացրել եմ—նախ՝ Չարկեարի որք մնացած օրիորդի
օգտին, կրթութեան և դաստիարակութեան համար,
յիշելով Փրանսիացի Ժիւլ-Սիմօնի խօսքը թէ.
«Կրթելով աղջկանը՝ դուք լուսաւորում էք ամ-
բողջ ընտանիք»: Եւ երկրորդ՝ հանգուցեալ Չար-
կեարի վերայ մի գերեզմանաքար եմ դրել՝ «Այս-
տեղ հանգչում է Շամախեցի Աբրահամ Մար-
տիրոսեան, «Չարկեար» կոչուած, բանաստեղծը»
խօսքերով՝ նորա յիշատակը յարգելու համար:
Այդպէս էլ պահանջում է և սուրբ գիրքը, ասե-
լով. «Մեռեալներին էլ պէտք է պատուել»:

ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ:

7 Մարտի 1890 թ.

Բազու:

ԶԱՐԿԵԱՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Հայ հասարակութեանը նուիրում եմ և մի զիրքը, որի լոյս տեսնելուն պատճառ տուեց իմ «ՍՈՒՍԱԿ ՀԱՅՍՏԱՆԻ» վերնազրոյվ Ազգային Լիակատար Երգարանի հրատարակութիւնը: Արդարեւ, այդ ձեռագիրը կարող էր մի օր անհետանալ, կորչել և, վերջապէս, փոշի դառնալ առանց հասարակութեան գիտութեան՝ եթէ բարի ճարտիկ չ'չիշեցնէին ինձ, այդ հեղինակութեան ձառին՝ հէնց իմ «Սոխակի» Առաջին հատորի հրատարակութեան սկզբից:

Ընթերցողը, կարգալով այս զիրքը, որին ես անուանել եմ «ԶԱՐԿԵԱՐԻ ՔՆԱՐԸ», գուցէ կ'հարցնի. ո՞վ է Զարկեարը: Այդ հարցին բաւականութիւն տալու համար պատասխանում եմ:— Զարկեարը (Սբրահամ Մարտիրոսեան Բարաչեանց) Շամախեցի է և ծնված 1824 թուին: Սա իւր «Նամակ» վերնազրոյվ բանաստեղծութեան մէջ այսպէս է ասում.

«Նամակ, ես Զարկեարն եմ, կեանքս ծախեցի,
Սնունս Աբրահամ, բուն Շամախեցի»:

Սորա հաչրը Մարտիրոս Բարաչեանն է, որ այն ժամանակ պարապելիս է լինում ոսկերչութեամբ (զարկեարութեամբ) և որը, ինչպէս պատճում են, բանաստեղծ է լինում: Սա, նաչելով իւր միայնակութեան, վերցնում է փոքրիկ Սբրահամին իւր խանութը, իբրև օգնական և փոքրաւոր, և սովորեցնում է իւր արհեստը: Պատճում են, որ սօքա—հաչր ու որդին—երեկոները, խանութից վերադարձած ժամանակ, ընթրիքից չետօյ, վերցնում էին զահիրէն (զափր, զաւալը) և տանկերէն երգեր ասում ինքնաստեղծութեամբ: Մարտիրոս Բարաչեանը այսպիսի

փորձերի մէջ տեսնելով Աբրահամի ընդունակութիւնը՝ տալիս է նորան Շամախու գաւառական դպրոցը (УѢЗДНОЕ УЧИЛИЩЕ) 1842 թուին: Աբրահամը սովորում է այստեղ առաջին և երկրորդ դասարանների մէջ երկու տարի միայն, և այնուհետև թողնում է դպրոցը, տնային հանդամանքների պատճառով:

Աբրահամի ուսանողական կեանքից այսպէս է պատմում նորա նախկին դասընկերներից պ. Սարգիս Վարշամեանցը. «Աբրահամը, իբրև աղքատ տան գաւակ, երբեմն դասադրքեր չէր ունենում և շատ անգամ էլ կարգին և շարունակ չէր հաճախում դպրոց: Բայց երբ դպրոց էր գալիս Ապրահամը, նա, իսկոյն, սորա, նորա դասադիրքը խնդրում կամ խլում էր և մի երկու անգամ կրկնելով նոր կամ անգեպ թողած դասերը, ամենից լաւ և զոհազուգիչ դաս պատասխանողն էր լինում: Նոյնպէս, երբ կրօնի վարժապետ Առաքել Բէշարայով, Այսամ-դարեանի Քրիստոնէականի վերայ, դաս էր տալիս լինում աշակերտներին անգիր անելու, դժբաղդաբար, Աբրահամը այդ դրքից չէ ունենում: Եւ երբ վարժապետը, իւր սովորութեան համաձայն, դասը փոքր աշակերտներից սկսելով՝ մեծովն է վերջացնում, այսպէս էլ Աբրահամը, իբրև մեծ և առաջին աշակերտը, խոր ուշադրութեամբ լսելով ամեն մի աշակերտի պատասխանին, և հերթը իւրեան հասնելով՝ զեղեցիկ կերպով կրկնում էր նոյն օրվայ դասը: Աբրահամի այդ մեծ սրամտութեան վերայ զարմացած էին թէ՛ ուսուցիչները և թէ՛ աշակերտները:»

Ահա ինչ է ասում Աբրահամը իւր մասին.

«Ո՛չ քերականութիւն գիտեմ, ո՛չ անսխալ գրութիւն, ի՞մ բանաստեղծութիւնս է միմիայն մտազս սրութիւն»:

Աբրահամը, դպրոցից դուրս գալուց յետոյ, մի հաստատ պարապմունք չէ ունենում: Նա, այդ ժամանակ, սկսում է երգեր և բանաստեղծութիւններ գրել Աբրահամ ստորագրութեամբ, որոնցից մի երկուսը հազիւ կարողացայ ձեռք բերել: Աբրահամը

փորձվելով բանաստեղծութեան մէջ, մեծ հեղինակութիւն և ծաշն է ունենում Շամախում, իբրև բանաստեղծ: Նորա անվախ, ազատ, սուր և կտրուկ ասածների և պատասխանների մասին ժողովուրդը պատվում է նորան, Ղուգուղ (կատաղի) մականունը տալով: Այժմ էլ Շամախեցիների մեծամասնութիւնը նորան «Ղուգուղ Աբրահամ» անունով է հանչում: Աբրահամի մասին այսպէս է գրում Շամախուց մեծ. պ. Սահակ Գուրգէնեանցը.— «Շամախում, 1847 թուից, Աբրահամը մեծ նշանակութիւն ունեցաւ և՛ տանիկ աղնուականների մէջ: Նորան կ'հրաւիրէին հարսանիքներ, ընթրիքներ և հագկերութիւններ. կ'հրաւիրէին և՛ տանիկ բանաստեղծներ, որոնք, տիմպլիպիտոյի առաջ նստած՝ երկար խօսակցութիւն կ'անէին և չաղթութիւնը միշտ Աբրահամի կողմը կ'լինէր: Սոցանում կար օրէնք. թէ որ բանաստեղծի մէկը սկսէր խօսելու թէ՛ «երեկոյ տեսել եմ զեղեցիկ նաղելի, ինքն բարի, հողին բարի, սիրով լի», միւսը պէտք է խօսքերի վեջաւորութիւնը նմանացնէր նախ սկսողի վերջաբառին և այնպէս շարունակէին խօսքերը: Բանաստեղծը չաղթվում էր, թէ որ չէր կարողանում որոնել մի այնպիսի վերջաբառ, որով կնքէր իւր երգը: 1848 թ., աւելացնում է պ. Գուրգէնեանցը, Միսկին-Բուրջի ասված բանաստեղծը գալիս է Շամախի. ես ալկանատես էի Աբրահամի և տանիկ բանաստեղծների խօսակցութեան, ուր Բուրջին բերանը անգամ չ'կարողացաւ բանալ: Սա կարապետ Սերեբրակովի հարսանիքումն էր»:

Աբրահամը, ինչպէս ասում են, տանիկ զրականութեան հետ ծանօթ էր և տանիկների մէջ զովվում էր իբրև բարձր բանաստեղծ, այդ պատճառով նա միշտ մեծ մեծ ընծաներ է ստացել նոցանից: Այդ մասին նա ասում է.

«Ես տանկերէն հաղ գրելուս՝ շատ ընծաներ եմ ստացել, Բոլոր Շամախին վկայ է, որ նեղութիւն չեմ հասկացել»:

Տաճիկը համակրել է հայ բանաստեղծին, ուրախագրել է նորան իւր ընծայով և կարեկցել նորա թշուառութեանը, իսկ հայր . . . Այս կէտերին, ահա, այսպէս է պատասխանում Աբրահամը.

«Հայրենեաց սէրն զգալով՝ այն օգտից ձեռ եմ լուացել,
Հայերից ինձ օգտող չկայ, նեղութեան մէջ եմ մնացել:»

Աբրահամը, 1855 թուին, գնում է Լանքարան և այնտեղ պարապում է ոսկերչութեամբ: Այստեղ Աբրահամը նորից բարեկամանում է պ. Մալիֆի (Յարութիւն Աղեքսանդրեանցի) հետ:

Աբրահամը Լանքարանում ամուսնանում է, որին խաչեղբայր է լինում Մալիֆը և սպա նորա մանուկներին կնքահայր, իւր Սերովբէ որդուն այդ պաշտօնը յանձնելով: 1864 թուի յունվարի 12-ին Աստուած Աբրահամին պարգևում է մի արու գալակ, որին կոչում են Ռաֆայէլ: Այդ առիթով նա մի երգ է գրում իւր նորածին մանուկի վերայ «Օրօրոցի երգ» վերնագրով և նորա մի տան մէջ այսպէս է ասում.

«Մալիֆի Սերովբէն բեղի կնքաւոր,
Պսակդ տեսնալին էլած ուխտաւոր,
Աստուած բեղ նորա հետ պահի բախտաւոր,
Դէհ, ննջիր, հոգեակս, ասում եմ լայ, լայ»:

Այս տեղ Աբրահամը մի առ ժամանակ ոսկերչութեամբ պարապելով տեսնում է, որ սորանով չի կարողանում իւր ընտանեկան պահանջներին բաւականութիւն տալ, թողնում է նորան և մնում վիզը ծուռ: Այս դառը ժամին Մալիֆը վերցնում է Աբրահամին և նորա ընտանիքը իւր հովանաւորութեան տակ և պահպանում է: Այդ ժամանակ Աբրահամը, Մալիֆի առաջարկութեամբ և յորդորանքով, երգեր է գրում Զարչեայ մականունով և, իբրև երախտագիտական անմոռանալի չիշատակ,

իւր երգերի մէջ չիշում է իւր բարերար Մալիֆին՝ զեղեցիկ զգացմունքներով: Ահա՛ նորանցից մի-երկուսը.

«Ես միշտ Մալիֆիս տանը
Լի եմ տեսել սեղանը.
Իրա հացի դուշմանը
Մէնակ չի մտել օթաղ»:

Մի ուրիշ տեղ.

«Պահպանում է Մալիֆի խրատն ինձ,
Եթէ ոչ վաղ պիտէր վերջանալս իմ»:

Զարմանալի իրողութիւն է, որ Մալիֆը իւր կոյր աչքերով տեսաւ Աբրահամին, վերջրեց նորան իւր խնամատարութեան տակ և իւր համեստ աշխատանքով պահպանեց նորա ընտանիքը, իսկ մեր աչքբաց հարուստները, ծայն և նշանակութիւն ունեցող հայերը չ'տեսան նորան և չ'ոչնեցին նորա խաչած ձեռքերին: Մի՞թէ կարեկցութիւնը, բնկերասիրութիւնը, քաջալերութիւնը, բարօջական և նիւթական օժանդակութիւնը Մալիֆներին է տուած, իսկ աչքբաց հարուստներին ոչ: Մի՞թէ մարդկութեան աղնիւ յատկանիշները միայն Մալիֆների մէջ պէտք է փայլի, իսկ նոզանից դուրս երբէք . . . Այդ մասին շատ յարմար է ասում հոգեակ Աբրահամը.

«Զարկեար, Մալիֆին տեսնումես, որ կարօտ է աչաց լուսոյ,
Վարուք, բարուք, բարի անուամբ շատ տեսանողաց աղէն է»:

Աբրահամի հանճարը, ընդունակութիւնը, զիտութիւնը խմելու ժամանակ է երևացել: Նորա զուլթը երբ տաքացած է եղել զինիով կամ օղիով՝ նա բանաստեղծ է եղել, բ ա ո թ ս բուն նշանակութեամբ, իսկ երբ ոչ ոչինչ, դրօ: Ես այդ միջոցին ներկայ չեմ եղել նորան և, ուրեմն, երաշխաւորել, նոյն-

պէս, չեմ կարող, ուստի, աւելի լաւ է, իրան, Աբրահամին, խօսեցնենք:

«Զարկեար, այցոց խրատար, բաս ինքդ էլ փոքր խմե՞ս, Եթէ մին կուժ պատահի՞ չես դադարիլ, որ չճամես, Խոունկն նիսես ես ծխում, բայց զինետան փողն տամես, Եթէ խապաւ չի խմես, Մայիֆի հետ բարեկամ ես, Խմելուս անկուշտում ես, չխմելուս շատ անհամ ես:»

Աբրահամը 1868 թուին դալիս է Բագու և այս տեղ, հիւանդանալով՝ մեռնում է յետին աղքատութեան մէջ՝ կարծես գուշակելով իւր կեանքի վերջին տխուր ընթացքն. «Նայ ազգի մէջ բանաստեղծի վերջն անփոխան կուլինի:» Արդեօք այս չափերաների մէջ դրած բառերը մեր հարուստները կարդալով ի՞նչ կասեն:— Կ'չիշե՞ն, արդեօք, որ Աբրահամը քաղցած մեռաւ. մերկ ու տկոյր մեռաւ, անօթի ու ծարաւ մեռաւ: Ո՞վ այցելեց նորան այդ ճգնաժամին. ո՞վ մխիթարեց նորա մաշուած և տեղահան էլած սիրտը. ո՞վ սրբեց նորա ճակատի մահվան դառը քրտինքը. կարծեմ շատ քիչերը և գուցէ ոչ ոք

Ափսոս, որ մեր զաւակներից շատերը այդպէս թշուառութեամբ թափառում են և թշուառութեամբ մտնում գերեզման Կ'գա՞յ, արդեօք, մի օր, մի փառաւոր օր, մի լուսազեղ օր, որ նայր ակնածէ իւր շրջապատող աշխարհի վերայ, ուշադրութիւն դարձնէ նորա հողի վերայ թափառող անխրնամ և անտէր մանուկների կրթութեան և լուսաւորութեան վերայ և այնպէս տայ նոցա բարուական և մտաւոր ոյժ: Եթէ այդ ցանկութիւնը կատարելապէս աշողուեցաւ նային, այն ժամանակ, շատ բնական է, որ մենք կուենենանք մեր կրթեալ քաղաքագիւնները, մեր ինտելիգէնցիան և, վերջապէս, մեր նայ Եկեկապիրները, Գեթթէները, Նիւգօները, և այլն:

Աբրահամի մեռնելուց յետոյ մնում են նորա կիներ և երկու

աղջիկը, դարձեալ, Մայիֆի պաշտպանութեան տակ, և յետոյ կառավարում է նոցա Աբրահամի աներ որդին:

Աբրահամի գրուածներից ոմանք հրատարակված են իմ «Սոխակ նայաստանի» Առաջին, Երկրորդ և Զորրորդ հատորներում: Եւ որպէս զի հանգուցելու աշխատութիւնը աւելի նշանակութիւն ունենար, յարմար գտայ առանձին զրքով հրատարակել թէ՛ տպուածները և թէ՛ անտիպ մնացածները, մանաւանդ, որ աչքի առաջ ունէի մի բարեգործական նպատակ:

Նանգուցեալ Աբրահամի, կամ, իւր մականունով ասած, Զարկեարի բանաստեղծութիւնները, որ ես այստեղ տպագրեցի, նոցա մեծ մասը ստացել եմ պ. Աննիբալ Նաչարեանից, իսկ մասնաւորապէս՝ պ.պ. Թ'աղէոս Եզանեանից, Աղէքսանդր Լալայեանից, Գրիգոր Այվաղեանից, Աղէքսանդր Նաչարեանից և Միքայէլ Բասայեանից, որոնց ամենին պատիւ ունիմ յայտնել իմ խորին և անկեղծ շնորհակալութիւնները:

ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ:



ՄԱՅԻՖԻ ԿԵԱՆՔԻՑ

Ընթերցողին ծանօթագնելով հանգուցեալ Զարկեարի հետ, աւելորդ չեմ համարում քանի մի խօսք ասելու և Մայիֆի մասին:

Պարսկաստանի, Թէհրանու զաւառի, Ղարաղան գիւղում, 1825 թ., Օհան (Յովհաննէս) Աղեքսանդրեանցին Աստուած պարգևում է մի արու զաւակ, որին մկրտում և կոչում են «Յարութիւն»: Սորա հօրեղբայրը վերցնում է փոքրիկ Յարութիւնին և ամբողջ ընտանիքը և զաղթում Լանքարան, 1838 թ., և այնտեղից էլ—Շամախի: Այստեղ, 1842 թ., փոքրիկ Յարութիւնը մի քիչ կարգալ-զրեկ սովորելով, այլ ևս չէ՛ կարողանում շարունակել նորան, ընտանեկան նեղ հանգամանքների պատճառով, և ստիպուած է լինում, նոյն ժամանակուայ նորաչէն Սուրբ Աստուածածնի եկեղեցու վերայ, մշակութեամբ պարապել: Ծանր աշխատանքի ներգործութիւնից Յարութիւնը կորցնում է իւր աչքերի լոյսը և կրում «Մայիֆ» անունը, որ պարսկերէն նշանակում է չ * յ ք:

Մայիֆը, զգալով կեանքի, ապրուստի դժուարութիւն, ստիպուած է լինում սաղ ածել և աշուղութիւն անել, միայն առանց թափառելու: Որպէս զի աւելի կատարելագործուի իւր արհեստին մէջ, նա գիմում է Զարկեարին, որ սորա մօտ աշակերտ ընդունվի և սովորի սորա բանաստեղծութիւններից: Բայց վերջինս հրաժարվում է մի այդպիսի առաջարկութիւնից, ասելով. «Իմ բնակութեանս տեղը ես-ինքս էլ չեմ իմանում. մէկ օր այստեղ եմ, միւս օրը՝ այլ քաղաքում»: Մայիֆը, մի առ ժամանակ, բարեկամանալով Զարկեարի հետ, 1849 թուին թողնում է Շամախին և վերադառնում Լանքարան, պարապելով այնտեղ, սկսեալ 1850—1886 թ., վանառականութեամբ: Այն, վանառականութեամբ, չ'զարմանաք: Նա այնպիսի վանառական է լինում, որ արծաթադրամները և թղթադրամները,

շօշափելով, շատ ժիրութեամբ ճանաչում է, թէ նորա ի՛նչ արժէք ունեցող և որպիսի զրամներ են: Նա—մինչև անգամ— շօշափելով, ճանաչում է, թէ որ նամակը ումնից է ստացել: Վաճառականութեան մէջ Մայիֆը աշողութիւն դանելով, նա ունէր բաց արած քանի մի խանութներ թէ՛ Լանքարանում և թէ՛ քաղաքից դուրս: Նա ունէր, նոյնպէս, քանի մի տներ թէ՛ իւր բնակութեան և թէ՛ վարձով տալու համար: Նա, ժամանակի վերայ ևս տեղեկութիւն ունենալու համար, ունէր ոսկեայ ժամացոյց, որի զարկից իմանում էր թէ որ ժամն է: Մայիֆը, նայելով իւր աշողութեանը, միշտ պատրաստ է եղել ամեն մի ընկած, ամեն մի խեղճ, ամեն մի թշուառ մարդու կարեկցել, օգնել, պահել և պահպանել: Ձեղ օրինակ հէնց Ջարկեարը, որի ամբողջ բնասանիքը պահել և խնամել է տարիների ընթացքում: Բայց ի՛նչ անես, որ այս վերջին տարիներս Մայիֆի բաղդը-ինչպէս ասում են—շուռ է դալիս և նա մնում է խեղճութեան և թշուառութեան մէջ . . . Չանաղան հանգամանքների պատճառով՝ նորա վաճառականական գործունէութիւնը դադարում է, նորա խանութները փակվում են և տները ծախվում: Նա մնում է դարգակ, այնպէս որ՝ իւր համար մի—այսպէս ասած—հաւաքուն անգամ չէ մնում, ուր իւր ընտանիքը կարողանայ պատասպարել . . . Նա, 1887 թ., անմխիթար սրտով ճանապարհորդում է քանի մի քաղաքներ, վաճառականութեան անուկով, բայց ՚ի դուր . . . Մայիֆը, կենաց ծովի մէջ պեկոծվելով, իւր սրտի և հոգու դառնութեանը և մրմունջին թեթևութիւն տալու համար, բոս ուսաց առածին. « Утопающий хватается за соломинку », երբեմն բողբոջում է իւր որդուց.

Լսի՛ր, անդրանիկս, իմ աչքի լոյսս*),
 Հար բան կարելի է, ամենն չէ՛ անելի:
 Կտրեցիր իմ սրտից ամենայն յոյսս,
 Այդպիսի գաւերին ո՞նց է տանելի:

(*) Մայիֆը ունի բաւականին դուստնական գրուածք, որոնցից մինը, որ

էլ երբ կ'ուրախացնես կուրացած հալրիդ,
 Կողակցիդ, երեխերիդ, խուլացած մայրիդ,
 Նայիր ծառաներիդ կամ քո ընկերիդ,
 Ձօկիր լաւ ու վատն, որն է անելի և այլն:

Երբեմն—իւր կաջքի կորուստից.
 Ծուրճուր օյսուն սանա, թարի,
 Աչաք վերդուն թօփի մանա,
 Օլան չօյանում դաղուղաուն,
 Ուստան վերդուն զօփի մանա:
 Հանի՞ մանմ դաշ էվլարում,
 Աղ ու եաշիլ բաշ էվլարում,
 Աօյլի դեօղում եաշ էվլարում,
 Մալդուն դափի դափի մանա և այլն:

Երբեմն—իւր աչքի լուսից.
 Ա՛խ, աչքի լոյս, աչքի լոյս,
 Քեզ ի՛նչ արամ, փախար դուս,
 Յետ դառնալուդ չունիմ յոյս,
 Ապառաժ քար ես անբոյժ,
 Բանս քեզ զայ՝ կանեմ սուս,
 Ա՛խ, աչքի լոյս, աչքի լոյս և այլն:

Երբեմն—իւր կեանքից.
 Ա՛ննի մօվլամ, մալուլ մուշկուլ զալմիշամ,
 Ամանն ալլահ, աման, մանա բիր հիմդաղ,
 Հարեանա բախրրամ, հեջ քասրմ եօխար,
 Սանուն քարամաթուն համիդան չօխար,

վերաբերում է Ջարկեարին, տպագրեցի գրքիս վերջում, լաւելուածքի մէջ: Նա, Մայիֆը, այդ բառի ընդարձակ նշանակումեամբ, որովհետև ոչինչ չէ տեսնում, ուստի իւր զգացմունքները, այն է—իւր երգերը, բանաստեղծութիւնները, գրելու համար, ուրիշներին է թելադրում: Նա, 1880 թ., Լանքարանից Բագու գալու ժամանակ, իւր ոսկեայ մատանին շոգենաւում կորցնում է և այդ առիթով նա «Բնդ» վերնագրով մի բանաստեղծութիւն ասաց և այնպիսի ժիրումեամբ թելադրեց, որ ասես թէ գրքից անգիր արած լինէր:

Գր. բաճ. Գրիգորեանց:

Այ, այսօրհան զուշմիշամ, բախ, դեօր, նա վախտոր,
 Աման, ալլահ, աման, մանա բիր հիմդադ:
 Գեջա, զիւնդիւզ իշրդ զիւշմիր զեօզուճա,
 Արխադ, ուշադ դահի բախմիր ուզուճա,
 Գեօր, նա էլամիշամ օզիմ օզիմա,
 Աման, ալլահ, աման, մանա բիր հիմդադ:
 Ման փիրա եալվարդուճ, փիր դա փուլ իստիր,
 Բուլբուլայ եազվարդուճ, բուլբուլ զիւլ իստիր,
 Վարլուլայ եալվարդուճ, վարլուլ դուլ իստիր,
 Աման, ալլահ, աման, մանա բիր հիմդադ:
 Մալիֆ-Յարութիւնն-ամ, բափլ միր ախուճ,
 Սաննան սափա, ալլահ, ման քիմաճ բախուճ,
 Զուլուճ Ֆալաք՝ այլի վարինան եօխուճ,
 Աման, ալլահ, աման, մանա բիր հիմդադ:

Ճանաչելով Մալիֆին, իբրև մի աշխատասէր, մի գործունեաց, բայց չբաւորութեան մէջ ընկած մի մարդու, ներկայ «Զարկեարի Բնարը» խորազրով աշխատութիւնը հրատարակուճ եմ նորա օգտին, չուսալով, որ բարի մարդիկ ևս կաջակցեն և օգնութեան ձեռք կ'կարկառեն զէպի մի յարգելի և պատկառելի անձնաւորութիւն, որպիսին է Մալիֆ-Յարութիւն Յովհաննիսեան Աղեքսանդրեանցը:

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ:

1.

Արդա՛ր դատաւոր, զո՛ւ հասիր, ինձ անապաստան մի թողիր,
 Տմարդ անձանց վիզրս թերեկ՝ մինչի օրն մահուան մի թողիր,
 Անիրաւ դատաւորների ձեռին դատաստան մի թողիր,
 Զարաժողով զաւանանաց կամքն միաբան մի թողիր,
 Սուրբ սիրով վառեալ սրանքն կարօտ ու բաժան մի թողիր:

Մինչի էրբ պիտի մեր ծառերի պտուղն այլքն ճաշակեն,
 Իրանք մտնեն ներս համարձակ, մենք զնալուս դուռն փակեն,
 Մի՛թէ մեր աղբին չի տուած «Նանու» անուանեալ բաժակէն,
 Հայրն ինչ պիտի սպասի մեզ պէս կամակոր զաւակէն,
 Սուրվա՛թ է, այլոց կարագ տուր, բո տան համար թան մի թողիր:

Կասկածանօք հաչոյեցի, տո՛ւր իմ մեղացս թողութիւն,
 Լուսաւորեա՛ սիրտքն իշխանաց, նա է կրկին մարդեղութիւն,
 Մատթէոս սուրբ հայրապետի*) այժմեան կամքին կարողութիւն,
 Որ երևի Ազգի միջին օր բստ օրէ սէր, ուղղութիւն,
 Բեզ է արել սրտի յոյսն, զու նորան փոշման մի թողիր:

2.

Ա ս տ ու ա ծ ս է ը է և մ ի շ տ ա է ը է:

Արդեօք սէրն ո՞նց թարգմանեմ, որ ամենայն մարդ հասկանայ,
 Սիրոյ համէն բաղգրանալով՝ իւր ընկերին սիրել շանայ,
 Զէ՞ թէ հայր ու Որդի, հօգին սուրբ սիրով պիտի միանայ,
 Միասէր Ագամ ստեղծան՝ ասան սա մեզ սիրական ա,

*) Պարզ երեւում է, որ այս երգը հանդուցեալ Զարկեարը գրել է երջանկայիշատակ Մատթէոս Կաթողիկոսի Հայրապետութեան ժամանակ: Այժմեան Հայկական Վեհափառ Կաթողիկոսն է Մ ա կ ա Ր Ա ո ա ջ ի ն:

Սիրելի դրախտ ստեղծան, որ սէրն սիրով լիանայ,
Սուրբ սիրոյն ընդդէմ կանգնելով՝ հրեշտակը դառան սատանայ:

Սէրն մեզ միշտ հարկաւոր է եթէ մենք նորան սուրբ պահենք,
Այլոց սիրելին տեսնելու՝ չար ցանկութեամբ մենք չպահենք,
Նողկոր սէրից զողանանք՝ մարմնաւորին անչափ շահենք,
Սոցա ամենն մոռացանք՝ մի՞թէ մահ չունենք, անմահ ենք,
Լուսատու չենք, լուսառու ենք, մին ժամանակաւոր շահ ենք,
Չկայ այն յոյսն մեղանում, որ սուրբ սիրոյ դուռն բանայ:

Նախ սիրական Աստուածն ինքն է որ միշտ պիտի նորան սիրենք,
Գոնեայ փոքր ինչ արժանանանք, որ նորա աշխարհին տերենք,
Մեր եղբօր սխալմունքներն սիրով պիտի մենք միշտ ներենք,
Ատոզներխ սէր ցոյց տալով՝ դէպի սէրութիւնն բերենք,
Անսէրութեան պատճառաւն՝ մէկ զմէկուց զիշակեր ենք,
Չկայ մէջներխ այնպէսն, որ այլոց վերան դարձանայ:

Սէր կայ սուրբ է, սէր կայ անսուրբ՝ սորանք երկուսն էլ մէկ սէր է,
Սուրբ սէրն տեսնում ենք այն մարդիցն, որ շատ ծեր է,
Փոխարկվում են շահիլներն՝ պատճառ, շահիլն անհամբեր է,
Ում որ բնական սէր չունի՝ արդեօք նա էլ ինչի՞ տէր է,
Անսէր մարդոյ ապրելիցն՝ մեռնելն աշխարհին խեր է,
Ում սէր չունի, սեռ էլ չունի. նա ո՛չ մարդ է, ո՛չ հաշվան ա:

Զա՛րկեաք, սիրոյ քանդուածն ես, էլի դու սէրն գովում ես,
Սիրահար ես, ի՞նչ օրի ես, անսէր մարդկանց նզովում ես,
Մայի՞քն քեզ խրատելուց՝ սուտ մահանով խռովում ես,
Սատանին էնքան ես սիրում, կասես թէ մօտիկ գովում ես,
Կուշտ էլ լինես՝ հոտ ես քաշում, աննահախ հողիդ պովում ես,
Թո՛ղ ամօթդ յանդիմանի՛ ում որ խղճմտանքն տանայ:

3.

Ով յոյս կապաւ աշխարհին, նա չի լրացրաւ տարին.

Անիրաւ աշխարհն ինձի ատելով՝
Վերջուծն հասցրաւ դառն վիճակին,
Անշէջ կրակին.

Տեսամ միտքն նա է, որ նամարդ մարդկանց
Ճամփին մատաղ անի, ինչպէս Սահակին,
Մօտ եմ դանակին:

Աշխարհն բաղդի հետ խօսքն մին արաւ,
Խելօքներին թողին քաղցած և ծարաւ,
Չասի թէ ում ատաւ՝ նա իսպառ կորաւ,
Վարդն կու հնձի իւր ժամանակին
Եւ կունենայ զին:

Ով բախտին հաւատի նա խիստ անբախտ է,
Պատճառ, բախտն ինքնին շատ ապերախտ է,
Նորա զարդն մին անվայել դրախտ է,
Մի օր Ադամի պէս մերկ կանի մարդ, կին,
Թղենուոյ տակին:

Եթէ ուզում ես աշխարհին լսես,
Ում անից մին առնես՝ նորան ես տուր կէս,
Եթէ որ կարանաս հէնց զիւր էլ ուտես՝
Էն վախտ դու արժան ես նորա սենեակին,
Ոսկի բաժակին:

Խելօք մարդն բախտի աչքին է կրող,
Պատճառ, որ տուածն առնել չի կարող,
Ինչպէս պատահում է մին զեախն փորող,
Յանկարծ գտանում է մին զանձ անաղին,
Թաղում է կրկին:

Բախտն առաջ մարդկանց խելքն չափում է,
Ում որ չիմար տեսաւ՝ վերէն թափում է,
Խելօքին հեծնելու՝ քաղով խփում է,
Նա լաւ է ճանանչում իւր աւանակին,
Անվարձ ծշակին:

Ես ի՞նչ բանով պիտի աշխարհից վախեմ,
Նա ինձ նեղելով՝ ես վարքս փոխեմ,

Եթէ անհար մնամ, շապիկս ծախեմ՝
Պիտի՛ մանգամ չիմար մարդկանց շախկին,
Բոցեմ դմակին:

Զա՛րչեար, բախտի ձեռից կանչեցիր («աման»),
Էն ա, որ բախտն քեզ թողաւ անթուման,
Արդե՞օք քո բնարած Մայե՞ծեր նման
Էլ շան ասող կայ լեզուիդ նուազին,
Փորձած առակին:

4.

Մ ի փ ա խ չ ի լ ա շ խ ա Ր Կ ի ց ն, մ ե Ղ ք չ ի ծ ն ի լ
ք ա Ր ի ց ն.

Աղամ պապիս թոռք ես եմ, ոչ թէ սարի ճգնաւորն,
Նման չլինի, «պիե» կասեն, ով որ իրա հօրն ու մօրն:

Պապս, ի սէրն Եւայի, զանկալի դրախտն ծախաւ,
Բռնաւ խանութի կռնիցը՝ կանանչ թուղի տակն փախաւ,
Թէպէտ նա, յեա մեղանչելոյն, ախ քաշաւ ու դիւնչն մխաւ,
Զարմանք չէ որ՝ կամ գործում է կամ փոշմանում ջանգաւորն:

Սկիզբ մեղքն աշխարհ անկաւ, կասեն թէ, նորանց ջուխտիցն,
Էլի Աղամ չէր դանդատում իրա անվայել բախտիցն,
Քաշան, վզակոթին տալով, մերկ դուրս արին դրախտիցն,
Մարդ ու կին խելք խելքի տուին, յօրինեցին հագն ու շորն:

Մէկ մարդոյ պապն, որ լինի մէկ Եւայի ձեռին գերի,
Այժմ Եւայք բազմացել են, նորանց թոռն ո՞նց համբերի.
Պապի ներող ողորմածն, պիտի որ թոռանցն էլ ների,
Ուզում է անմեղ երեւալ քարի մէջի կեղծաւորն:

Ինչո՞ւ ես փախչում աշխարհից, ճգնութիւնը անում մահանայ,
Թէ լաւ մարդ ես, անո՞ համբերի, ասեմ խղճմտանքդ տանայ.
Կորեկի հագն չես սիրում, ուզում ես ուտես մանանայ,
Աշխարհումն ասել չես կարող մարմնաւոր երանութիւնն:

Ի մէջ կոպտախօսութեանս բաներ շատ կան միտքըն բարակ,
Ձեն ասիլ թէ պաս եմ պահում, որտեղ չլինի միս կամ կարագ,
Անհամբեր ես աշխարհի մէջ, վախում ես իլնես խաչատառակ,
Բնութիւնդ մէկ ցած ցաւ է, քեզ ձգել ա սարն ու ձորն:

Դու վարդապետ ես, ես ուամիկ, դու սարումն ես, ես աշխարհում,
Ղալբ բնկեր ես, որ փախել ես, քեզ տեղ էլ ինձ են չարչարում,
Եթէ սրբակազ էլ լինես, ես քեզի մարդ չեմ համարում,
Ձեռս բնկիր, կուշա ձեծեմ քեզի Յուդայ ուրբաթ օրն:

Զա՛րչեար, քո անդադար լեզուդ մարմնոյդ դաւաճան իմացիր,
Ծածկեալն յայտնի չեն խօսիլ, բանի մէջից բան իմացիր,
Մայե՞ծն մի տուր նեղութիւն, մարդոյ աստիճան իմացիր,
Իւր խոստմանն հաստատ պիտի ամեն բանի՝ ուխտաւորն:

5.

Խ օ ս ա կ ց ու թ իւ Ն մ ար դ ո յ ք ն դ ա ղ աւ Ն ւ ո յ .

Աղաւնի, ի՞նչ լաւ թռչուն ես, մին արու ես, մին էզ ունես,
Նա քեզ է սիրում, դու նորան, էլ մին ուրիշ հոգս չունես:

Դու սրբոյ հողւոյն նման ես, քննողի համար մեծ բան ես,
Եթէ բնկերդ մեռանի՞ դու բոլոր տարի սուգ կանես:

Ուզում եմ քեզ ասեմ ցաւս, ինձ դաղել ա իմ էզ հաւս,
Ես մէկին սիրահարված եմ՝ օրն մին է, հինգ է դաւս:

Առաջուց ինքն սիրել ա, ձեռիս իլածն կերել ա,
Չիմիկ, որ ես դարտակվել եմ, սէրը սրտիցն քերել ա:

Առաջ կասէր՝ «իմս դու ես, առանց քեզ կ'լինեմ բու ես,
Ես քեզանով եմ կենդանի, դու ինձ համար կենսատու ես:»

Առանց քեզ օրս չլինի, դուստրն հօրս չլինի,
Քեզ ունենամ, թող մուրանամ, հագնելոյ շորս չլինի:»

Այս տեսակի ինձ խաբեց, ինչ ունէի առաւ լափեց,
Աղքատանալս հասկացաւ, դուրդ դուրանին զլիս թափեց:

Մին օր ասաւ՝ «ի՞նչ կեղտոտ ես, անբան ու անձեռն ու ոտ ես, Վախում եմ փոխվեմ քեզանից, ասում են, դու փխ քոտոտ ես:

Իո՞ւ ծեր ես, ես մատղաշ շահիլ, ինչո՞վ պիտեմ սիրտս շահիլ, Տեսնում եմ բանդ պակաս է, դու չես կարալ ինձի պահիլ»:

Նայում էր երեսից ծուռն, ասելով՝ «չի դաս այս դուռն, Եթէ ոչ՝ կանեմ խայտառակ, զրաղ կու դնեմ արուռն»:

Ասամ, «սիրական, երանգ է, դուզէ սա էլ մին շոկ նանգ է, Սիրահարիդ ինչ ես ասում, նշմարի՞տ է, թէ տնանգ է:

Անցեալ տարուծն սէրագայ, մի՞թէ այդպէս շուտ ծերագայ, Ծոցուծմդ պահածն ես եմ, կեղտոտներին ընկերացանց»:

Զուրկ պահեցի իմ խիղանն, լքցրի նորանց զազանն, Վերջն տուեց ինձ դուրս քցաւ, ինչպէս տանից չար զազանն:

Իմ առածներս հազնում է, մին վիզը հաստի պագնում է, Աչքի թշնամին եմ դառել, ինձ տեսնելու՝ թաղնում է:

Աղաւնին ասաւ ո՞վ չիմար, տալար ես, ոչ թէ սիրահար, Նա մին այնպէս անտակ ծով է, նաւեր է բաթմիշել հաղար:

Մի՞թէ լիրբն քեզ սիրող է, նորա կարօտանքն փող է, Ածելին սրած ծոցուծն՝ օրն մին զլուխ սափրող է:

Այն օր Մայիճնց թաղուն, զնացել էր մտել փաքուն, Մարմնոյ բաժինն կերել ես, հիմիկ ձեռ ես ձգել հոգուն:

Զարկեար, տեսել ես քիչ ու շատ, խրատվել ես դու մին կիսատ, Եթէ հաւատամ, քարանամ. սեխն սապոն, խեխն խրատ:

6.

Յ ա զ ա դ ս ա շ խ ա ր հ ի .

Աշխարհ, բո սիրած մարդիքն դիփ շրջումեն կարմիր օրում, Աչքիդդ ընկած մարդիքն գիր ու գան են սարում, ծորում:

Իովլաթը տուիր էշերին, հազուսար տուիր դէշերին, Ծունը են դնում փէշերին, էշը էշին պարտք է քորում:

Աննամուրք բո որդին է, խօսքդ նորա հետ մին է, Կայքն չիմարի ինչի՞ն է, քեզ համար է պահում հորում:

Գիտեմ, դու աշխարհ չես, փող ես, ժամանակաւոր խաբող ես, Եթէ ձեռնարաց տուող ես, ինձի է՞ր չես պարտաւորում:

Աչքդ մենակ ես եմ հանել, տեղն կարմիր Փիլֆիլ ցանել, Կամում ես շուտով սպանել, խողի պէս զեսնինն ես փորում:

Զարկեարն Մայիճին սիրաւ, այսքան նեղութեան համբերաւ, Զուռնեայուս չոր հաց կերաւ, ման եկաւ հասարակ շորում:

7.

Յ ա ն պ ա տ ր ա ս տ ի ա ս ա ծ բ ա ն .

Աբրահամն եմ, լաւ իմացէք, հեշտ կուլ-տալի պատառ չեմ, Աբրահամն եմ, լաւ իմացէք, շողորթ կամ կեղծաւոր չեմ, Իշխաններից չեմ փախենալ, ամենքին էլ զորթը կասեմ, Ում որ կամենում էք, բերէք, նորա կեանքի վատն ասեմ:

8.

Խարբեաց ես դու, ո՞վ անցաւոր աշխարհ, Ո՞վ փայելաւ քեզանում ուրախութիւն երկար. Մի՞թեմ չէլաւ մէկ մարդ բո բնութեան չարմար, Մեղաւորաց յոյսն ես, քեզ չի սիրիլ արդար, Մէկին կուտաս անչափ, մէկին կանես անճար:

Քեզ ո՞վ ասաւ «աշխարհ», պէտք է ասէր «ժանգ փող», Ով որ փող է պաշտում, քեզանում նա է յաղթող. Թէ իյնի մէկ հարուստ լիրբ, աւաղակ կամ զող, Զի թողնիլ աշկարվի, փողն է նրան սրբող, Վա՛յ բո օրին, աղքատ, ամեն բանդ դժուար:

Իո՞ւ չես թողնում մեզ, որ քննենք օրն մահուան, Գիտես թէ չենք մեռնիլ, միշտ կու քշենք դովրան, Ծատն կայ, որ չիլնում մին կտաւի արժան,

Մենք տեսնելով նրանց, չենք քննում մէկ բան,
Ո՛վ անվաչել աշխարհք, դու ես սատանեն չար:

Թէ երկու շան տեսնես մէկ մէկու հետ ընկեր,
Ո՛չ մինուձն չի կայ սրտէ ի սիրտ յոյս, սէր,
Որ հաւատով կանչեն. «Ո՛վ կենարար սուրբ Տէր»,
Ճշմարտութեամբ վարվող չկայ ո՛չ ջահիլ, ո՛չ ծեր,
Ի հարկէ, չար սիրտն չի տալ բարի մէկ բար:

Ո՛վ Աբրահամ պանդուխտ*), տես աշխարհքի վարքըն,
Հոգուդ մէկ շահ չունի, մի ցանկանալ փառքըն,
Ուժ որ ունի պատրաստ ոսկեղէնի շարքըն՝
Ի՞նչ պիտոյ է պատուի կարգաւորաց կարգըն,
Աճօթ չի կայ երբէք, մեղքն իլել ա աշկար:

9.

Ա ս ա գ ե ա լ ՚ի վ եր ա չ ա դ ա հ մ ա ր դ ո յ :

Անգեալ օրն ինձի տարան ազահի տունն զոնադ,
Օրն ուտիս, կիւրակի, կերակուրն էր սպանադ:

Մինչի չայի եփ զայն՝ նա փոշմանաւ չայ տալն,
Սուղ փոխարկաւ ցնծայն, նստաւ բէլքէֆ, անդամադ:

Որդույ վերէն բարկացաւ, կովելով սեղան բջաւ,
Շատ խժողից բան բացաւ, վերջուձն շինաւ դաբադ:

Դանակներն սուր բերաւ, տե՛ս ի՞նչ կերակուր բերաւ,
Խամ բողբաշի ջուր բերաւ, բայց դաւաթն զառվարադ:

Իրան քարոզ կարգալն, փիս կնոջ մթմթրթալն
Համբրում էր դբալն, սրտի մէջ պտում՝ «աւանդ»:

Բերաւ մին աման փլաւ, անունը ոսպով չլաւ,
էն էլ ձեռներէս խաւ, լափաւ ու քաշուաւ զրադ:

*) Պարզ երևում է, որ հանգուցեալը այս ոտանաւորը գրել է իւր հայրենիքից դուրս, օտար աստղերի տակ,—պանդիխտութեան մէջ:

Գր. քան, Գրիգորեանց.

Քաղցած մնաց իմ փորը, իղուր անցաւ այն օրը,
Ընկել եմ շան հետ հորը, մնացել եմ կաղ ՚ի կաղ:

Կնոջ հետն փափրսաւ, «հայր — մէր» ըսկսաւ,
Երբ զոնաղն այս տեսաւ, ձեռն քաշաւ անսուադ:

Իւր հագն ինքն կերաւ, մեր վրդին միւննաթ դրաւ,
Ի՞մ սիրտս չի համբերաւ, ասամ—«չիմար զուռուձսադ»:

«Բնութիւնդ ճանաչիր, յետոյ զոնաղը կանչիր
Արարմունքէդ ամանչիր, իղուր է գլխիդ փափադ»:

Ինչ մարդ ինքն անհամ է, նորա հագն հարամ է,
Սատանին բարեկամ է, սիրտը մեռած, ինքն սաղ:

Ով ինձանից նեղանայ, սառը ջրով լողանայ,
Էշն ինչ բան չաղանայ, նորանից չի լիճիլ ծառադ:

Ես միշտ Մայիֆլու տանը լի եմ տեսել սեղանը,
Իրա հացի զուշմտեր մէհտկ չի մտել օթադ:

Զարկեալ, ձեռդ առատ է, ափսո՛ս, քիսէդ կիսատ է,
Ազահից քեղ խրատ է, փողով չանես ձեռնախադ:

10.

Աշխարհին փրկիչն ազատաւ, որ դերի էր սատանային,
Կովկասն փրկիչ համարի արքայօրդի փոխարքային,
Կարծեմ այս բանն յաչտնի է Տամկին, Ռուսին և Հային,
Դատաւորաց արարմանցն բոլոր աշխարհ կը վկային,
Կաշառն ՚ի սեղի օրինաց թաղաւորում էր արխային:

Աշխարհն, վասն մեր մեղաց, առիւծի յանձնաւ մեր հօտն,
Ով անիրաւ մարդ որսող էր՝ համարձակ զնում էր մօտն,
Արդարքն անհաց մնացին, կտրաւ ամենեցուն ոտն,
Բագուայ զաւառից էր զայիս Սողոմ Պոմորի բուն հոտն,
Մարդն կնոջն էր թաղցնում, հայրն նորահաւ տղային:

Ոչ ճարդկանցից ամաչում էր, ոչ Աստուածանից էր վախում,
Գաւառներն զերիի պէս՝ դաշլերին տորդով էր ծախում.
Քանի ճշմարիտ զանգատն՝ մին չար ցանկութեան էր փոխում,
Ռամիկներն ազնիւ իլան, հարկատու չմնաց Շամախում,
Կօշիկ կարողն ճարդացաւ, չի ճանանչաւ հայր ու դային:

Ոմանց աչքն արտասուքով, ոմանց վէրքն անդեղ տեսանք,
Յետինն չար, քան դառաշինն, բոլորն արիւնհանդ տեսանք,
Առանց սուր՝ երկրաշինչ էլանք, առանց ջուր՝ ջրհեղեղ տեսանք,
Այս արարմանց մտիկ տալով՝ ողորմի տուինք Յուդային:

Ահ ու նալէն երկինք հասաւ, համբերն հատաւ օրհասի,
Հասցրուց մեր սուրբ Կաշտերին դառր վիճակն Կովկասի,
Ափսոսաւ փոքրիկ Կովկասին, որ անկեալ ՚ի մէջ վնասի,
Անբաժանելի եղբօրն ընտրաւ փոխարքայ Տփիսիսի,
Միխայէլ Նիկօլայեվիչն տուաւ մեզ փրկիչ աղագային:

Երբ այս լուրն հաստատ եղև՝ հնչեաւ զաբրիէլեան փողն,
Մեղաւորաց զոյնն փախաւ, բռնաւ նորանց մահուան դողն,
Գաւառներն աւետիս զնաց՝ գալիս է արդար դատողն,
Ոմանք թաղչիլ էին կամուձ՝ օրինակ մահապարտ զողն,
Զի անաչառ գատաւորի սուրբ երեսին ճնց կունային:

Իչաւ լուսոյ աստղն, որ էր մեծ գեներալ Վասիլեվն,
Նորանով աշխարհն իմացաւ՝ ճառագայթեալ է արևն,
Աքտրեցաւ մեր երկրիցն այն պիղծ կամակոր չար դեն,
Յայանի նորան խրոով էլաւ մեր սուրբ Կաշտերի պարգևն,
Յիմարն անլապտեր զնաց տեսութեան լուսոյ փեսային:

Ո՞վ էր կարող արդարանալ՝ թէ իմաստուն կամ թէ տգէտ,
Բագի Մովսէս Զօրաբեանցէն, որ էր Բաղուայ քաղաքապետ,
Հապտերն վառ ներկայացաւ, լուաւ ծայնն երանաւէտ,
Վասն որոյ անուանեցաւ նա արժանաւոր կարապետ,
Տէրն նորան անմահ պահէ որպէս Ենովք, Եղիային:

Փառք արարչին, արժանացանք տեսնալ պաղաքեր ամառն,
Ծագեց արեն արդարութեան հալեցաւ շամատեայ սառն,
Կողոպտիչ առիւծի տեղն՝ նստաւ Կօլիբէկին դառն,
Անթամահ ու ճշմարտասէր՝ քարոզ է նորա բարբառն,
Արդարոց հայր զորովաղութ, նստող մեղաւորաց վային:

Տագէ անմահ թագաւորն մեծ Աղեքսանդր երկրորդին,
Երկաչրի սուր յաղթութեան ՚ի դէմ թշնամեաց թակարդին,
Կոստանդին Նիկօլայեվիչ՝ Լէհաստանու քաջ միջնորդին,
Միքայէլեան դասն օրհնի մեր փոխարքայ արքայորդին,
Նոցա բոլոր աղգատոհմին՝ կամ մեծ իշխան Նիկօլային:

Կենդանութեամբն վայելի Կօլիբէկին նոր իշխանն,
Ճշմարտութեան ճանապարհ է նորա ամենայն սահմանն,
Առաքեալ մեզ միխիթարիչ, լուսաւորիչ խաւար տանն,
Սրբելով մեր արտասուքն՝ ուրախացնի Վրաստանն,
Բարեաւ նա լինի արժանի լանչանչան սուրբ Աննային:

Զարիւսար, դու ճնց կու մոռանաս ազնիւ Մովսէս
Զօրհաբեանցին,

Զի նա արդար կարապետ է, որ և գործէ նման նմին,
Այսքան մեղաց մէջ նա չեղև միախորհուրդ պիղծ առիւծին,
Նորա սահմանն անստան պահէ չայր ու Որդի և սուրբ Հոգին,
Հաշտութեան նշան տեսանեմք միշտ աղեղն գարնանային:

11.

Ն ո Ր Ե Ղ Ա Ն Ա Կ Ի .

Աղջիկ, մի գնալ դալիս եմ, ուղած մատանիդ տալիս եմ,
Դու արդար ես, ես մեղաւոր, դու խնդում ես, ես լալիս եմ:

Օրիս նման զիլֆիլդ սեն, մեռս բցեմ քո աչ թեւն,
Միբես եղբօրդ արևն, անղջիկ, մի գնալ, դալիս եմ,
Ուղած մատանիդ տալիս եմ:

Ինձ մօտ ունես մին մատանի, ամենայն ժամ ինձ պիտանի,
Ո՛վ պիտի վարդեզ հոտ անի. անշիկ, մի՛ գնալ զալիս եմ,

Ուղած մատանիդ տալիս եմ:

Ներիր, եթէ յանցաւոր եմ, սեւերես եմ, պարտաւոր եմ,
Զովդի մէջ քեզ հարկաւոր եմ. աղջիկ, մի՛ գնալ զալիս եմ,

Ուղած մատանիդ տալիս եմ:

Մինչի ես չի լինեմ սաղի, չի կարդիլ բուլբուլն բաղի,
Բաս զիւլարդ ո՞վ կու շաղի. անշիկ, մի՛ գնալ զալիս եմ,

Սրտիդ ուղածն տալիս եմ:

Հաստատ սիրողը խաբ չի տալ, ամենի խելքն թափ չի տալ,
Մէկ ձեռք երբէք ծափ չի տալ. աղջիկ մի՛ գնալ զալիս եմ,

Ուղած մատանիդ տալիս եմ:

Զի տանես Մայիճն հետրդ, կու դառնայ քո վարդապետդ,
Զարիւարն է հմուտ վարպետրդ, անշիկ, մի՛ գնալ զալիս եմ,

Ուղած մատանիդ տալիս եմ:

12.

Ասացեալ ի վերայ չար կանանց.

Աղած դրախտի մէջ փորձանք տեսաւ վատ կնկանից,
Սբրահամն հրեշտակից յամօթ բաշաւ շատ կնկանից:

Յակորայ աղղին չէին Եզրայտոսի մէջ չարչարիլ,
Յովսէփին չար նիւթ կպաւ մին ձեռք առատ կնկանից:

Սողոմօն խմաստութեամբ յաղթաւ բոլոր գնդին զիււաց,
Փչացաւ անյիշատակ, առնելով խրատ կնկանից:

Ով կամի կանանց ծածուկ արարմանցն ծանօթ լինիլ՝
Թո՛ղ նա իւր կնոջ մասին հարցմունք անի ետք կնկանից:

Զի խառնիլի եղանակ Ֆրթունէն, չի լինիլ անբամի,
Զի պատահիլ դառնութիւն, որ չի լինի արմատ կնկանից:

Մայիճն թէ հաւատի կանանց՝ նա էլ սխալված է,
Քանի մարդկանց տեսել է տուները բարպատ կնկանից:

Զարիւարն որտեղ տեսաւ, որ կանանցից լաւ են խօսում.
Նա կասի՝ դատ կնկանից, դատ կնկանից, դատ կնկանից:

13.

Ստացիր պատասխանդ, ապա իմացիր բանդ.

Ասամ, աղջիկ պարոն, ասաւ ի՞նչ կասես,
Ասամ խօսալ կուլինի՞, նա ասաւ ո՛չ ո՛չ.

Ասամ ճերմակ կուրծքիդ. ասաւ անհասես,
Ասամ տեսնալ կուլինի՞, նա ասաւ ո՛չ ո՛չ:

Ասամ վարքդ պատմիր. ասաւ սրբակաց,
Ասամ ողորմած ես. ասաւ սրտաբաց,

Ասամ մին պագ տո՛ւր ինձ, ասաւ հեռու կաց,
Ասամ մօտ դալ կուլինի՞, նա ասաւ՝ ո՛չ ո՛չ:

Ասամ է՞ր եմ անբաղդ, ասաւ վիճակ է,
Ասամ քո սէրն ինչ է. ասաւ կրակ է,

Ասամ էն սրտինդ, ասաւ կոճակ է,
Ասամ բանալ կուլինի՞, նա ասաւ ո՛չ ո՛չ:

Ասամ երկրի խանրն, ասաւ ինձ դուլ է,
Ասամ պահապանրդ, ասաւ խիստ թուլ է,

Ասամ ձեռքերդ, ասաւ փունջ վարդ է,
Ասամ ձեռ. տալ կուլինի՞, նա ասաւ՝ ո՛չ ո՛չ:

Ասամ ես Զարիւարն եմ, ասաւ չիմար ես,
Ասամ Մայիճն ունեմ, ասաւ բէթար ես,

Ասամ բռնեմ ձեռդ, ասաւ տկար ես,
Ասամ խնդալ կուլինի՞. նա ասաւ ո՛չ ո՛չ:

14.

Ի հանդէպ ասացելոցն Նիրանի.

Ամեն միտ ընկնելուս, սիրեցեալս իմ,
Անպատմելի չարչարանք է հալս իմ,
Կենացս մէջ միտս չէ խնդալս իմ,
Երկինք հասաւ այս դառն ողբալս իմ,
Չար աստղի դէմ կանգնած է իղբալս իմ,
Մահուանս պատճառ դառաւ սխալս իմ,
Աւաղ, այս լիասիրտ հոգի տալս իմ:

Սպասելով քո անվաշել խոստմանն,
Կատարվելուց յոչսս հատաւ այս բանն,
Սէրութեան մէջ սո՞ էր միթէ պայմանն,
Մտաբերեա՛, սէր իմ, ահեղ ատեանն,
Անչաղթ կանեն իմ ու քո դատաստանն,
Սիրոյ համար ստեղծուած է ինսանն,
Արարմանցդ այս է զարմանալս իմ:

Մեծ բան մի կարծիր ինձի սպանելդ,
Կենդան գոլով՝ մահուան դուռն տանելդ,
Անողորմաբար հոգիս կլանելդ,
Անհաշտութեան սերմն փութով ցանելդ,
Ի՞մ աշխատած բուրաստանից հանելդ,
Աչացս դէմ թշնամուս պահպանելդ,
Մի հաստատիր վարքըդ մոռանալս իմ:

Անճար ցաւս մին խօսալոց դեղ չուենեմ,
Վերջացել եմ, էլ սրտու՞մս եղ չուենեմ,
Մէկ սրտակից մօտ աղբահան, ցեղ չուենեմ,
Քեզանից կրման ինձ արիւնահեղ չուենեմ,
Մարմնոյս մէջին մին մասունք զօրեղ չուենեմ,

Այս անտոնեան հուրից փրկող դեղ չուենեմ,
Այրուելու է, ՚ի զուր զիմանալս իմ:

Օրէջօր ցաւս զօրացաւ, վա՛յ է ինձ,
Կենացս ծառն չորացաւ, վա՛յ է ինձ,
Յոյքս աշխարհէն վերացաւ, վա՛յ է ինձ,
Թշնամին եարիս տիրացաւ, վա՛յ է ինձ,
Լալով աչքերս կուրացաւ, վա՛յ է ինձ,
Այսքան արարքս զրացաւ, վա՛յ է ինձ,
Տես ինչ արաւ վաղ չի հասկանալս իմ:

Քննիր ասածս, կու լինիս սրտազէտ,
Ողորմիր ինձ, ո՞վ քարասիրտ բանդապետ,
Զրպարտում ես ինձ ամենայն ժամ թէպէտ,
Մագէ շապիկ հագած, չելամ վարդապետ,
Վարվելոյ դուռն չի ճարամ ես քո հետ,
Դու, աննամուս, ինձի մի կարծիլ տգէտ,
Ճեղութեան նշան է «մեղայ» զալս իմ:

Սիրտ է տալիս միշտ սիրոյ արմատն ինձ,
Խոցոտել է զուբարիդ գանդատն ինձ,
Զարկեալն եմ, ի՞նչ հարկաւոր է շատն ինձ,
Երկու կեանքից լաւ է պազիդ հատն ինձ,
Զի պատահաւ մէկ ձեռք առատն ինձ,
Պահպանում է Մայի՛Քի խրատն ինձ,
Եթէ ոչ՝ վաղ պիտէր վերջանալս իմ:

15.

Ա. ս ա գ ե ա լ ի բ եր ա ն ո յ Մ ա յ ի Ֆ ի ա ո
ո ռ դ ի ն ի ւ ը Ս ե ը ո վ բ է.

Աշխարհն ինձ կուրագրել ա,
Լոյս տուր աչացս, որդեակ.

Դառնութիւնս վերագրել ա,
Յոյսն ես կենացս, որդեակ:

Մի հեռագիր իմ մօտիցն,
Չեմ կշտանում քո հօտիցն,
Այրված սրտիս մորմոտիցն
Բղխում է լացս, որդեակ:

Տէրն տայ քեզ՝ ինչ ես կուզեմ,
Պարզ արեղական պէս կուզեմ,
Թշնամույզ կեանքը կէս կուզեմ
Չէ՛ իմ կամացս, որդեակ:

Քեզի Սերովբէ եմ կոչում,
Ես բերովբէից աղաչում,
Առանց քեզ ինձ չեն նանանչում,
Փառք ես փառացս, որդեակ:

Խնդրեմ լսես իմ կտակս,
Ո՛վ սիրելիս միայնակս,
Անցել է իմ ժամանակս,
Լնր իմ կամացս, որդեակ:

Դիւանս, իմ թշնամիս շատ է,
Անուանի պիժն մահից փատ է,
Սա մին հայրական խրատ է,
Կանգնիր պիմացս, որդեակ:

Աստուած ինձի կեանք է տուել,
Բաց ապաշխարանք է տուել,
Քեզ մխիթարանք է տուել
Սպերսանացս, որդեակ:

Պատկերդ աեսնայ չեմ կարում,
Բոյովդ խնդայ չեմ կարում,

Նոզիս քեզի տալ չեմ կարում,
Միշտ ես մտացս, որդեակ:

Մայրդ քո ծայնր չի լսում, *)
Օտարի նման է խօսում.
Քօլ աշխարհն են մեզ ափսոսում,
Պտուղ բարեացս, որդեակ:

Զարկեալն պատմաւ վարբերդ,
Որ լսի քո Մայի՛ք հէրդ,
Դու մին ես, Աստուած քո տէրդ,
Նեա թշնամեացս, որդեակ:

16.

34283-65

Աշխարհիս մէջին ես բանի տեսակ սիրահար եմ տեսել,
Ոչ սէրիցն բազր պտուղ, ոչ նրան մին նար եմ տեսել,
Որքան սիրական եմ տեսել՝ զիվ անէհիթիբար եմ տեսել,
Ով որ սիրական չունեցել, չասի ես աշխարհ եմ տեսել,
Սիրողի սիրտն շուշի պէս, սիրածինն քար եմ տեսել:

Սէրն է մարդկանց աշխարհի մէջ զաւ տվող, մոլորացնողն,
Սէրն է մարդկանց ուրախ պահող, օրրստօրէ զօրացնողն,
Սէրն է մարմնոյ նիւթն քաշող՝ կանանչ կեանքն չորացնողն,
Սէրն էր Յովսէփի գեղեցիկի զուլէչխային կուրացնողն,
Սիրոյ մէջ զանազան բարիք կամ զանազան չար եմ տեսել:

Աղամն ՚ի սիրոյ Եւայի՛ պտուղն կերաւ, մերկացաւ,
Դաւիթ մարգարէն սիրող էր, արքայութեան զուռն բացաւ,
Անսէր մարդն անհոտ վարդ է, եարար նա էլ ի՛նչ հասկացաւ,
Էշն էլ կասի զարնան համար՝ թէ ես էլ բահար եմ տեսել:

Թէպէտ անսէր մարդ չի լինիլ, կտսեն չափաւորն լաւ է,
Մարդն ունի բնարողութիւն, որն վատ է, որն լաւ է,

(*) Մայի՛քի ամուսինը իւր միայնակ որդու, Սերովբէի, ծննդեան վերայ հիւանդանարով խուլանում է. նա իւր զգացմունքը արտայայտում է միայն շարժմամբ, ձեռքերով:



Փուչ աշխարհն անգաւոր է, էլի ուրախ օրն լաւ է,
Ով սիրուն տեսաւ, չի սիրաւ՝ նորանից մին քուն լաւ է,
Աչքն չի տեսնիլ, սիրտն ուղի, կասի ի՞նչ խէջր ու շառ եմ տեսել:

Ի՞նչ տեսած վարդ սիրականին ջան մատաղ անես, փոքր է,
Բանի որ կենօք կենդան ես, հետն խաղ անես, փոքր է,
Ողջ մատներն ոսկով պատես, դառ-վարաղ անես, փոքր է,
Անհաստատ սիրականներին մորթես ու աղ անես, փոքր է,
Զարկեարն եմ, սիրուններից հարիւր թէ հազարն եմ տեսել:

17.

Ով ունի աղջիկ պարուն՝ նորա դարունն է
գարունն.

Գարնան եղանակ, եկ, մի թող աչքս նանապարհի,
Աստուած սիրես, արի.

Ցաւն չի թողել ինձ իմանալ համբն բահարի,
Կուլինի քանի տարի.

Այսօր եարս ինձ խոստացել ա բանքն կատարի,
Գարծեալ չի դադարի.

Նոր աշխարհ եմ ընկել, կարօտ եմ ուրախ խաբարի,
Թո՛ղ իմ իխտիարի.

Ո՞վ կայ ինձ նման տանել տուող էշխի զուժարի,
Միշտ ըստ սիրահարի:

Երբ որ անտառից բիւբիւլի ձայնըն տուն է գալիս,
Նոզիս բուն է գալիս:

Իբրեւ աւետիս քօլ աշխարհին գարունն է գալիս,
Սրտի սիւն է գալիս.

Ցանկալի սարն շատ ինձ նման մէջնուն է գալիս,
Խիստ անքուն է գալիս.

Այս առարկայի ուխտաւորն անհուն է գալիս,
Ով թաղուն է գալիս.

Նըշան սիրոյ ընծաներ ունեն փունջ նունուֆարի,
Կամ նարկիզը սարի:

Երկու լեզուանի եարի տէրն դատ կանի ձեռնէն,
Վատ եարերը մեռնեն.

Հաստատ եարի տէր բաղդաւորըն կու բունի կրունէն,
Կուգայ բաղի զունէն.

Մէջքից խարտած, ջուխտ ձեռք բռնած ծոցի նունէն,
Միմեանց զաւր կառնեն.

Ինչքան սիրոյ մէջ խաղ է լինու՞մ՝ զիւի էլ կուբունէն,
Մէկ մէկու կուխառնեն.

Թող նզնաւորըն տանջիլի արանքուժը քարի,
Ինքն իրան բեղարի:

Լաւ քննող է պէտք հասկանալոյ աչս զովասանքըն,
Ի՞նչ միտք ունի բանքըն.

Սէր վայելչութեան պահանջուժէ մարդկային կեանքըն,
Կամ էնդուր է ջանքըն.

Ով խստակրօն, ա՛նէր ինձի սրտիս կարօտանքըն,
Քեզ իրնի քո վանքըն.

Է՛ր բաց կրթողեմ իմ՝ ձեռիցս նազդ աշխատանքըն,
Որ մօտ է արանքըն.

Եթէ կամենաս անուանիլ ինձ ընկերը չարի,
Ինչ կամիս՝ համարի:

Զարկեար, զու զարունն ինչ ես անում, անսիրական ես,
Ներիք դաւի անես.

Ոչ անտպատի, և ոչ աշխարհի, ինչի՞ նման ես,
Իբրեւ կիսաջան ես.

Սիրոյ համփուժըն ինչ բաշում ես՝ չի փոշմանես,
Վատ անուն չի հանես.

Մի բեռան տակըն, որ մտել ես, պիտի տանես,
Միս ու վնջ չի անես.

Խնդրես Մայի՛կից՝ բարիդ զրել լեզուիդը եարի,—
«Հանգիստ սիրահարի»:

18.

Շատ խժոզն ազահ է, հարբելն յատուկ մահ է.

Գինետունքն քիչ պիտէին, որ զինին մզաւոր ունենար,
Խժոզն փառք ու պատիւ, ծախոզն հազար ունենար:

Հալալ է խելօքներին, ոչ թէ չիմար հարբեցողին,
Եարար էն հարբեցողն չի՞ ամսոտում տուած փողին,
Համարձակ քուֆր է տալիս իրան բարի կամեցողին,
Կարծելով մեծ բանի է թասն է խփում փարչի կողին.
Ո՞վ կասի ունկ է խուլին, աչք է կուրին, ոտք է կաղին.
Ես կասեմ՝ խուլացնում է, կուրացնում է աչքը սաղին,
Շատ խրճաւ՝ կու. կորցնի, ուժ որ ինչ հնար ունենայ:

Հարբածի պատուած շորն՝ իրան աչքին լաւ կերևի,
Խաշիլին հալուայ կասի, հասիկն փլաւ կերևի,
Եթէ կասես ողորմի հօրդ, նորան կռիւ, դաւ կերևի,
Տուն կուզայ՝ շահիլ կինն շատ ամենապառաւ կերևի,
Արևելքն՝ արևմուտ, հիւսիսն՝ հարաւ կերևի,
Թէ ասես փոքր քնիր, մրրափելն ցաւ կերևի,
Կու վազի ետ գինետուն, թէ զնալոյ ճար ունենայ:

Հարբողն անհնար է, որ տանը մէկին չի ծեծի,
Վանքի կատղած շան նման՝ տնտեսի ծեռն կուկրծի,
Իբր թէ բարկացել է, հաս կու կոնծի, ու հաս կածի,
Մահնայ կենաց խմելն՝ առաջի բանն է հարբածի,
Կարծելով հաղ է ասում, կուտանի զահլէն քրնածի,
Ոչ էշին խոտ կու ձղի, ոչ կարծակի, որ արածի.
Զի ուղիլ, որ աշխարհի մէկ բանից խաբար ունենայ:

Երանի էն խժոզին, որ իրան խելքն չափում է,
Հարբելն միտ բերելիս՝ անուղղով սարսափում է,
Երբեմն իւր թամահին զինեխառ ջրով խաբում է.

Ով որ ազահ լակում է, այնպէս էլ ազահ լափում է,
Սնքնար պար է զալիս, սատանէն մօտկից ծափում է,
Ուժ դռնից, որ ներս մտաւ, տան տիրոջ միսն թափում է.
Յօժար է, որ զուրս քցի, հինգ թուման զարար ունենայ:

Զարկեար, այլոց խրատար, բաս ինքդ էլ փոքր խմէս,
Եթէ մին կուժ պատահի, չես դադարիլ, որ չի բամես,
Խուսկն նիսեա ես ծխում, բայց զինետան փողն տամես,
Եթէ խապաւ չի խմես՝ Մայիֆէ հետ բարեկամ ես,
Խմելուս անկուշտում ես, չի խմելուս շատ անհամ ես,
Լրվել ա քառասուն տարիդ, աշխարհի զովգերից խամ ես,
Քեզ նմանն փողի տեղ բայքա զահրումար ունենայ:

19.

Մուխամմազ ի վերայ սիրոյ և գարնան.

Գարուն է բացուել՝ դէպի սարին նայիր,
Կանանց կարմիր ծաղկանց կամարին նայիր,
Մանուշակի ծուռ վզի տարին նայիր,
Արինահեղ քաջ լալազարին նայիր,
Հանդիման է, նարկիզի խարին նայիր,
Մէկ մէկու մօտ ամենի եարին նայիր,
Բիւլբիւլ, դու քո վարդիդ ճանապարհին նայիր,
Սիրտս, դու քո իզուր զադարին նայիր,
Մէջք բաց արա, մին աչս աշխարհին նայիր,
Զարկեարի պէս քաջ սիրահարին նայիր:

Մի տուր սէր աշխարհաւեր փողին,
Այն կրակն ներհակ է զարնան ցօղին,
Երբ հասնում է սիրուն շամամէն թաղին՝
Օրինակ է նորահասից զամբաղին,
Սորանք են պատուողն ձմեռան լեղին,

Ամեն զաւարարն հասաւ իւր դեղին,
 Արժանացաւ ծշակն տեսնալ հեղին,
 Այդեպանն սիրով է նայում բաղին,
 Փառք տուր սորանց քեզ համար ստեղծողին,
 Կանանչ կարծիր ծաղկանց կամարին նայիր:

Գարնան հոտից սողունք չեն մնում նաշի,
 Անբաններն փոխարկում են նոր կաշի,
 Երբ դալիս են պտղաբերութեան յուշի՝
 Յայնժամ պիտի երկու սէր միմեանց քաշի:
 Ո՛վ ծարդ, քանի կենդան ես՝ զովդդ բըշի,
 Մի՛ թող քեզի աշխարհն ՚իդուր մաշի,
 Ցանկացողն հագնելոյ զառ զուժաշի՝
 Միաքն նա է, սիրողի սիրտն տաշի,
 Երբէք չի լինիլ վարդի ծառ առանց փուշի,
 Հանդիման է, նարկիզի խարին նայիր:

Մարդոյ կեանքն նման է զլուծ թելի,
 Մօտկանում է օրէցօր կարվելի,
 Ամեն սիրահար ունի մէկ սիրելի,
 Մեր հողեղէն լեզուին է անպատմելի,
 Կայէնն էր, թափաւ արիւնն Աբելի,
 Երևի անսերութիւնն է ատելի,
 Ամեն բանի գլուխն սէրն է էլի,
 Ով սէր չունի, նա է խիստ ողորմելի,
 Եթէ կամիս սիրոյ բանն քննելի՝
 Մանուշակի ծուռ վըզի տարին նայիր:

Մին տարւոյ մէջ չորս է մեզի եղանակ.
 Ամառ, ձմեռ, աշուն, գարունն զուշակ,
 Սորա են մեր կեանքի համար օրինակ,
 Ինչպէս մէկ տարին փոխվում է չորս տեսակ՝
 Մարդկան ազգի ապրուստն էլ է նոյն զունակ:

Շատ հարուստներ տեսնում ենք վերջն ծշակ,
 Ո՛վ բարասիրտ, տես խուճար աչք-ուներբ բարակ,
 Մէր բառն կամ ջուր թարգմանի կամ կրակ,
 Ո՞նց են մորթում սիրահարին անգանակ,
 Արիւնահեղ քաջ լալազարին նայիր:

Աշխարհի լաւ վարքըն ինտանին հասաւ,
 Դառն ապրուստն չար սատանին հասաւ,
 Անվայելի կաչքըն պատանին հասաւ,
 Պատահմամբ արժանն անարժանին հասաւ,
 Ուժ վիզն աշխարհի չուանին հասաւ՝
 Դադարկ ձեռօք նա զերեզմանին հասաւ,
 Մեղուն, նուճուֆար բալասանին հասաւ,
 Ինչ ծաղիկ որ ուժ բուրաստանին հասաւ՝
 Ամեն սիրող իւր սիրականին հասաւ,
 Բիւլբիւլ, վարդիզ հանապարհին նայիր:

Երկու կողմանց սէրն ես միշտ լաւ տեսայ,
 Մէկ կողմից սէրն սրտամաշ տեսայ,
 Սիրականի հաստատն սակաւ տեսայ,
 Գաղցր սիրոյ մէջ երբեմն դաւ տեսայ,
 Խուփ կենայից՝ սիրոյ հալաւ տեսայ,
 Ոմանց մէջին հաշտութեան փլաւ տեսայ,
 Հաստատ սէրն մին անհանգիստ նաւ տեսայ,
 Ուժ որ աղաւնի կարծեցի՝ հաւ տեսայ,
 Անխղելի սէրըն միշտ կամաւ տեսայ,
 Մէկ մէկու մօտ ամենի եարին նայիր:

Աղերսում եմ, պաղատում եմ, խղճալի,
 Ողորմիր ինձ, էր ես թողել աչս հալի,
 Քար ընկնի գլխին իմ բաժին իզբալի,
 Մէրն լծաւ ինձի տխրութեան կալի,
 Հրաման չկայ մին բոպպէ դադար տալի,
 Կարօտ եմ պաշտառ երեսի, սև խալի,

Իմ բժիշկն չեն թողում մօտրս զայի,
 Վնչ ինձ համար, անարժան եմ տեսնալի,
 Մինչի երբ մնաս այդպէս Ֆիքր ու խիալի,
 Սիրտս, դու քո խղուր դադարին նայիր:

Ինչ սրտի մէջ բնակված է քաջ սէրն,
 Թարաշում է այն հմուտ ակունքներն,
 Մոռանում է մարդ իրա հէրն ու մէրն,
 Սիրոյ մէջ փչանում է անհամբերրն,
 Յովսէփ նախնի պատկեր էր քո պատկերն,
 Կրկնակեանք ուղիւր, բաց մի թող այս խէրն,
 Արի, տես այժմեան աշխարհի զիլֆերն,
 Մոլորվել են վարդապետն ու անէրտէրն,
 Ո՛վ դու գուլէյխայ Յովսէփի ընկերն,
 Ա՛չք բաց արա, մին այս աշխարհին նայիր:

Անէծքն զնաց Եւայ, Ադամի հետ,
 Ի՞նչ բան ունենք մեզ պապի հետ, մամի հետ,
 Արդար զինին բերէք բիւլուլ ջամի հետ,
 Մայիֆն հաղ անի ոսկույ ծամի հետ,
 Խառնել չէ պէտք հարալն հարամի հետ,
 Ո՞նց կու սաղի համեղն անհամի հետ,
 Ինչպէս թառամեայս Անթառամի հետ,
 Մաշվում եմ անվայել բարեկամի հետ,
 Սէր ցանիր, սիրահար, Աքրահամի հետ,
 Զարիւթարի պէս քաջ սիրահարին նայիր:

20.

Ասացեալ ի վերայ պատուելի մուրքի, որ ՚ի
 ձեռս ոմանց եղեալ է անպատիւ. *)

Գոհունակ եմ քեզանից, ո՛վ փառահեղ կամ սև միրուք,
 Քեզնով եմ ես ստացել աշխարհիցն պարզև, միրուք,
 Ով քեզի վատ է ասում, նա խելքից է թեթև, միրուք,
 Յանկասէր պիղծ մարդիքն քեզ չեն սիրում թէև, միրուք
 Երեսիս զարգն դու ես, կարգին բուսած անձև, միրուք,

Քեզի ինչ հարկաւոր է ուանդ ու խինէն կամ այլ հոտն,
 Միրքաւոր թէ անմիրուք՝ կեղտոտ կուլինի կեղտոտն,
 Արժան է սուրբ անուանել մաքուր հողում բուսած խոտն,
 Մինչի քեզ՝ մէջլիսներում իմ տեղս էր դռան մօտն,
 Հիմիկ պատուելեաց գասում՝ ինձ տանում են վերև, միրուք:

Միրքաւոր են նկարում մարգարէից պատկերները,
 Առաքեալք կամ մարգարէք միշտ ունէին մուրքի սերը,
 Անմիրուք ես չեմ տեսել մեր հոգեւոր տէրտէրները,
 Նա է մեզ ցոյց տուողն մարդկանց շահիլն ու կամ ձերը,
 Ով քեզի անարգում է՝ նա պիղծ է կամ չար դև, միրուք:

Որտեղ քաղցած լօթի կայ՝ երեսն տիլոր եմ տեսել,
 Ոչ՝ ջիբին խարջն օրական՝ սչ հազին լաւ շոր եմ տեսել,
 Մազն սպիտակ, երեսն սափրել տուողն նոր եմ տեսել,
 Թան լակած սև շան նման՝ աչքերն պղտոր եմ տեսել,
 Թառամած բուրասաւնին ի՞նչ պիտոյ է անձրև, միրուք:

Ոմանք իրանց պատկերն միացնում են կուռքի հետն,
 Այս զործն է խիստ հակառակ մեր հայրենի վարքի հետն,

*) Հանդուցեալն այս երգով ակնարկում է եղել Սէյտաղին, որ նկարագրած է միրուքը վատ կողմից. տես Հակական Գնարի երես 366:

Գր. քան. Գրիգորեանց:

Ամենից զովելի է՝ վարվիլն աշխարհի հետն,
Ի՞նչ վատ է կարմիր թուշեր կպցնելն մուրքի հետն,
Այսինքն՝ բամբակի մէջ պահել վարդի տերեւ, միրուք:

Եթէ մին պառաւ ծիոց՝ քուռակի պէս պոչն խուզես,
Տանես փողոց ծախելոց, շահիլ տավարի զին ուզես,
Ատամին մտիկ կանեն, կասեն բեղի՛ դու անպող ես,
Օչինբաղ մարդոց նման՝ մասխարայ ես, կամ տնազ ես,
Շատերին ախմախ կասեմ, անմիտ կասեմ ես քեւ, միրուք:

Զարկեար, դու կեղծաւոր ես, միրուք չունես, է՞ր ես խօսում,
Ե՞րբ ես դու այս բառերն կանանց բերանիցն լսում,
Ճար չունես՝ Մայի՛Քի մօտ վիզդ դանակի ես քսում,
Որով դու այսուհետեւ ծեր մարդոց զործ ես սկսում.
Արի՛, բաց թող՝ ունենաս մին լի՛ն ու այ՛ք վէ՛ւ միրուք:

21.

Ով բանաստեղծ է, խօսքն անկեղծ է.

Դու խնդրում ես, որ բեղ զովեմ, բայց ես ուզում եմ նզովեմ,
Մի՛թէ այնքան չիմար կով եմ, որ սուտ ասեմ, հողիս պովեմ:

Եթէ զովեմ անարժանին՝ թամբի պէս է պող հայվանին,
Ողորմի տալով սատանին, ընդ արդարս ճնց հողովեմ:

Ոչ ուզարլիկից ես տանկի, ոչ խնկից ես ճայոց զասկի,
Ոչ գաթայ ես նաւակատքի. արդեօք չե՞ս ասում ես ո՞վ եմ:

Անուան զովասանք ես ուզում, սատանի բամբակ ես դղում,
Գովասանքն բեղ չի սագում, եթէ ոտներն էլ բուխովեմ:

Զարկեարն եմ նշմարտաբնակ, փասն այն ոմանց չեմ ընդունակ,
Մայի՛Քեց վեր առ օրինակ, եթէ ոչ՝ բեղանից խռով եմ:

22.

Գ ո հ ու ն ա կ ու թ ի լ ն ն ա ս ի բ ի ջ .

Դու տասնուչորս տարեկան ես, ես քսանին հասամ հէրէս,
Դու աշխարհն նոր հասկազած, ես քո սիրոց համն իմազած,
Քեզ ասում են աղջիկ պարուն, ինձի ասում են մեծատուն,
Յայտնի բան է, ոչ թէ թաքուն, Աստուած է մեզ միմեանց զուգել:

Դու խօսում ես հանդարտ, համեղ, ես հասկանում եմ տեղբատեղ,
Դու անուանի 'ի մէջ կանանց, ես քաշ եմ 'ի շարս արանց,
Դու ինձանով ես պարծենում, ես բեղանից եմ լիանում,
Էլ նասիբն չեմ հասկանում, Աստուած է մեզ միմեանց զուգել:

Քո մազերդ սարքին հիւսած, իմ բեղերս թանձր բուսած,
Քո երեսդ վարդ նորաբաց, ես համբուրում եմ քո կամաց,
Դու ինձ համար հոտով շամամ, ես կառնեմ ձեռս միշտ ամեն ժամ,
Դու Սառայ ես, ես Աբրահամ, Աստուած է մեզ միմեանց զուգել:

Դու մին մեծազին միւրվարի, ես քո մօտին նաղղ մուշտարի,
Դու վայելչութիւն զանկազող, ես մուրաբից չի կուշտազող,
Դու մահիճի վերէն փոքրաբուն, ես սիրահար եմ միշտ չունուն,
Դու էլ հարուն, ես էլ հարուն, Աստուած է մեզ միմեանց զուգել:

Դու համարիք Աննի տարին, ես ճաքազնում եմ Զարկեարին,
Դու սովորել ես իմ քէֆին, ես մոռացել եմ Մայի՛Քը,
Քեզ չի խրատել քոյ մէրն, ինձ չի քարողել աէրատէրն,
Է՞ր չպահենք միշտ սուրբ սէրն, Աստուած է մեզ միմեանց զուգել:

23.

Ս է բ կ ու ք ա շ ե ս ե ա թ ի ջ ն , ա չ ա ջ ճ ա ն ա պ ա Ր հ ի ջ ն .

Եարմբ Աստուած, սա ո՞վ է, որ գալիս է նազ անելով,
Աչ ու ձախ մտիկ տալով, ինքն իրանից հաղ անելով:

Ծածերն նախշուն հիւսած, երեսին զօթազ անելով,
Ինքնահաւան թովուզ է, խնդում է փարվազ անելով,
Կարաւ իմ կեանքիս թելն, սէրն սրտիս սազ անելով:

Ով այգպէս տեսնի բեղի, զաւ կու ճարի անտանելի,
Ջազուբազ թուխ աչքերդ հնար չէ մարից հանելի,
Աղջիկ, Աստուած կու սիրես, երբ զալիս ես կէշտ անելի՛
Իմաց տուր ողորմելոյս, զամ ճամփիդ ծաղկունք զանելի,
Ուրախ ովսաննայ ասեմ, ջանս փիեանդազ անելով:

Երեսդ բաց մանարի, վառ երագն շալ չի ուզիլ,
Բնածին փարդ թուշերդ զարդարանքի խալ չի ուզիլ,
Ծոցումդ վայելողն դրախտն տեսնալ չի ուզիլ,
Քո սիրով ճաշակվողն էլ այլ սէր զգալ չի ուզիլ,
Ճար չունեմ ինձ խաբում եմ, տեսածս երազ անելով:

Եթէ որ փոքր խօսես հարիւր տարեկան ծերի հետ՝
Կուշինես կրկնածանօթ իւր շահիլութեան սէրի հետ,
Ով դժոխք չի զանկանայ մին բեզ նման բնկերի հետ՝
Չի տեսնիլ արքայութիւն սէր քարոզող սուրբերի հետ,
Փրկութիւն չի ստանալ, աղքատաց նիեազ անելով:

Չարիւթս կանչիր մօտդ, որ միշտ բեղի հարկաւոր է,
Իւր բարեկամ Մայիճին՝ բեզ բնծայել ուխտաւոր է,
Դարդիմանդ, քաղցրախօս սէր քաշելում բաղդաւոր է,
Դա վաղուց հասկացել է, որ աշխարհն անցաւոր է,
Սէրութեան դուռն է բացում, փարքդ մուխամմազ անելով:

24.

Թ եր եր ի գն կանան չեց, հարբողն չի համան չեց.

Ես խմած եմ, դու հարբած ես, արի՛ ջան ասենք, ջան լսենք,
Ես էլ կածեմ, դու էլ կածես, շահնազ ասելն կրսխենք:

Փիլիսոփէն զեխոտ կիլի, չունենալ երբէք հայելի,
Փողն մերն է, խմենք էլի, թաք ոչովի չի բամբասենք:

Բաւական է մեր ուսումն, ջոկում ենք եփածն ու հուճն,
Դուրս բեր էն դրումն, փոքր մարիֆաթից խօսենք:

Ի՞նչ մարդ է Յակոբ իշխանն, միշտ նստում է իրա տանն,
Փողի շահ առնելն է բանն, այդ բաներիցն մենք պաս ենք:

Ո՞վ էր Ղուկաս Վանանդեզին, խաբեզին տունը քանդեզին,
Վերջն էլի պոչն կնդեզին, մենք նորանից լաւ Ղուկաս ենք:

Մայիճն չի տամ մեր հագն, թող լաց իլի իրա լացն,
Խմենք Չարիւթս կենագրն, որ նորա հետ միաթաս ենք:

25.

Խօսակցութիւն երկու աղջկայ բերանից, որոնք
անբաղդագած են պրիդանի պատճառով:

Երկու աղաւնի տեսամ մին զաֆասում,
Մէկ մէկու իմ սիրելի բոյր են ասում:

Աշխարհից զանգատվում են այս տեսակի,
«Եարաք ո՞վ կայ մեզ նման դառն վիճակի,
Աստուած մեր բաղդ դրողի դուռն փակի,
Չկայ աղջիկ մնացած մեր հասակի,
Ինչու է մաշում մեզի զամուճ, զուսում:

Մեր խնամախօսներն լալացել են,
Գովասանք լսողներս խուլացել են,
Փողասէր շահիլներն ծուլացել են,
Ասում են սորանք անիղբալացել են,
Էնդուր են պատիւ պահում տունում, զուսում:

Ո՞վ կարէ ասել մեզի սորանք զէշ են,
Մեզի զէշ ասողներն իրանք էշ են,
Չունի մեզ պէս զեղեցիկ Հասան-փաշեն,

Չեն կարալ մեզ նմանի նազն քաշեն,
Չեն տեսել մին օր մեզի քաշ լիբասուսմ:

Չարախօս լեզուի ձեռից դաղդաղ էլանք,
Բանտուսմն համբերութեան դուժսաղ էլանք,
Վատաբաղդ ամենիցն մենք վաղ էլանք,
Ոսկի անուն պահեցինք, մաֆրաղ էլանք,
Քար կու դառնայ, ով մեզի չի ափսոսում:

Մեր մայրն մեծ շահէն է քաշ անուանի,
Ո՞նց կուտայ իւր ձագերն անարժանի,
Տեսնողն գումրութիւր ձեռին չոբանի՛
Տուողին անէծք կուտայ, ծաղր կանի,
Քանխսին մենք տեսնում ենք կամ թէ լսում:

Նասիբի ծառի վերէն մեր բաժինն
Յետ ու առաջ գո՛չց կտայ իրա զինն,
Լաւ ախանց ոչ նորն, ալ թէ հինն,
Անհաս է մեզ քննելոյ ՚ի վերինն,
Աղօթենք զիշեր գերեկ ծոծում, պասում:

Զարկեարի թէ ունենայ մին իխտիեար՝
Զի թողիլ մեզ հոգալով, շուտ կանի ճար.
Մայի՛քին նա պատմում է օրն հաղար,
Մեր յոյսն միայն դու ես, Տէր բարերար,
Ամենայն նեղ աղաչողին դու ես լսում»:

26.

«Ման մաստի շարաբամ» Շէյնի եղանակով.

Ես սիրոյդ հարբածն եմ, խելաղար է՞ր կասեն ինձի,
Պատկերիդ տարուածն եմ, զիւահար է՞ր կասեն ինձի,
Եթէ դու լինիս ալլոց եարի պէս վարքուսմդ հաստատ՝
Սիրահարից մէջ կամքն անկատար է՞ր կասեն ինձի:

Այս քո խփած վերքը իմ վերես եթէ չի տեսնեն,
Անհաս կարօտում, տանջվող չարաչար է՞ր կասեն ինձի,

Սէրդ եթէ որ ես մոռանամ քո մոռանալոյդ պէս,
Բարեաց դաւանան, չարեաց բարերար է՞ր կասեն ինձի:

Այրեմ մարմինս, ծայնս չի հանեմ անմուռնչ գառին պէս,
Բարքն անհանդիստ, լեզուն անդադար է՞ր կասեն ինձի.
Կարծեօք Մայի՛քի, որ միշտ քեզանով լուսաւոր եմ ես,
Այլքն անգիտութեամբ խաւարից խաւար է՞ր կասեն ինձի.
Զարկեարն մատաղ իլնելոյ քեզ չէ սրտի կասկած,
Առանձին գաւ է, էշխից բէյխաբար է՞ր կասեն ինձի:

27.

Այս օր ի փող, վաղն ի հող.

Զարթիր, թմրեալ իմաստութիւն, է՞ր ես մտել տակն փողի,
Մի՛թէ այդքան քեզ ատելով՝ չի լցուաւ փափաղն փողի:

Փողապաշտ մարդկանց չեմ ասում, եթէ լսեն, կու խուլանան,
Նորանք ալլոց խրատում են՝ չառատանան, չի թուլանան,
Ոմանք պատկերներ են պահում, որ աղօթքից չի ծուլանան,
Ոմանք ՚ի տեղի պատկերի՝ պաշտում են մուրհակն փողի:

Մարդ կայ փողն արքայութեան յատկապէս նմանացնում է,
Իրա փողով չի կշտանում, շահով փող էլ բանացնում է,
Առ հասարակ քօլ աշխարհին փողն է հեծել, մանացնում է,
Մինն չկայ, որ բարձրանայ, վեր իլնի շալակն փողի:

Եթէ մին էշ փողոց տանես, մանացունես նորան մենակ,
Չուլն արբուշուսմից լինի, փալանն մահուղից բարակ,
Իսկոյն նորան կու անուանեն պատուելի պարոն աւանակ,
Եթէ տեսնեն շալակն է լրբցրած տուրակն փողի:

Բարձրացնում են փառաց ՚ի փառս, ով որ փողապաշտ հա-
րուստ է,

Ինչ վախտ սուտ է շարունակում, դիփ էլ ասում են՝ դրուստ է,
Շատ կան անփող փիլիսոփայք, ամենն մին տեղ կորուստ է,
Այս փառքն ունանից ստացաւ անիրաւ քսակն փողի:

Աղքատին 'ի տեղի օգնելոյ՝ ծաղր են անում, պարագնում են,
Սուտն հշմարիտ են շինում, հշմարիտն զբրացնում են,
Արդար դատաւորաց աչքն՝ փող են տալիս, կուրացնում են,
Զկայ մին աչնպէս առարկայ, որ կուրացրնի ակն փողի:

Ոչ մին մարդից ես չեմ լսել փողաւորի բամբասովէն,
Նորանց խայտառակ արարքն մարդկանց մէջ յայտնի ասովէն,
Յայտնի մահապարտ կղառնաս, եթէ ասես վնասովէն,
Նէնց կիմանաս սրտին կպաւ հոգէառ զնտակն փողի:

Ոմանք կասեն իրան չունի, էնդուր է փողին խիստ ատում,
Փողն ինքր մեղաւոր չէ, մարդկանց ձեռիցն եմ զանդատում,
Լաւ բարեկամք փողի համար՝ մէկ մէկու զլուխն են հատում,
Ինչպէս աղուէս՝ երկու ոտով ընկել ենք թալակն փողի:

Աշխարհի բառն ես վերառի, խելքս ու բարին քսեցի,
Աշխարհն ածական ըստ անուան՝ զոչական փողն տեսցի,
Աստուած ձեզի հաւատացնի, սա էլ նորումս լսեցի,
Մէկ մարդոյ աչքն զաւում էր, ճար ասան՝ բամբակն փողի:

Սաղ գիշերն ֆիքր են անում՝ արդեօք վաղն ունին խափեն,
Եթէ հասկանան փող կայ մէջին՝ երկնքից ասաղեր կութափեն,
Մէկ ծախսում, որ վնաս տեսան՝ երես անկեալ կուծրափեն,
Ուզում են փողով զարգարեն աշ և ահեակն փողի:

Զեմ ասում էն հարուստին, որ կայքին կեօրայ վայելում է,
Հարուստ կայ որ՝ փող մսխելն նորա համար մեծ օլում է,
Արժանաւոր հարուստներն իրանց զործքերից մահլում է,
Ամեն հոգեւոր բաներում ունի չիշաաակն փողի:

Փողն ում որ պատահում է, չի հարցանում՝ ում տղեն ես,
Գլուխդ դարպակ էլ լինի, շատ խելօքների աղեն ես,
Օրէջօր ինձ կաւելագնես, եթէ իմ ասած զողէն ես,
Էհտիբարի վերարկու առ, ծածկի՛ր ձիգ գտակն փողի:

Զարկեալ, քեզի ո՞վ է յանձնել, որ դու ես վնուում այս դաւն,
Մայի՞քն, որ փողասէր չէ, ո՞ր ծովումն է նորա նաւն,
Այժմեան մարդիկն խելօք են, կու հասկանան փորիդ զաւն,
Իսնական ձեռիդ ման ես դամ, չես դանում զմակն փողի:

28.

Մարդկանց յուսալն անօգուտ է.

Է՞ր ես դու ինձի խարում, ո՞վ անհաստատ յոյս,
Ես չեմ առաջանալ օգնութեամբ մարդկանց,
Որով խղճմտանքս ժամանակ կորոյս
Պատուդն է նաշակում նա իւր արարմանց:

Շատ մի հողալ, տես, ո՞վ է քեզ ստեղծել,
Յայտնախօտութեամբ ես անունդ պղծել,
Սովորի՛ր գողանալ, խաբել ու կեղծել,
Որ լինիս սիրելի ազնիւ մեծատանց:

Որտեղ ծածկեալ բան կայ՝ քօլքն բանում ես,
Այնու բամբասանաց դատաստանումես,
Իշխանաց յամօթն յանկիմանում ես,
Այգպէս բերան ունիս՝ մի պահիր անսանձ:

Աշխարհն քեզ չի տալ, ինչ որ ուզես,
Տրեխորդ կուծաշլի, եթէ շատ վաղես,
Եթէ ունիս զանկուլթիւն աշխարհին սաղես՝
Նոր բնութիւն նարի՛ր, անցեալն էանց:

Խելքիցս հեռու է առակն բախտիս,
 Պատճառ, յանգիման է կրակն բախտիս,
 Յայնժամ շիշաւ ճրագն բախտիս,
 Որ ինձի մոռացաւ ազգրն Նաշարեանց:

Զարկեար, դու համբերիր, համբերն շահ է,
 Ինչ տեսակ որ ապրես, վերջինն մահ է,
 Մայրի՛ խոստումն աներկբայ պահէ՛
 Գուցէ նա լինի քեզ մայր երջանկութեանց:

29.

Մարդկու թիւնն մարդից ուղիւր, անուշ հոտն
 վարդից ուղիւր.

Թէպէտ ամեն ստեղծուածի անունն մարդ հողեղէն է,
 չողն զանազան տեսակ է՝ մէկ տեսակն ոսկեղէն է:

Անարժան մարդն իշխանութեան եթէ հասնի՝ պատահմունք է,
 Պատճառ, բնութեամբ տկար է, զարմանք չէ, ազնիւ ցեղէն է:

Մարդուն մարդկութիւն պիտի, որ մարդիք նորան մարդ ասեն,
 Սանդալն թէ հոտ չունենայ՝ մին հասարակ փայտեղէն է:

Ոմանք մարդ են աշխարհումս, և ոմանք մարդակերպարան,
 Մի՞թէ մարդկութեան շնորհքն մուրուքէն է կամ բեղէն է:

Ճշմարիտ է, որ երբեմն շունիցն դառն է ծնում.
 Լուսաւորին Գրիգոր չ՛մարդ Անակի տղեն է:

Դառն պտուղ էլ կուճարուի քաղցրապտուղ բաղումն,
 Դիփին քաղցր չեն անուանիլ, ասելով՝ Ֆլան բաղէն է:

Ոմանք ամօթներ շատ ունին, աշխարհն անյայտ է անում,
 Եթէ ես ասեմ աշխարհից, բայց դուք ասացէք՝ փողէն է:

Զարկեար, Մայրի՛ն տեսնում ես, որ կարօտ է աչաց լուսոյ,
 Վարուք, բարուք, բարի անուամբ շատ տեսանողաց աղեն է:

30.

Ո՛վ եղկելի բուլբուլ, ո՛վ սիրելի բուլբուլ.

Ի՞նչ անմխիթար լաց ես իլում, շատ քաշում ես դար,
 Ո՛վ եղկելի բուլբուլ.

Մի՞թեմ սա՞ է վայելչութիւն միշտ ու մուղարար,
 Ողորմելի՛ բուլբուլ.

Ճէ՛ր գարնանային եղանակին ինձում ես անճար,
 Ո՛վ սիրելի բուլբուլ.

Դժուար ցաւ է, որ սիրականից առնում է մին խար,
 Ո՛վ փարելի բուլբուլ.

Ընդէ՛ր ես լինում դու բեյբաֆայ վարդին ումիտվար,
 Ո՛վ ցանկալի բուլբուլ:

Քեզ պէտք է ասել էս աշխարհին յայտնի օրինակ,
 Էշխից հեռու մանգալ.

Ոչով չի տեսել սիրունների վարքն ասորժակ,
 Էլ պէտքը չէ սէր տալ.

Գեղեցկութիւնն միւրփաթի հետ միշտ կիլի ներհակ,
 Չիլնիլ եարբ խոշ հալ.

Շատ լսողն ճնց կ'տայ էլ մին եարի իղրար,
 Ո՛վ փարելի բուլբուլ:

Դու քեզ համար էն վարդի փուշից ժողովի մին թախտ,
 Բալբամ թէ չի ննչես.

Կողմն արևելեան լուսաղէմ կուփչի մին վախտ,
 Որ վարդերը փնջես.

Զգաստ կաջիր, որ խարն չի դայ քեզ թողի քամբախտ՝
 Զարչարվես ու տանջես.

Մեր հայր Ադամին խափող մութն դայու է անյաղթ,
էշխին չի եօժունչես.

Հինգ ըոպէի բունն բեզի տալիս չէ դադար,
Ո՛վ խղճալի բուլբուլ:

Վախտ կարգիր ու խնդս, նորանով եարիզ վախագնես,
Վախտ վարդին աղաչիր.

Վախտ փետուրներով խնդ արա, որ սիրտ ուրախագնես,
Վախտ սիրիր ու պաչիր.

Երբ խարն կուգայ՝ տեսնելու գոչնդ չի թօխագնես,
Երբէք մի թառաչիր.

Մանր ուղունկներով, անս, խարին արիւն շողախագնես,
Սպանիր ու խաչիր.

Թո՛ղ վարդն ասի՝ իմ եարբ զօչչադ է սիրահար,
Սարսափելի բուլբուլ:

Ամեն թարիֆդ Աքրահամի սրտին է մին դադ,
Կամ զաւն է զաւիզ պէս.

Քո ողբի ձէնից փախչում է, էնդուր չի գալիս բադ,
Որ նորան չի տեսնես.

Եթէ կարանաչիմ բաշելի՛ գանկանում եմ վադ,
Դարուզ անէիմ կէս.

Դու մի տարւոյ մէջ երեք ամիսն ես եարի մուշտադ,
Յետոյ չանես անտես.

Բաց ինձ զաւ ունեմ՝ աշուն, դարուն, ձմեռն ու ամառ,
Անպրծնելի բուլբուլ:

31.

Մ ու խ ա մ մ ա գ .

Լոյս ես լուսատու, լոյսդ անարժան էլաւ ինձի,
Վարդ ես հոտաւէտ, փնջելը բոյզան էլաւ ինձի:

Վա՛յ իմ քաշածին, որ բաժին այսքան էլաւ ինձի,
Խնդալի սէրդ՝ պատիժ գանազան էլաւ ինձի,
Ո՛չ դո՛ւ խղճագիր, ո՛չ այլ օղնական էլաւ ինձի:

Մուրվաթ չկա՛յ քեզանում բակեար, ո՛վ դայում անաստուած,
Որ դու ես վառել այս կրակն. ջուր մի փոքր անձ,
Ի՞մ սրտի մէջին հաղար տեսակ մուռմուռ ու կասկած,
Դու էշխի զինով զիշեր գերեկ ստրխոշ ու հարբած,
Ի տեղի մուրաղի՛ յոյսն օթեան էլաւ ինձի:

Ով տեսնում է իմ մոլորվելս՝ զաւս է հարցնում,
Սիրտս յօժար եմ դարտակելո՛յ լեզուս չի դարձնում,
Խղճմտանքիցդ հարցրո՛ւ՝ թէ ինձ է՞ր է կորցնում,
Զարմանք է սիրահարի բանն՝ չի մեռնում պրծնում,
Կենդանիս դժո՛խք, սա ի՞նչ դատաստան էլաւ ինձի:

Ինձի տեսնողն սարսափում է՝ կարծում է մեռեալ,
Լաւ է հողիս առնես, էլի կրկին կարենաս տալ,
Ախ, դու չ՛լինէիր աշխարհումս, իմ բաժին իղբալ,
Այլոց տուել ես վաչելչութիւն, դովլաթ ու կամ մայ,
Մին եար տուիր ինձ, նա էլ դաւաճան էլաւ ինձի:

Մըրիկ քամոյ պէս՝ ժանտաբեր է ամեն խաբարդդ,
Արագ նեաի պէս վերք է բագում տուած նուբարդդ,
Քեզ լաւ չեն ասում, տանջվում է այսքան սիրահարդդ,
Ե՛կ, նամո՛ւս արա, դարձիր առաջվան ճանապարհդդ,
Երբ շան ասեզի՛ զաւն պատասխան էլաւ ինձի:

Դու Զարիշարի պէս չես ճարելու նազի զիմացող,
Կամքդ կատարող, չի կշտանող, համըն իմացող,
Թո՛ղ Մայի՛թէ մօտ անմահ անուն, նա է մնացող,
Երբէք չի լինիլ սիրուններից դժոխք գնացող,
Այս լաւ տեսիլն նորումս այեան էլաւ ինձի:

32.

Վասն ծերութեան.

Խնդրելով, չառնելով էր չի բեզարում
Իմ ապառաժ և չամաչող երեսն.

Ջրհորի վերելից նայողի նման,
Երբ աչքն տեսնում է, քաշում է նէսն,

Եթէ ինձի լսես՝ դուս մի՛ եկ բունէն,
Էլ չկայ քեզ բաժին ոչովի տունէն,
Ցանկասէր հարսներն քեզ ո՞նց ընդունեն,
Ահա սպիտակել ա՛ մուրքիդ շատ կէսն:

Վատրդ երես եկաւ, պաթմիշաւ լաւրդ,
Ջրկուած եղան նման իդուր է՛ դաւրդ,
Նա չոկ վախտ էր՝ շուտ շուտ կառնէին զաւրդ,
Էլ չես կարալ լսել այն շատ «ապրէսն»:

Ճաշրդ կաթնով պիտի, կամ թէ խաշխաշի,
Ատամ չունես, ձեռ մի՛ ձղիլ լաւաշի,
Պառաւ արշին չի փոխարկվիլ նոր կաշի՝
Եթէ մանացունես Լոնդոն, Փարէսն:

Երանի էր այն վախտ, որ կուխօսիր նազով,
Ջահիլներն կուգային մօտրդ վաւղով,
Նիմիկ սաղ զիշերդ անջրջուր երազով,
Ինչպէս էն անձնախար վանքի տընտեսն:

Առասպել բան դուրս զայ շահիլ բերանէն,
Աղջկունքն խիտտ հազ կանեն այն բանէն,
Բերան կուծուն, քեզ ծաղր կանեն,
Եթէ դառնաս շնորհալի Ներսէսն:

Զարկեար, Մայիճն քեզ շատ է խրատում,
Ափսոս, նորա խօսքն դու չես զնահատում,
Է՞ր ես մենակ քո ձեռիցդ զանդատում,
Շատ ես տեսել աշխարհի մէջ քեզի պէսն:

33.

Պատահմունք նոր եղանակի.

Կարօտ աչքեր, մի լաւ նայիր, այսօր քեզ արժան են արել,
Նազելիքն հաւաքվել են տունդ չրաղվան են արել,
Էշխի զինով, ոչ թէ մինով, հարբաժի նման են արել:

Մէկն նողուլ, մէկն նուշ է, որից համ առնես՝ անուշ է,
Այս վարդերն առանց փուշ է, փնջողքն նշան են արել,
Համեստ նազով, քաղցր ափազով քեզ որդի մահուան են արել:

Ով որ սորանցից հազ չանի, աշխարհիցն ի՞նչ կու տանի,
Կեանքն հինգ օր է ինսանի, տեղն դերեզման են արել,
Անսէր մարդին, անհոտ վարդին, տես, ինչի նման են արել:

Էլ չեմ ասիլ ինձ խարել են, անիմաց նետիւ խփել են,
Անմեղ արիւնս թափել են, ձեռներն ալվան են արել,
Նախ բաշկը, յետ մաշկը մին նոր հրաման են արել:

Զարկեար, քանի ձերանում ես, օր ըստ օրէ սէրանում ես,
Էն ա, որ միշտ բերանում ես, Մայիճն դուշման են արել,
Ուղորդ են ասում, չեն բամբասում, չ'ասես թէ բոչկան են արել:

34.

Կայր մին քասիբ Մկաի անուն, բարեկամաց մէջին նկուն,
Պատահել էր դառն սպրուստի, կարօտ էր մին նոր հազուստի.
Ամեն օր կուգնայր ծմակ, նախ կու բերէր երկու շալակ,
Այն նախի փողով էն օրըն անց կու կենայր քաղցած փորն:

Մին օր մէջից տուն էր դալիս, ախ էր քաշում, դառն լալիս.
 Սատանան նորան պատահաւ, ճամբի մէջին խօսքի պահաւ,
 Ասաւ. «ով մարդ, էր ես լալիս, ի՞նչու չես իմ ձօտս դալիս.
 Ինչ կամենաս ինձնից ուղիք, այս բոպէին կանեմ հաղիր.
 Ոսկի, երծաթ, ձի կամ տափար՝ կունենաս քեզի անհամար.
 Ամենից մեծ իշխան կանեմ, վերջումն երկրի խան կանեմ,
 Միայն հետս եղբայրացիր, իմ մասլահաթովն կագիր,
 Պաս մի պահիլ, ժամ մի գնալ, քարոզ լսելուս մի մնալ,
 Ոչ տունդ մեռոն կ'աանես, ոչ երեսիդ խաչ կրհանես».
 Ծկտին ասաւ՝ «ես յօժար եմ, ինչ որ ասես՝ կ'կատարեմ,
 Եթէ լիացնես ինձ փողից, դու լաւ ես իմ ստեղծողից».
 Սատանան վազաւ մին տեսակ, զնաց բերաւ տասն քսակ,
 Ասաւ. «սա քեզի փող ձեռաց, առաւ մսխիր, ոչ թէ կամաց.
 Յորժամ ինձ կանչես՝ ձօտիդ եմ, միամտութեան զօտիդ եմ.
 Երբ որ տեսար պրծաւ փողդ, ճանաչիր քո փող տուողդ»:
 Էլի շուտով անչաչա եղաւ: Ծկտին շալակն աեղ թողաւ,
 Աչնպէս ուրախ տուն էր դալիս, որ աշխարհն տեղ չէր տալիս:
 Կինն տեսաւ մարդն ուրախ է, քօլ խօսածն աչ ու ձախ է,
 Ասաւ «այ մարդ, ի՞նչ կայ եարար, չէ՞ս պէլագել, խանի խարար,
 Դու չէիր ծիծաղիլ տարով, թէ՞ եկար ուրախ խարարով»:
 Ծկտին ասաւ իւր կնկանը, «ահա ինչ տեսակ է բանը,
 «Սատանի հետ եղբայր էլայ, նոր հարուստութեան մայր էլայ,
 Ինձ տուել ա տասն քսակ, մէջին փողեր տեսակ, տեսակ,
 չիմիկ ես զնում եմ բազար, առնելու եմ ինչ որ ուզար»:
 Գսակներինցն վեր առաւ, զնաց փողոց պարոն դառաւ,
 Առաւ, ինչ որ հարկաւոր էր, ուտելեղէն, կամ թէ շորեր:
 Վերջապէս հինգ օրվայ վերջին ապականաւ փողի մէջին,
 Քրտամբ չի աշխատած փողն ո՞նց կուխնայի մրսխողըն:
 Էլի կանչաւ սատանային, սատանայն եկաւ արխային.
 Ասաւ, եղբայր, պրծաւ փողն, էլ խարջերոյ չունեմ վաղն»:
 Կրկին տուաւ ինն քսակ, ասաւ զլսիդ շինիր պսակ.

Տունեղէնն պատրաստել էր, բարձեր, լէհերներ դարսել էր,
 Երբ տունն տեսաւ տան նման, կատաղաւ սպանդի շան նման,
 Հարիւր զուխ ձի ու շորի, տափար, դոմէշ, ոչխար սիւրի,
 Ամենայն բանիւ լիացաւ, իւր ապրուստին շատ հիացաւ:
 Ծկտին մի օր իւր մեծ տանն զուգրիլ էր, ինչպէս սուլթանն,
 Կանգնաւ պարզ հայելուն դիմաց, հարստացաւ կամաց կամաց,
 Տեսաւ կարճ է հասակաւն, սկսաւ մտածել այս գաւն:
 Իսկոյն եղբօրն միտ քցաւ, եղբայրն շուտ ներկայացաւ,
 Տեսաւ Ծկտին շատ մթնած է, ունքերն խիստ կախ քցած է,
 Ասաւ. «եղբայր, ի՞նչ է գաւդ, ո՞ւմ հետ է պատահել դաւդ.
 Ծկտին ասաւ. «իմ եղբայրս, քեզի մատաղ հայր ու մայրս,
 Գիտե՞ս քեզնից ինչ եմ ուզում, բօյրս կարճ է, շոր չի սաղում.
 Անչաղթ պիտի մին ճար անես, իմ կարճ բօյրն երկար անես».
 Սատանան ասաւ. «սիրելի, կարող ես քիչ համբերելի.
 Գիտե՞ս մեր այս երկրի խանն ունի մին լաւ աղջիկ տանն,
 Վաղն զնալու եմ ձօտն, կու բռնեմ նորա ձախ ոտն,
 Աղջիկն կուլինի դիւահար, կու տանջեմ նորան չարաչար,
 Դու, հմուտ կախարդի նման, եկ, կանգնիր խանին յանդիման,
 Ասիր, ես այն դիւահարին փրկիչ եմ, յաղթելով չարին:
 Յորժամ եկար աղջկայ ձօտ, բանն վերջացուր կարնառօտ.
 Դուներն ներսիցն փակիր, աղջկան ապտակով թակիր.
 Ես դուս կուգամ նորանիցն, նա կամաչի իրանիցն.
 Դու մեծ պարգևներ կ'ստանաս, ամենի հետ կու դօստանաս,
 Յետոյ մին իւր կտամ քեզի, այն իւրիցն փոքր լրդի,
 Բօյրդ կանի իբրև չինար, տեսնողն կասի բախտաւար»:
 Սատանան, ինչպէս որ ասաւ, վաղն զնաց, դործն սկսաւ.
 Պէլագաւ աղջիկն խանի, ո՞վ էր կարող դեն հանի:
 Ծկտին լսաւ այս համբաւն, թռչում էր, ինչպէս կաքաւն.
 Գնաց, հասաւ մեծ պալատն, խօսաւ սատանի խրտան,
 Խանին էնպէս յօս էր տալիս, որ աչքերին լոյս էր տալիս.

Ծկտին զնագ աղջկայ ծօտն, տեսաւ կապած ձեռն ու ոտն,
 Դռներն ներսւից փակաւ, ողորմելոյն քացով թակաւ.
 Երկու կողմանց զաւն յաղթաւ, սրտիցն էլ եղբայրն ճխտաւ.
 Աղջկայ մարմինն սառաւ, հոգս զլիսին էլաւ, մեռաւ:
 Երբ խանն այս լուրն լսեց, զլուխն քանդել սկսեց,
 Կախարդին բերին քաշէ բաշ, մինչի գալն իլաւ հալէմաշ:
 Խանն ասաւ. «անպիտան դագան, մի՞թէ քեզանից չմահ ուզան,
 Ինձ թողագիր անգաւակ, բախտս քցար խոր հորի տակ:
 Հրաման տուաւ դահնապետին. «տարէք այս լիբբ չար ագէտին,
 Մին չինարի ծառ սրեցէք, սորա տակիցն խրեցէք,
 Որ հասնի մինչի բողաղն, վարդապետի ասած խաղն.
 Երեսն կեղտով շաղախէք, փայտն փողոցի մէջ թաղէք,
 Մինչի որ շան պէս սատակի, ապա թողէք Ֆէչնի տակի»:
 Մէկ փայտ բերին քառսուն կաղի, շոնտն սրեցին նման փաղի,
 Ծկտի-բէկին շամփուրեցին, փայտն գետնի մէջ փորեցին:
 Մինչդեռ նա չէր մեռել, սաղ էր, տեսնողին անտուտ ծիծաղ էր,
 Սատանան եկաւ փայտի տակ, ձեռին մին երկաթի մահակ,
 Հարա՛յ տուաւ. «եղբայր Ծկտի, ի՞նչ եղբայր քեզ այգպէս կօգտի,
 Ի՞նչպէս ա բօլրդ, սիրելի, կարո՞ղ ես ասող վեր բերելի.
 Ո՛չ թէ Դաւրէժ կամ Թէհրանն, պարզ տեսնում ես չնդստանն.
 Բօլիդ մտիկ տուր, հա՛ղ արա, էլ մի գանդատվիր, տաղ արա»:
 Կամ մարմնով կորաւ կամ հողով, այնպէս մնաց Ֆէչնի տակով:
 Շատ կան այժմեան աշխարհումն, աստանի եղբօր շարումն,
 Սուրբ լուսաւորչին մոռացող, կամ լոյս օրէնքից հեռացող,
 Երբ սատանան նարաւ միջոց, քաշելու է մին օր փողոց:
 Թէպէտ խօսքիս ձեռն վէպ է, բայց ոմանց գործին հանդէպ է,
 Ինչպէս Շամախին հայաբնակ, այժմոյս եղել է խաչտառակ.
 Երախալքն անմկրտութիւն, կամ մեռեալքն անսրբութիւն:
 Ով կարդալ զիտէ շատ ու քիչ՝ նորան կոչում են քարոզիչ,
 Իրանցից երգ են չօրինում, ո՞վ զիտէ, ի՞նչեր են շինում.

Չե՛մ ուղղում ամենն բացել, կարդողն վաղ է հասկացել,
 Մայրքին էնդուր եմ սիրում, ամեն տեղ անունն զրում,
 Որ ժառանգ է լուսաւորչի, հաւատացեալ աղզն փրկչի.
 Զարկեալ, դու ամենից չար ես, բայց քո Աղզին օգտակար ես,
 Ով ոք փոխի իւր հաւատն, կուլինի չարեաց արմատն:

35.

Ա շ խ ա ր հ ի վ ե ր ա յ .

Հերիք ա, ոխ պահար այսքան ժամանակ,
 Անարուռ, անհայեա, անամօթ աշխարհ.
 Մի՞թէ ապագիք քեզ մեղր են ուտագրել,
 Մեր աղզն տուել ա աղու դահրումար:

Քեզի տեսնե՛մ՝ սրտիդ ժանդախոց հանես.
 Էլի չար սե՛րմ ունես մեր մէջին զանես.
 Արդեօք մին բան մնաց, որ դու մեզ չանես.
 Նոյնն քեզ նորոգաւ մեր ջանի համար:

Նեղութիւն էր տալիս քեզ քաղաքն Անի,
 Քանդար, մէջքն կոտարս սուրբ հայաստանի,
 Աստուած իրան ձեռօք քո աչքդ հանի,
 Զրկվես դու լուսիցդ, նստես միշտ խաւար:

Մի՞թէ Երասխումն ինքդ լողացար,
 Դիւակերպ կուռքերից է՛ր չի նեղացար,
 Նամուսն մեր Ազգի մէջից զողացար,
 Ծնար չար, սնար չար, տանջվես չարաչար:

Նորումս մին քանի ազգասէր իշխան
 Դէպի սէր հայրենեաց աշխատակից կան,
 Ճարում ես տեսնելուս նորանց միաբան,
 Միտք ունես այս գործն էլ թողես անկատար:

Որքան սուրբեր ունիմք մենք քո փորի մէջ,
 Խորը քանդիր, ինքդ կուրնկնես հորի մէջ,
 Մին օր ձեռս քնկնես մի խոր ձորի մէջ,
 Այնքան ձե՛ծ տամ քեզի՛ լինես զիւսհար:

Մայի՛ճի աչքերից լոյսն քաղեցիր,
 Դազվես ինքդ, ինչպէս նորան դաղեցիր,
 Աղբո՛ւ ճար ասեցին, դու խոր թաղեցիր,
 Սատանան քո հետն անի միշտ մաղար:

Զարկեարն եթէ որ քեզի չի ճանանչի՛,
 Անունդ է՛ր պիտի բօղ պառաւ կանչի,
 Ի՞նչ ես տուել, որ քեզանից ամանչի,
 Շամախի քաղաքից քցել ես օտար:

36.

Ս տ ա խ օ ս մ ա ղ դ ի վ եր ա յ .

Հալած արճին պիտի ածել բերանն՝
 Ինչ մարդ սովորութիւն ունի ասել սուտ,
 Կուղարդարի, ինչպէս տանկաց զուրանն,
 Հողոյ կամ թէ մարմնոյ սուտից լինչ օգուտ:

Խոյ մատաղ խոստանայ, չի մորթիլ մին հաւ,
 Միշտ լաւին վատ կասի, կամ թէ վատին լաւ,
 Եթէ դատկին ասի «Քրիստոս չարեաւ»,
 Ինքն իրան ասածն կու կարծի անտուտ:

Ընկերին չի ասիլ ո՞ր օրն է պասն,
 Ինչ առնես նորանից՝ հետն է վնասն,
 Ոմանք կասեն ստախօսից մեծ մասն
 Գոչնն զեղին կուլինի, աչքերն կապուտ:

Սուտ ասողն չի լինիլ մին հօրից ծնած,
 Ուրեմն ծնողքն սուտով են շինած,

Առաւօտ վեր կազաւ երես չի լուսազած՝
 Գարնանային ցօղն կու շինի կարկուտ:

Սուտ երազ կու տեսնի աչոց անուանի,
 Իբր թէ նա ճաշին իրան տուն տանի,
 Մինչև ՚ի երեկոյ քանի սուտ հանի՝
 Համարում է նա օրեկան եկամուտ:

Խոստովանքին ինչ որ հարցնի տէրտէրն,
 Կու քաղի մեղքերի մէջից անխէրն,
 Օրինակ, Մայի՛ճի մեծ սանահէրն
 Սուտն կասի, հազաւ երդում կուտի շուտ:

Սուտ ասողին յայտնախօսն է սպանում,
 Այն բռաբէին պատասխանն է ստանում,
 Զարկեար, դու էլ թուլի զուշ ես խոստանում,
 Որն որ չունես մին չալ աղաւի ճուտ:

37.

Գ տ ա կ կ ա ղ ո ղ , դ ու մ ա ղ դ ճ ա ը ի ' ը , ա պ ա ն ս տ ի ' ը
 դ տ ա կ կ ա ը ի ' ը .

Մարդ կայ՝ մարդ է աշխարհու՛մս, մարդ կայ՝ մարդակերպարան է.

Մարդ կայ՝ անղգայ պատկեր է, մարդ կայ, ամեն բառն բան է:

Մարդ կայ՝ լաւ խօսալից պաս ա, մարդ կայ՝ մարդկութեան ան-
 հաս ա,

Մարդ կայ՝ էշից քիչ պակաս ա, մարդ կայ՝ նորան թարի՛Ֆ կանէ:

Մարդ կայ՝ փողով մարդ է գառել, մարդ կայ՝ չունի, վիզն է ծուել,

Մարդ կայ՝ հողսից սիրան էս առել, մարդ կայ՝ պատն զառնշան է:

Մարդ կայ՝ սէրից բէխաբար է, մարդ կայ՝ յատուկ սիրահար է,

Մարդ կայ՝ էարն դարդուսար է, մարդ կայ՝ սէրն անհիման է:

Մարդ կայ աւազակ պաս պահող, մարդ կայ պասակեր մարդ շահող,
Մարդ կայ քարոզիչ ազահող, մարդ կայ հազուստից նման է:

Մարդ կայ տավար՝ առանց պողի, մարդ կայ՝ չոր գլուխ կ'խողի,
Մարդ կայ լավիող նման խողի, մարդ կայ՝ պատուոյ անարժան է:

Մարդ կայ հագի բոռ՝ շատ ուտող, մարդ կայ՝ նոր հազուստն
ատող,

Մարդ կայ գտակն կարկատող, մարդ կայ՝ խղճմտանքն տան է:

Մարդ կայ իմաստուն՝ ժանկ չունի, մարդ կայ՝ ժանկ ունի,
չանկ չունի:

Մարդ կայ՝ անուանը դանկ չունի, մարդ կայ՝ լուրն չնդատան է:

Մարդ կայ՝ սնունդն է անառակ, մարդ կայ՝ վաթսուն ամեայ
քուռակ,

Մարդ կայ իւր ազգին հակառակ, մարդ կայ՝ հողով պար-
տական է:

Մարդ կայ՝ վասն մեր մարմնացաւ, մարդ կայ՝ Աստուած էր,
մարդացաւ,

Մարդ կայ՝ ընդ աշմէ չօր կացաւ, մարդ կայ՝ սուրբ Երրոր-
դով թիւն է:

Մարդ կայ Զարիւստ, ունի Մայիճ, մարդ կայ՝ հազար բերան
հայիճ,

Մարդ կայ՝ մարդոյ մին ընծայիւ՝ մարդ կայ՝ շահող օգնականէ:

38.

Մ ու խ ա մ մ ա գ .

Մին գիշեր, քաղցր քնուծն, տեսայ ինձ մօտ մարդիք եկան,
Ղաթարով նստան տունուծն, պատրաստեցին շատ լաւ սեղան:

Հարցրի՛ր զամէք զուր սր տեղէն, ո՞ւմ ազգիցն էք, ո՞ւմ գեղէն,
Կարծեմ՝ զուր շատ լի էք փողէն, էղբան բաց էք վարդի նման:

Տեսամ ողջով ուրախ սրտի, չեն պատահած ցաւի, դարտի,
Մէկս մէկու ալլահվերդի՛ խման կենացներ զանազան:

Ասան մենք ենք սիրուն բախան, չի լինիլ մեր ախուր վախան,
Շատ չիմարներ կհանենք թախան, շատ խելօքներ կանենք անբան:

ԼԱԼԱՅՈՎԻ ԲԱԽՏՆ ԱՍՍՑ.

Մինը տեղիցն վեր կացաւ, առիւծի պէս բերան բացաւ,
Միլլիօններից սօհբաթ քցաւ, ասաւ. «ունէ՞ք, բերէք մէյդան»:

ԵՆՍ ԼԱԼԱՅՈՎԻ ԲԱԽՏՆ ԱՍՍՑ.

«Ես եմ բախան Լալայովի, ինձ հետ ոչով չի դալ դովի,
Ո՛չ դովլաթս կտամ ծովի, ո՛չ կը տխրեմ ես չաւխտեան»:

ՆԵՐՍԵՍՈՎԻ ԲԱԽՏՆ ԱՍՍՑ.

«Ձեզանից պակաս չեմ փողուծն, շատն թաղել եմ հողուծն,
Կէսը պահած եմ սանդուղուծն, օր բսա օրէ կառնեմ նշան»:

ԿԵՕԿՁԱՅՈՎԻ ԲԱԽՏՆ ԱՍՍՑ.

«Ես լաւ կուտեմ, լաւ կուծաշեմ, նոր ծաղկել եմ կանանչուծ եմ,
Ամեններիդ նանանչուծ եմ, Տէրն է միայն ինձ պահապան»:

ԼԱԶԱՐՈՎԻ ԲԱԽՏՆ ԱՍՍՑ.

«Բնաւ պատիւ չեմ տալ փողին, սանդուղներով օսկի դեղին,
Տէրն ողորմի փող թողնողին, էնքան ունեմ, ինձ բաւական»:

ԿԱՃԿԱՃՈՎԻ ԲԱԽՏՆ ԱՍՍՑ.

«Առաջ ինչի՞ տէր էի, բայց փողի հետ շատ սէր էի,
Ես ձեզ հետ ընկեր էի, թէ եղբայրս չլինէր Թուծան»:

Հարցրի՛ր բաս իմ բախան ո՞ւր է, կարծեմ ապրելս զուր է.
Ասան՝ քո բախան ախուր է, գիշեր գերեկ քնած, պիան:

Խնդրեցի որ բախտիս կանչեն, բայց ատենեն մերկ՝ ամանչեն,
Մեծ մարդիկներն թող նանանչեն, ամեններն մին ընչ փող տան:

Տեսայ մինն նոր գալիս ա, ձեռին բռնած դարդակ ըխայ,
Ասան հրէս բախտդ էս ա, առանց շապիկ, առանց փոխան:

Ասամ իմ բախտին. քեզի բարով, ի՞նչ ես քնում էսքան տարով.
Ասաւ չի լինիլ էշին զօռով եահար զնես, իլնի քոհլան:

Ասամ երեսդ պարզ լինի, խորակդ հունձափարդ լինի,
Մին ընչ փող տուր, թող խարշ լինի, բայցայ խորշեմ զնամ Շիրվան:

Ասաւ, կորիր, կորիր պլուտ, փորիդ տակն ա ընկել չիւլդ
Աստուած կարել ա ուսուլդ, փող չես պահում լինես իշխան:

Ասամ, էս դռնիցն հեռացիր, մինչ չաւիտեան քնած կացիր,
Գնա ինձի շատ մոռացիր, ինձնից բէթար լիւթ ես, իւրեան:

Աքրահաճն եմ, խաղ կանչելով, բոխճաներ չեմ կապել թելով,
Անփոխան բախտին խնդրելով, պիտի լինեմ քեզի արժան:

39.

Մ ու խ ա մ մ ա զ 'ի վ եր ա չ ծ ա ծ կ ե ա լ խ ո Ր հ ր դ ո յ .

Մին ուրախ բիւլբիւլ ունեմ, կարդում է շախ շախ ամեն օր,
Դուրս է գամ վարդի մէշից նա շողաթաթախ ամեն օր,
Ես նորա ծաչնի սիրով զուարթ եմ, ուրախ ամեն օր,
Ձովղ ունեմ բաղի մէշին անվախ ու անահ ամեն օր,
Ինձ նման սիրահարի բանն չի գալ ծախ ամեն օր:

Բիւլբիւլիս աչքերը շուխ, ունքերը սեւ, անեղ տեսակ,
Մազերն մէշքիցը դուս, ամեն ուսին ինն հիւսակ,
Սաղ է գամ կապուտ մովն, մէշքը նաշիփ, բարձրահասակ,
Սյղպէս անփուտ թաղուհին ո՞նց չունենայ զլիտոյ պսակ,
Չեմ ուզում, որ նա քաշի աշխարհումս անի ամեն օր:

Բիւլբիւլիս մանդալ ունի, որ բոլոր աշխարքին աժի,
Համբերութեամբ խօսայն՝ թաղաւորաց փառքին աժի,
Հողեղէն ճնուեղ զոլով՝ հրեշտակաց շարքին աժի,
Ձուլէյխեն ասեմ սորա հարիւրից մէկ վարքին աժի,
Ուխտաւորքն տեսութիւն չեն գալիս նահախ ամեն օր:

Բիւլբիւլս այս բահարին ինձի ուժիփար է արել,
Թէ գիտեմ աղերսալս նորան փոքր քար է արել,
Ներիք է բաղումանն ինչքան ահուզար է արել,
Չափարից բաղի մէջն ոսոխ նանապարհ է արել,
Տեսնում եմ վարդանոցից պակսել ա մին թախ ամեն օր:

Չարկեար, ի՞նչ ձեռնատուր է վարդի մօտին շատ ճնալը,
Թէ պատահաւ՝ նասիք է, շահտ արա փունջիլ զնալը,
Մայի՛ճ խխտ ատում է սէրութեան դուռն բանալը,
Ներիք ա, ինչ քաշում ես մինչ փափաղդ ստանալը,
Եթէ միշտ մօտն մնաս՝ քեզի կասի «թանթախ» ամեն օր:

40.

Գ ո վ ա ս ա ն ք հ ո գ է ա ո ղ ի լ Ֆ եր ի վ եր ա չ ա ս ա ծ .

Մի թողիր մէկ մազն պակսի, ինձ համար կեանք է զիլֆերդ,
Նորա վարպետն է ինքնագով, անզովասանք է զիլֆերդ:
Երբեմն այնքան խոնարհ է, ընկնում է ոտանդ տակըն,
Երբեմն զլիսից հաւարված՝ թաղ և պարծանք է զիլֆերդ:
Քննելով նորան օրէ զօր՝ մարդոյ միտքն մոլորվում է,
Թարգմանելոյ հնար չի գայ, ի՞նչ շարադրանք է զիլֆերդ:
Միայն քեզ մօտ եմ մեղաւոր, ո՞ւմանից խնդրեմ թողութիւն,
Յամենայն ժամ թողես հիւսեմ, ապաշխարանք է զիլֆերդ:
Ո՛չ առնել կուլինի, ո՛չ ծախել, ոչ զինն իմանալ են կարող,
Կենդանութեամբդ վայելես, անզին ապրանք է զիլֆերդ:
Արեզական խաւարումն նոր ենք հասկանում ինչով է,

Զի երկնային հեղինակին յայտնի տանջանք է զիլֆերդ:
 Ինչքան խելադար ենք տեսնում՝ զիլի բեղանից են դանդատում,
 Երբ հոյորած դուրս ես գալիս, ո՛հ, զարհուրանք է զիլֆերդ:
 Այսքան տարուայ ուխտաւորին՝ ժողից դրախտան ցոյց չի տամ,
 Այսինքն նահախ են ճգնում, կորուսման վանք է զիլֆերդ:
 Տասն ու հինգ տարեկան վախտին՝ մեղք է նորանց սե հաղնելն,
 Ո՞նց հաւատացնեմ Մայիֆին՝ թէ սուրբ կուսանք է զիլֆերդ:
 Հիւանդին եթէ հոտ կպնի՝ կասեն թէ ցաւն կրկնում է,
 Զարիէարն չի տեսնէր՝ լաւ էր, սրտամաշանք է զիլֆերդ:

41.

Մայիլ եմ, ես՛ր, աչքերիդ, սարմասաի խուճար աչքերիդ,
 Չեմ գիտում ֆիքըր անկող լի՛նչ է եարաբ չար աչքերիդ,
 Մին չանս ֆէշքէշ կուտամ նորահաս, նուկբար աչքերիդ,
 Ի՞նչ կիլէր կեանքիս վերէն անիր ըխտիար աչքերիդ,
 Դու մին ես աշխարհումս, չկայ բարեբար աչքերիդ:

Աչքերիդ մտիկ տայում՝ էշխ ու հաւաս շուռ է գալիս,
 Կշտանալս երբէք չիլում, օր ըստ օրէ դուր է գալիս,
 Թերթեունքդ տեսնելու՝ նեա հրեղէն սուր է գալիս,
 Երբեմն լաց իլնելով՝ անմահական ջուր է գալիս,
 Կեան ուրախ է, կեան տխուր, չունի էհիթիբար աչքերիդ:

Եթէ պատկերահան բո աչքերիդ թահրն բաշի,
 Պէտք ա որ հարիւր տարի աշխատելով կեանքն մաշի,
 Տա՛ր նրանց տուր զառաֆի, ինչ է անում ամեն նաշի,
 Տես, ինչպէս չափահիր ա, ծանր գնով անթրաշի,
 Զորանայ էնպէս լեղուն, որ նա կասի չար աչքերիդ:

Ովին որ խոշ մտիկ տաս, նորա սրտին շաղ է գալիս,
 Ինձ ամեն մտիկ տայլ հարիւր շուռա դսղ է գալիս,
 Սուրբերին ոչխար կիլի, բեղի շան մատաղ է գալիս,

Երանի էն սհաթին, երեսդ ծիծաղ է գալիս,
 Կպոււմ ա երկաթ սէրս անդամանդի բար աչքերիդ:

Աքրահամն եմ, տեսնելու հէնց եմ գիտում շանլաթս ա,
 Ունքերիդ բանդիվան եմ, ինձ բռնել ա, սէշեադս ա,
 Էն ցաւն, որ ինձ ունեմ, բո աչքերդ իմ դարդս ա,
 Սիրտուզանիս փափազս, իմ մաթլաբս, մուրադս ա,
 Ուզում եմ միշտ ծառայեմ, զուլ իլնեմ խոնարհ աչքերիդ:

42.

Մխիթարական նամակ 1).

Մէկ լաւ նայէք վաթսուենուչորս նահանջ թուոյ վատ գործերին,
 Որ նա խոցաւ անխիղճ բարուք Շամախուոյ հայ իշխաններին,
 Թէպէտ պարսեմք խոստովանիլ թէ կատարաւ կամքն աէրին,
 Լացն, կոծն, ափոտսալն սրտառուչ է անհամբերին,
 Տացէ նորանց հանգիստ հողուոյ երկնաւոր դատողն վերին:

Ծառն զօրեղ է արմատով, աղզի պարծանքն է իշխանն,
 Որոց երկուսն վախճանեցան մեծատոհմ Լալայեանց տանն,
 Առաջինն՝ Աթանէս աղան, որ մինչի ցօր մահուանն
 Ազգին սիրեց, օգտեց, ինչպէս Մամիկոնեան քաջ Վարդանն,
 Աււոյ, աււոյ, հազար աււոյ այս իշխանութեամբ անթերին:

Երկրորդն՝ Մարգարէ աղան էր, մին երազ ազնուական,
 Հանդիստ բարուք, համեստ փարուք, իշխանաց մէջ յոյժ դովական,
 Աղբատասէր, ողորմասիրտ, խաղաղարար և պատուական,
 Դու, նահանջ թիւ լախառն ու շրո, սե երես զնաս պարտական,
 Որ մէկ տանից երկու առիւծ մատաղ տուիր արծիւներին:

(1) Հանգուցեալ Զարկեարը, երբեմն երբեմն դրամական կարօտութեան մէջ եղած ժամանակ, զիմելիս է եղել այս եւ այն անձներին, իւր բանաստեղծական նամակներով եւ բաւականացել: Ահա այն նամակներից մինը, որ, իմ խնդրանացս համաձայն, ուղարկել է ինձ Շամախուց, Զարկեարի հայրենիքից, մեծապատիւ պ. Աղեքսանդր Լալայեանցը:

Գ. քան. Գրիգորեանց:

Իշխանաց ձանն ազգի համար անբախտութեան դուռն է բանուծ,
Ափսոս, որ մենք կուրացել եմք, այս պատիժն չենք հասկանուծ,
Երբ ընկնուծ ենք նեղութեան մէջ՝ որդուց պէս են մեզ պահպանուծ,
Ազգն անիշխան, մարդն անաստուած՝ միւսնոյն է ամեն բանուծ,
Մեր Հայ ազգն է միայն ուզող չորանայն պողաբերին:

Հանգուցեալ Աթանէս աղին հողով պարտեմք հայր անուանել,
Որ նա դասաւորաց հետն կեղծելով չէր միաբանել,
Քանի բանդուծ լինողների շղթաներն է ոտից հանել,
Դաւանանաց աչքին փուշ էր, Աստուած էր նորան հաւանել,
Ի հարկէ ճշմարտախօսն ընդդէմ է կեղծաւորներին:

Իշխան կայ որ՝ ազգի համար երկրաշարժին ամուր սիւն է,
Որտեղ աղբատաց նեղագնեն՝ նորան օգնելոյ արթուն է,
Իշխան կայ որ՝ Յուդայի պէս զործն միայն մատնութիւն է,
Ամենայն ժամ կաշառակեր դատաւորաց տանն քուն է,
Առաջինն երկրորդի մօտ՝ նման է զոհուած սուրբերին:

Այս եկեալ զարնան բիւլբիւլն անդադար աղա վայ կասի,
Քանզի նորանք արժան էին դասուելոյ իշխանաց դասի,
Իշխանական շնորհքներն ոչ փողի են, ոչ լիբասի,
Ճակատաղիրն էր ցոյց տալիս ազնիւ Աղա Աթանասի,
Ըստ սուրբ զրոց՝ Աստուած նորան ստեղծել էր իւր պատկերին:

Լոյս արեղակի խաւարուեց, օրդ սեւացաւ, Շամախի,
Անկաւ քաղաքիդ զերտնն, չարն լիացաւ, Շամախի,
Բնակիչքդ Լուսաւորչի դատրն չիմացաւ, Շամախի,
Մանկուներդ անտէր մնացին, Աստուած բարկացաւ, Շամախի,
Այսուհետեւ կհասկանաս լաւն ու փառք, չարն ու բարին:

Աստուած մեր հայր Աբրահամին բազմացուցանել խոստացաւ,
Այն օրհնութիւնն բերող հողմն՝ նախ Լալայեանց դուռն բացաւ,
Որով նորանց ազգի մէջին արական սեռն բազմացաւ,

Որդուովք, թուամբ, հարստութեամբ, զանազան փառօք լիացաւ,
Բարի սերմն բազմանալով՝ լիացոյց բարեբեր տարին:

Այժմս երեք ամուր եղբարք նորանց հաստատուն տեղակալ,
Մեծ իշխան Աբրահամ 1) աղան եղբայրասէր, խնամակալ,
Բարեհուշակ Քէորդ 2) աղան՝ ժիր զանձապետ և զորձակալ,
Նորահաս Կարապետ աղից ո՞վ չէ արդեօք շնորհակալ,
Սէրն առատութեան նիւթէ ի մէջ եղբարց կամ ընկերին:

Ինչ տուն ունի սէր բնական, այն տունն միշտ հիմնաւոր է,
Անուն բարի, անմահ, անզուժ փուշ աշխարհն անցաւոր է,
Վասն որոյ քաջ իշխանաց ձանն զգալ հարկաւոր է,
Ամեն բերան ողորմի տալ, կամ ափսոսալ պարտաւոր է,
Կենդանին մահ չի հասկանալ, թէ չի տեսնի անցաւորին:

Մխիթարիչդ ամենայնի, տուր փոխարէնն այս տխրութեանց
Ուրախութիւն տասնապատիկ, ըստ կամաց քոց անցեալն էանց,
Ոչ պակասի չայսմ հետէ ճիւղ ի տանէն տեսրդ Լալայեանց,
Որպէս հասեր արագ թեօք ի մէջ հրոյն երեք մանկանց,
Որոյ լուրն ուրախութիւն լինի Աբրահամ Զաւլեարչն:

43.

Բ ա ժ ա ն ու ճ ն .

Յեա այսու բարեաւ մնաս, ո՞վ մեծագին ալ սիրական,
Աշխարհն ինձ ատելով՝ թողնուծ է մէնակ, սիրական,
Տալիս են խիստ ահամայ շոկութեան բաժակ, սիրական,
Ո՞վ մեղի անէժք տուաւ՝ ընկնենք փոթորակ, սիրական,
Պիտի անյաղթ զիմանամ մի առժամանակ, սիրական,
Որտեղ կայ քաջ սէրութիւն, չարն է ներհակ, սիրական,
Օրհասին ո՞վ կարող է կանգնիլ հակառակ, սիրական:

Պատահմունք է սիրելն, հաստատ մնալն դժուար է,
Բամբասանքն կտակ է, բայց հասկանալն դժուար է,

(1, 2) Այժմ հանգուցեալք:

Անվայել բարեկամին Կեանք բառը տալն դժուար է,
 Անուանդ վատ լսելուս ինձ դիմանալն դժուար է,
 Մոլորված ա՛խ քաշելով Ֆիքր ու խիալն դժուար է,
 Պահելն սրտամաշանք, թողնել, զնալն դժուար է,
 Քաշողն կու հասկանայ շոկութեան կրակ, սիրական:

Անսասան սէր պահողն՝ այլոց հեան սէր չունենայ,
 Սրբակաց աղաւնուց պէս չի փորձած՝ ընկեր չունենայ,
 Հաւատարիմ ծառային երկու իշխող տէր չունենայ,
 Կեղծելով կեանք վարողն՝ բնական պատկեր չունենայ,
 Անուշահոտ ծաղիկն՝ երկու բռանկ թէր չունենայ,
 Ուրացող սիրականն՝ վերջի օրուան խէր չունենայ,
 Արարծունքն կու մնայ աշխարհին առակ, սիրական:

Իու նախ կեանք կու մաշես, մին ինձ նմանն չես նարիլ,
 Պարզ անուն կորցնելով՝ միշտ միաբանն չես նարիլ,
 Ի՞նչ սիրոյս պէս մշտակաց՝ քո սրտի տանն չես նարիլ,
 Կափտոսես այն ժամանակ, այժմեան նշանն չես նարիլ,
 Յանկացող շատ կու նարես, քեզի արժանն չես նարիլ,
 Հանգիստիս վերայ զայլով, էլ ի՞նչ տապանն չես նարիլ,
 Կու պատմես ասածներս այլոց օրինակ, սիրական:

Թողնելն ինձ մուռմուռ է, համբերելն անհնար է,
 Այս առարկին մին վե՛ր չեմ նարում, միաքս տկար է,
 Ինձ ասէք, Աստուած սիրէք, ո՞րն բարի, ո՞րն չար է,
 Հողածին մարդ չի քաշած, թիւ վերացս անհամար է,
 Նիւթն ինքնին մահադեղ, հոտն կասես սուսամբար է,
 Վերջապէս այսուհետե ինչ որոնեմ, անկատար է,
 Լող տալով ի՛նչ օղուտ է, թէ ծովն է անտակ, սիրական:

Ի՞նչ սէրն անդադար էր, թէ վարքդ առատ չի լինէր,
 Իդ՞ն այսքան չէր ա՛նիլ, համբերն արձատ չի լինէր,
 Մխալմունք չէր պատահիլ՝ զանկացողքդ շատ չի լինէր,
 Թէպէտ մեր քաղցր սիրոյ վերջը պիտէր վատ չի լինէր,
 Լուրն անյայտ կու՛մնար, զորժիդ համեմատ չի լինէր,

Իմաստնոց առակներն մեզ եթէ խրատ չի լինէր,
 Վաղուց ինձ մորթել էիր անսուր, անդանակ, սիրական:

Լալով ինձի չես խաբիլ, կանանց խորամանկութիւն է,
 Փախչելն մարդախափէն՝ Աստուածային փրկութիւն է,
 Ձեզ հաւատ ընծայելն ո՞վ չի ասիլ մանկութիւն է,
 Մէկ սիրով վերջանալն՝ մարմնոյ չիմար զանկութիւն է,
 Երկու լեզուանի եարն՝ աշխարհաւեր բարկութիւն է,
 Հեշտասէր բարեկամի անուեն անյարգութիւն է,
 Ո՞նց կարէ խոցուած լեզուն խօսալ համարձակ, սիրական:

Զարկարն քեզ պէս սիրունների հազարն տեսած է,
 Աշխարհն պտոյտ զայլով, նահլաթի քարն տեսած է,
 Ով զեղեգիկին հաւատի, նա իւր պաշարն տեսած է,
 Կուսահաց վանք է մտած, էլի զարարն տեսած է,
 Այս կակուղ առուուուրն միտի բաղարն տեսած է,
 Անբանի տեղ փչանող, կամ խեղդարն տեսած է,
 Արժան է խօսածներն համարել կրակ, սիրական:

44.

Ա. ո. ն ա մ ա կ ն ա ս ա գ ե ա լ.

Նամակ, իմ բարեաւս տա՛ր սիրականիս,
 Աղաչելով, զաւն առնելով, սիրելով.
 Ասի՛ր վե՛րուն տայ ի՞մ զատաստանիս,
 Խնայելով, ողորմելով, ներելով:

Նամակ, եարիս ասի՛ր՝ չար մարդկանց սեռն,
 Հաւատ չի ընծայի, ծնել է նեռն,
 Թո՛ղ զայ ի՞մ պատանս առնի ձեռն,
 Ափսոսալով արտասուելով, կարելով:

Նամակ, պատմիր եարիս քո տեսած օրս,
 Ի՞նչ այս չարչարանքն ու նեղութիւններս,

Մարմնոյս մէջին ծածուկ հալվաւ ոսկորս,
Համբերելով, զիմանալով, լռելով:

Նամակ, դու էլ արդեօք կարող ես ինձ պէս
Լերթակեր ցաւերս ըստ կարգին պատմես,
Պատճառն ի՞նչ է, մէկ լուր չեմ ստանում,
Սպասելով, հարգանքով, գրելով:

Նամակ, ես Զարկեարն եմ, կեանքս ծախեցի.
Անունս Ս. Բրահամ բուն Շամախեցի.
Մայի՛ճն մարդ տեսայ, էլ չի փոխեցի,
Միշտ գովելով յօրինելով, շարելով:

45.

«Կ է՛ թ դ օ լ ա ն գ ի ն ա ն» Ն է չ ն ի Ն ա բ ա-
թ ի ե ղ ա ն ա կ ո վ:

Նազդ քաշելոյ հալ չունեմ թէպէտ,
Բայց առանց քեզ էլ չեմ կարալ մնալ,
Խոստանամ հողիս տալ չունեմ թէպէտ,
Հողին այրոց է, ինձ կասեն՝ մի՛ տալ:

Մօտենամ քեզի, բռնեմ կռներդ,
Թաղենեմ մինչի մահ ուժիտս հատած,
Երբ ցանկայ հողիս առնի իւր աէրն,
Թող զայ ինձ ճարի մէջքդ խտրտած:

Վարքդ նազով է ինձ համար միայն,
Ինչպէս զահիճ է վարդը բիւլբիւլին,
Իմ յոյսն դու ես, աշխարհն է ունայն,
Այդպէս չեն անիլ դռնապան զուլին:

Քանի քո սիրոյն զմայրող չի կայր՝
Նախ ես իմացամ, որ խիստ համեղ է,
Ես չի յայտնէիմ ո՞վ ձօտդ կուգայր,
Այրոց ազատիչ, ինձ մահադեղ է:

Ի՞նչ էիր առաջ, այժմս ի՞նչ էլար,
Դու չես քեզ արել պատուոյ արժանի,
Ես քեզ գովելով միշտ և անդադար՝
Հասար ՚ի փառաց այս աստիճանի:

Մէջքդ բռնելուս ինձի տան թրով,
Յատուկ, հաւատիր, ցաւ չի հասկանամ,
Մաս մաս կտորես ինքդ ինձ սրով,
Կարծիք չունենաս բերանս բանամ:

Այսօր Մայի՛ճն մայնդ լսելով՝
Խիստ ցանկանում էր ինձ նման լինիլ.
Խեղճ Զարկեարը միշտ հետդ խօսելով՝
Չի կարաց քեզի սիրական լինիլ:

46.

Ա ն ի ք ա ղ ա ք ի վ ե ռ ա յ .

Շքեղաշուք մայրաքաղաք Անի եմ,
Գորովագութ ծնող Հայաստանի եմ,
Զստէք թէ այս վիճակին արժանի եմ,
Անբաղդացած ես ըստ հրամանի եմ,
Յեւ ու առաջ ես որդւոցս պիտանի եմ,
Ինձ օգնեցէք, առանց օգնականի եմ,
Ընկերաց մէջ նման մուրացկանի եմ,
Բաղմաղաւակ հաչրս աննշանի եմ:

Գուցէ թէ այսպէս կամեցաւ իմ տէրն,
Զարեաց քամին անչալտ արաւ մեր սէրն,
Ո՞նց զիմանար ստեղծողի համբերն,
Սուրբ ճաշակից դաշինք դրող տէրաէրն
Ինքն ուրացաւ Քրիստոսի պատուէրն,
Չեռէս գնաց լոյս հաւատի ստուերն,
Ո՞հ, կուրուսի ինքնակալ Կայսերներն,
Անբանից տուն, անասնոց ընտանի եմ:

Գլորեալ եմ աշխարհի ապտակիցն,
 Չեմ պրծնում ազգի մեղաց տակիցն,
 Հարգրէք ահվալս լուսնեակիցն՝
 Թէ ի՞նչ քաշամ անիծեալ Վասակիցն,
 Հայրասպան, անհաւատ Արշակիցն,
 Գանգատ ունիմ քանի չար մշակիցն,
 Ի՞նչ կու ծնէր չարութեան վիճակիցն,
 Ազգի ձեռամբ նման մարդասպանի եմ:

Է՞ր չի հասնում ծայնս լալոյ Հայերին,
 Արդէն ժամ է ողջոյն տալոյ Հայերին,
 Ահա՛ յայտնի օր սղալոյ Հայերին,
 Ծամփէն ահ է մօտս դալոյ Հայերին,
 Նոր ուխտ ունիմ բաց խնդալոյ Հայերին,
 Ազատ բառն հասկանալոյ Հայերին,
 Արձակման դուռն բանալոյ Հայերին,
 Որ աւերակ կոխան Յունաստանի եմ:

Ձեռ մի՛ քաշէք ձեր անդին կորուստիցն,
 Ազատ աղքատն՝ ծառայ հարուստիցն,
 Եղբօր թշնամին լաւ է այլ դօստիցն,
 Բախտաւոր է զօրեղն նուաստիցն,
 Դուրս եկէք ծուլութեան առադաստիցն,
 Լաւ է իմաստունն անիմաստիցն,
 Ես ձեզ նշան մեծ աղնուականի եմ:

Ազգասիրութիւնն մին այնպէս ծառ է,
 Որ նորա պտղի համն անրսպառ է,
 Ինչ ազգի մէջ սիրոյ ճրագն վառ է՝
 Նա անուամբ ՚ի մէջ աշխարհի պայծառ է.
 Անսէր ազգն ամեն բանիւ թշուառ է,
 Եթէ քննէք Անի տառն ինչ տառ է.
 Կաւն սուրբ է, քարն մարութ, մարմառ է,
 Հարուստ ազգիս՝ կարօտ այգեպանի եմ:

Ո՛վ Հայ կանայք, որ ժամանակ ողբ ասէք,
 Խեղճ Անիիս ողբապոլս ըսկրսէք,
 Գոնէ դուք իմ աղերսանագրս լսէք,
 Հայ մարդկանց գտակ ծածկէյն բամբասէք,
 Ի՞նչ փառաց հասցրուց աղբն ինձ, տեսէք
 Աստուած աղաչէք, օրհասին ըսպասէք,
 Արժանանաք իմ հողին երես քսէք,
 Ես տապան քաջ սրբոց զերեղմանի եմ:

Հայեր, զիտէ՞ք հիմիկ որքան տարի է,
 Եղճուկ, Անին աչքը ճանապարհի է,
 Եթէ դարթնէք՝ ողորմութեան շարի է,
 Այս նոր սերմն պտղատու է, բարի է,
 Ծաղկանց հոտից խիստ նման բահարի է,
 Ով յոյս ունի՛ նորա գործն արի է,
 Զարկեարի Մայի՞՞ն ումիտվարի է,
 Որ չեմ մեռած, Անի եմ, կենդանի եմ:

47.

Պարսկաստանցի Դաւիթ-Խանի կենակցի գա-
 լստեան շնորհաւորելն.

Շնորհաւոր ձեր գալուստն, ո՛վ հրեշտակավարք Խանուհի,
 Խնդրեմք ներել ՚ի սուրբ սրտէ ինձ նուաստիս, ո՛վ Խանուհի:

Երբ դուք հասար ձեր քաղաքն՝ խաւար աստղն անդունդն իջաւ,
 Եղև մեզի կրկնազարուն, ազգասիրութեան սերմն աճաւ.
 Մոլորականք սուր վեր առած՝ լուսինն բերին դահիճաւ,
 Երկնքիցն ծայն էր գալիս, ստեղծողիդ փառք, Խանուհի:

Ծնած, սնած բախտի ծոցին քո ամուսնոյ այս վիճակն,
 Դու ես անթմրութեան զինի, նա է քո արժան բաժակն,
 Քո սիրով նա միշտ ուրախ է, նայելով աչն ու ահեակն,
 Փառաւորեալ հինգ կայսերէ դու ես վեցերորդ տեսակն,
 Ի՞նչ օր էր ձեր գուզման օրն, զո՛չց տուեց հնարք, Խանուհի:

Քո տեսակի անփոյս եղն՝ չէր մանեկած մեր սարումն,
 Սրբակենցաղ հարս աննման չէիմք տեսած մեր դարումն.
 Զար աչքն քեզ ափսոսում է, տանջվում է չարն չարումն,
 Մալխն քեզ հիւրընկալ էր, ազատար նանապարհումն,
 Այժմս յունիս է ցոյց տալիս անսխալ արարք, Խանուհի:

Կամ երազ է, կամ տեսիլ է, կամ ազգասիրութեան նշան,
 Կամ պատահմունք է բախտաւոր, որ մեզ պատահաւ անկիւման,
 Այսպէս Խանուհիք միշտ պահես ազգի համար, Աստուած, աման,
 Ուսեալ բարի վարժարանի, եղեալ ընդ հողւոյն միաբան,
 Գուցէ ցոյց տան մեզ օրինակ մեզ նման օտարք, Խանուհի,

Անթերի հայ Դաւիթ-Խանն, եղճեկ, ազգին հայր սիրելի,
 Զհանդուրժեաց անտես առնել, ձգել մեզ ընդ վայր սիրելի,
 Դու լուսոյ ծնունդ Խանուհիդ Հայաստանի մայր սիրելի,
 Իշխան Մովսէս Զօհրաբեանցը մեզ բարի եղբայր սիրելի,
 Զարկեալն Մայիճի խնդրանօք խօսեց քանի շարք, Խանուհի:

48.

Գեղեցկութեան անհաստատ լինելն.

Շատ մի հպարտացիր, Անթառամ խանում,
 Ինչո՞ւ ես պատկերիդ վերէն դարձանում,
 Շատերն են քեզի պէս եղել մէջրանում,
 Հիմիկ տան քիւնջումն բամբակ են մանում:

Երբ կենաց մէջ քառասուն տարիդ լրացաւ,
 Գեղեցկութեան ծովից առուդ չորացաւ,
 Յանկութեան տեղ՝ դուցէ տեսնես փորացաւ,
 Իբրև անդամալոյժ՝ կապրես եօրդանում:

Միտդ կրնինի իմ քեզ սիրով պաշտին,
 Քո նազով վարվին, իմ աղաչին,
 Գլուխդ կու բռնի անէժ, ոչին,
 Կերակուրդ կտան մին ջոկ ամանում:

Հազիդ մաշուած կապէն, չադրա հալաւն
 Զի թողիլ զինչանաս ատամնացաւն,
 Սատանից գէշ կուլինի կանանց պառաւն,
 Դժոխքի դռնապահ՝ ապրող գիւլխանում:

Արև տեղերումն դու վերշրնթռնած,
 Տակիդ հասիրի կտոր մին քարի կռնած,
 Մանր երեխայքն չորս կողմդ բռնած,
 Կասեն, պառաւ, մի՞թէ օյին ես հանում:

Զարկեալի խօսքերն մտումդ պահիր,
 Այժմեան մարգարէ է նա, ո՞չ թէ շահիր,
 Մի՛ լսիր Մայիճին, շատ սրտեր շահիր,
 Առաւել աշխարհից ո՞չինչ չես տանում:

49.

Աւանդ հայաստան, շքեղ բուրաստան.

Ո՛վ հայրենական այգի բազմասէր,
 Մինչ ե՞րբ ամլանաս, ծաղկիս ո՞չ ընդէ՞ր.
 Ժամն եհաս լինիլ մեզ քաջ հայրենասէր,
 Արդեօք մեք տեսնե՞մք զքեզ պտղաբեր:

Սառուցեալ ազգին մեր մերձ է ամառն,
 Ճաշակել զբաղցր, մոռանալ դառն,
 Երևեցան հովիւք, ուրախ լեր, դառն,
 Կակղեաց հալկազեան մեծաշուք ծառն:

Ի ձեռն իշխանաց անսէր դաւածան՝
 Զրկեալ եմք հայրենեաց, եղեալ գիր ու գան,
 Ի ձեռն իշխանաց այժմեան միաբան՝
 Մնամք յայսմհետէ եղբարք անասան:

Ուրախասօզին հանգիստք սուրբ նահատակաց,
 Որո՞մքն Վասակեան մեկնեցան ՚ի բաց,

Թէպէս յոյժ տանջեցաք վասն մեր մեղաց,
Փրկիչն ամենից եհաս և օգնեաց:

Հայաստան, Հայաստան, ո՛վ սուրբ Հայաստան,
Հնչե՛ց հողմն ազգասէր 'ի քոյոյ զարնան,
Ուխտաւոր որդիք քո ահա՛ 'ի քեզ զան,
Աւանգ, զի կորուսան մուրհակն ազգական:

Կիցուք յայսմհետէ նախանձոտ և հեղ,
Ոչ ամենայն նեղչաց ասեմք՝ Տէր ընդ ձեզ,
Զարթեալքս 'ի քնոյ նորոգեմք պարտէզ,
,,Մեղուն Հայաստանի“ ազգ արար զմեզ:

Զարիւար, կամքն Մայիճի դու լե՛ր կատարող,
Յալ ազգէ վրէժխնդիր, Ազգին քո ներող,
Զգո՛յշ լեր, երբ հնչի հրաւիրման փող,
Հայ զոհեալ, և հայ մոլտ Հայաստան հող:

50.

Հրաւիրանք հայաստանի, նոր եղանակի.

Ով որ Հայաստանցի Հայ է, չի մոռանալ վարքն Հայոց,
Ով որ այլ ազգաց ծառայ է, չի հարգնիլ աշխարհն Հայոց.
Եկա՛յք, Հայեր, եկա՛յք, Հայեր, նորոգեսցուք Հայաստանն,
Այլոց դրախտիցն լաւ է մեր հայրենի բուրաստանն:

Հայաստանի հայ տիկնայքն աղքատաց կու տային կայքն,
Այժմեան մօղասէր կանայքն ո՞նց են մտնում շարքն Հայոց.
Եկա՛յք, Հայեր և այլն:

Հայաստանի յոյս, հաւատն զեռ չի փչացրել արմատն,
Միմիայն այս է գանգատն՝ փոխարկվել է կարգն հայոց.
Եկա՛յք, Հայեր և այլն:

Հայաստանի հայ իշխանքն թողած են իւրեանց նշանքն,
Նահատակաց գերեզմանքն՝ որք են զօրավարքն Հայոց.
Եկա՛յք, Հայեր և այլն:

Հայաստանի առուտուրն, Երասխի մարսական ջուրն,
Երկասյրի զինւորաց սուրն, ազգօգուտ արարքն Հայոց.
Եկա՛յք, Հայե՛ր և այլն:

Հայաստանի որդւոց միշին՝ տեսէք Մայիճի պէս խեղճին,
Պատրաստ է տալ կեանքն վերջին, ինչպէս նախահարքն Հայոց.
Եկա՛յք, հայեր և այլն:

Զարիւար, այժմեան կարապետն, Մատթէոս սուրբ Հայրապետն,
Ազգահող նարտարապետն, յոյս հաստատուն փառքն Հայոց.
Եկա՛յք, Հայեր, եկա՛յք, Հայեր, նորոգեսցուք Հայաստանն,
Այլոց դրախտիցն լաւ է մեր Հայրենի բուրաստանն:

51.

Գ ի ն ո յ եր գ

Ուզում եմ ես այն զինին, որ նորան թմրութիւն չունի,
Ի՞նչ կանեմ ես այն զինին, որ ինձի փրկութիւն չունի.
Ուզում եմ ես այն զինին, որ սուրբ հողունցն պէս մաքուր է,
Ի՞նչ կանեմ ես այն զինին, որ հողուոյ կամ մարմնոյ հուր է:

Ուզում եմ ես այն զինին, որ ծնունդն անարատ է,
Ի՞նչ կանեմ ես այն զինին, որ ինքնին մեղաց արմատ է.
Ոտան տակ ընկած զինին ո՞նց ընդունի իմ բերանն,
Նա տանար Աստուծոյ է, է՛ր կուժտնի անարժանն:

Թէ զիտէք ի՞նչ զինի էր, որ եղև արեան փոխանակ
Անկանոն զորժ չէք ածիլ դուք զինին ամեն ժամանակ.
Նա իւր արիւնն տալով՝ հաստատում էր հաշտութիւնն,
Գու նախ զինի ես խմում, ապա եղբորդ արիւնն:

Ինձ համար մաքուր զինին անգամանդ սարից բերէք,
Ս.Ժողն հրեշտակ լինի, կուլէն մուլթն աշխարհից բերէք,
Առնելոյ համար նորան՝ տմարդի կեանքն ծախեցէք,
Սառելոյ համար նորան՝ լուսնիակիցը կախեցէք:

Ո՛չ ոսկւոյ, ո՛չ երծաթի, ո՛չ ձեռադործ թաս եւ ուզում,
Զրհնեղեղից մնացած ինքնափոր պմաս եւ ուզում:

Անլուաց խամ կտաւն ինձ համար սեղան արեցէք,
Մահուանս այն սեղանն ինձ յատուկ սրատան արեցէք:

Տապանակ ուխտին բերէք, նորանից կրակ վառեցէք
Արու արծիւ մորթեցէք, միսն խորոված արեցէք,
Ուտեմ, միտս սղանայ զէպի սուրբ Երրորդութիւնն,
Երգեմ, սուրբ ասելով՝ օրհնեալ է քո յատուկութիւնն:

Երբ բաժակն առնեմ ձեռս՝ բոլոր երկինքն երևի,
Ունիմ այլ ցանկութիւն՝ թէ պարզեատուն պարզևի,
Եթէ ես այն ճաշակեմ, մեղքերս զղջալ կարենամ՝
Յոյս ունիմ, որ ցոյածե աթոռն տեսնալ կարենամ:

Բաժակիս չորս կողմովն գրած լինի էւ է էւ է,
Որ նա է իմ Փրկիչն՝ հնչման փողոցն Գաբրիէլի,
Զարկեսրի այս մեղքերն մինչի դատաստան չի մնայ,
Որ նորա բարեհաճոյ Մայե՛ջն փոշիման չի մնայ:

52.

Փ ո ղ ի վ ե ր ա յ ա ս ա ծ .

Ո՞վ է հարցնում մարդկութիւնն, մարդ բառն փողն է, իմացէք,
Մարդկանց անթառամ պահողն՝ սրտերի ցօղն է, իմացէք,
Եթէ փող ունես, աներկբայ, ինչ որ պատահաւ, գողացիր,
Հարուստն ինչքան գողանայ՝ աղքատն գողն է, իմացէք:

Առհասարակ պիտի ապրենք մինչի հարիւր բսան տարի,
Փողն մարդկանց ձերացնող, շուտ սպանողն է, իմացէք,
Ծնողք իւրեանց որդւոց մէջին՝ աշխատաւորին եւ սիրում,
Անփող որդին իւր ծնողաց աչքի գրողն է, իմացէք:

Թէպէտ կասնն մեծատունն արքայութեան անարժան է,
Բայց մին կերպիւ արքայութեան դուռն բացողն է, իմացէք:

Մի զարմանալք, ում տեսնում էք միշտ հարբած է առանց զինի,
Նորա սրտի մէջ եռօղն՝ ոսկի խաղողն է, իմացէք:

Ով որ փողով փող աշխատի՝ փողի համար է աշխատում,
Իրան համար աշխատողն՝ հագնող, ուտողն է, իմացէք.
Անփող մարդն հարսանեաց տան՝ մի այրի կնոջ նման է,
Փողն նուաստին մէջլխում՝ արիացնողն է, իմացէք:

Ոչ ով չասի ես խելօք եմ, այսու պատիւ ունեմ աշխատած,
Փողն մարդկանց պատուի հանող, պատուից բզոցն է, իմացէք.
Յուզան իւր Տէրին մատնելով՝ դառաւ նզովեալ անպիտան,
Նա միմիայն բանին պատճառ է՝ փողն մատնողն է, իմացէք:

Ես էլ շատ վախտ ցանկանում եմ լինիլ փողատէր չիմար,
Աշխարհիս մէջի արլահն՝ շատ մտածողն է, իմացէք.
Քալ մարդիքն իմ խօսքերս, կարծեմ, ոչինչի տեղ չդնեն,
Բայց յոյս ունեմ, որ Մայե՛ջն ականջի օղն է իմացէք:

Զարկեսրի որքան մտածաւ, որ փողից լաւ մին բան ճարի,
Ոչ կայ և ոչ էլ իլնելու է, սա վերջին տողն է, իմացէք:

53.

Ս ու ը ր ք ս է ր .

Ոսկով գուգած ոսկւոյ ծառ ես, պտղատու չես է՛ր, Ոսկի ջան,
Գեղեցկութեամբ անսպառ ես, կենդանի պատկեր, Ոսկի ջան:

Սև աչքր ունք, լիքնր երես, վիճակդ բարեաւ վայելես,
Զուլէլխան ես ճշմարտապէս, ո՞վ է քեզ ընկեր, Ոսկի ջան:

Զար աչքն կաթի օձի թոջն, այրի ՚ի մէջ չարեաց հրոջն,
Պռօշիլդ կէսն կարմրազոյն, ինչպէս վարդի թեր, Ոսկի ջան:

Շատերի անուեն է Ոսկի, բայց ոսկւոյ նման չեն իսկի,
Էյհամն մեծ է այս խօսքի, չեն քեզի ընկեր, Ոսկի ջան:

Մայե՛ջն պարծանքն դու ես, քեզ չկայ, արանքն դու ես,
Երկու աշխատանքն դու ես, նա առանց քեզ չէր, Ոսկի ջան:

Զարկեսրի պէս չար տղեան ընդունաւ թշնամեաց նեան,
Պիտի մինչի մահ քո հետն նա պահի սուրբ սէր, Ոսկի ջան:

54.

Խօսակցութիւն պառաւի հետ.

ԵՍ ԱՍԱՄ.

Ոտիդ իւզուրիցն Աստուած ազատի,
Այրպէս ո՛ր ես զնուծ, ջան խաթուն պառաւ.
Լսած Թառամեալին ձարդի ես տալիս,
Օֆսունդ քցեցիր, բանն ո՞նց դառաւ:

ՊԱՌԱԿՆ ԱՍԱԿ.

Կանանց չարախօսիցն Աստուած ազատի,
Ես լաւ էի բռնացրել, Շուշանն ծռաւ.
Էլի ես էն տղի ձօտիցն եմ գալիս,
Էնքան զովեցի, որ հոտիցն ուռաւ:

ԵՍ ԱՍԱՄ.

Պառաւ, ես տեսել եմ, աղջիկն գէշ է,
Ասում են ձարմնով էլ մին փոքր բօշ է,
Մեծ մօրս եաշն ունի, բնութեամբ էշ է,
Մեղք չէ՞ բաս էն տղան, որ նորան առաւ:

ՊԱՌԱԿՆ ԱՍԱԿ.

Որդի, դու չես տեսել իմ դառնիշանք,
Երեսին քսեցի ալբրիկ բրբիշանք,
Տղեն տեսնալ բանին բերաւ նշանք,
Մածնակեր կատուի պէս աչքերն չռաւ:

ԵՍ ԱՍԱՄ.

Պառաւ, քո իմանդ ի՞նչպէս իման ա,
Ջահիլներ խաբելն անաստուած բան ա,
Թէ զիշերն տարաւ, վաղն կիմանայ,
Գուցէ ողորմելին զուսալից մեռաւ:

Պառաւ, մեղքդ ինի Զարիւստի վզին՝
Թէ քեզ չի նստացնի սատանի պողին,
Դու ջան կու տաս ինչպէս մեր ղեղին թաղին.
Մայի՞ն պատմեցի, բռանգն թրուաւ:

55.

Թ ու ը ի ն շ ի „Մ ար ա լ ու շ է յ բ ա ն“ մ ու խ ա մ մ ա զ ի
ե ղ ա ն ա կ ո վ .

Ո՛վ իմ սիրականս, մատաղ քեզի ջանս,
Մորթում ե՞ս թէ պահում, վեռիր հրամանս:

Փուրջին մաղերդ ամպի կտոր երբ անում է խաղ՝
Շատ սրտի է տամ դաղ.

Մարրիխ ճակատդ փալցումէ միշտ լուսնիակից վաղ,
Յատկանում է խաղաղ.

Աղեղնաւորն ունքերիցդ թահր է պահում թաղ,
Նմանում է անշաղ.

Ջալլաթ աչքերդ պականալոյս ում նայի, աւա՛ղ,
Կտրատում է սաղ սաղ.

Տնդստանայ զօրքից խալերդ առել ա բաշտաղ,
Ունի յաղթական հաղ:

Հրեշտակք նկարան լոյս երեսդ կարմիր ու ճերմակ,
Ինչպէս վարդ ու բամբակ.

Լեզուիդ նուազը երբ լսում է վայրենի սոխակ՝
Խիստ առնում է փափաղ.

Արի՛ մին ողորմած նայիր ինձ ուրախ ղիզարից,
Պրծնեմ ահուզարից,

Որաեղ դու լինես, այնտեղ է իմ աղօթարանս,
Ո՛վ դին ու իմանս:

Այլոց երևալուս, եթէ քեզ հանանչեն ինձ պէս՝
Կասեն հողեղէն չես.

Վսյ ինձ, սա մին ապրու՛ստ է, եարար, որ ապրում եմ ես,
Քաշած օրերս տես.

Իմ գաւի համար դեղ չի գրած, միամիտ իլնես,
Ինքդ պիտի փրկես.

Կամ Հերօդիայի աղջկայ պէս գլուխս կտրես,
Ինձ կուչես Յովհաննէս.

Ի՞նչ կուլինի մէկ էլ խեղճ Մայի՛ճի աչքերն սրբես,
Հրաշքդ մեզի յայտնես:

Զարի՛տար, մին էլ քեզ մայր չի ծնիլ, որ աշխարհ բնկնես,
Քո բաժինդ ապրես.

Անդարձ սէրն յանձնաւ քո ձեռն իմ այս դիւանս,
Քարի մէջ է բանս:

56.

Օրօրոցի երգ, ասացեալ ՚ի վերայ միայնակ որ-
դուց իմոց, որ ծնաւ 1864 թիւ, յունվարի 12-ին.

Պիւլպիւլն զարթնել է վարդին ծոցումն,
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լսյ լսյ:
Իու զառնիչան նախշած օրօրոցումն
Դէ, ննջիր, մարալս, ասում եմ լսյ լսյ:

Եօրդանչէդ ալխարայ, բաւթով զարդարած,
Դեօշակդ զանաւուդ, բանդուռ կարած,
Բարձրդ դեղին աթլադ, զուլից լքզրրած,
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լսյ լսյ:

Իստակ կիւլաբաթուն կապանքիդ քողն,
Տասն ու չորս տարեկան է նորա գործողն,
Մանր պմաստներով ականջիդ օղըն,
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լսյ լսյ:

Հարիւր մատաղ մորթած, մինչի քեզ ճարեցիմ,
Թասակիդ զանազան ոսկիք կարեցիմ,
Ինչքան ինձի նեղագրար՝ անէճք չարեցիմ,
Դէ, ննջիր, մարալս, ասում եմ լսյ լսյ:

Տէրն քեզ պարզեի հարիւր տարի կեանք,
Անուանդ զարդարեն այլքն զովասանք,
Խելօք որդի իլնես ծնողացդ պարծանք,
Դէ, ննջիր, հողեակս, ասում եմ լսյ լսյ:

Մայրդ տեսնի քեզ նորահաս վախտիդ,
Ծառաներդ բռնած չորս կողմն թախտիդ,
Զահիլ աղջիկներն նստած քո բախտիդ,
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լսյ լսյ:

Եթէ հօրդ նման կուլինես սիրահար,
Հիմիկվանից մօրդ զլիսին բախտաւար,
Ամեն օր կու լսի մին թագա խաբար,
Դէ, ննջիր, մարալս, ասում եմ լսյ լսյ:

Մայի՛ճի Սերովբէն քեզի կնքաւոր,
Պսակդ տեսնալին էլած ուխտաւոր,
Աստուած քեզ նորա հետ պահի բախտաւոր,
Դէ, ննջիր, հողեակս, ասում եմ լսյ լսյ:

Ձեռիդ խաղալիքն է կենացս թելն,
Մին օր առանց քեզի տանի ինձ սելն,
Զարի՛տարի միայնակ Ռափայէլն,
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լսյ լսյ:

57.

Պրիդանն տունն քանդող է.

Պրիդանը վարք բցողն՝ զուրկ ծնայ երկու կեանքիցն,
Աշխարհաւեր բան բացողն չի շահիլի աշխատանքիցն:

Հայ ազգի մէջ ո՞վ էր տեսել, այլ ազգիցն էինք միշտ լսել,
Այս օրինաց ընդդէմ բանն՝ հիմիկ մեր ազգն է սկսել:

Անկիրթներ, 'ի ձեռն փողի, գնում են նորահաս տղի,
Երբէք անուեն չեն տալիս գեղեզիկ արուռ պահողի:

Ահա տեսէք պէսպէսութիւնն, չիշեալ բառի փիտութիւնն,
Երկուսն չեն տալ միասին, պրիդանն ու պարզութիւնն:

Կնոջ փողն է թուր երեսի, նա ման է գալիս նոր քիտի,
Տափը մտնի այն գտակն, որ պիտի կնոջն լսի:

Հում սերը, հաւաքած կաթը՝ չունենալ յատուկ լաղաթը,
Յայտնի բան է, մեղաւորը պատրաստ ունի ըռշվաթը:

Ով մեծ փողով մարդի գնաց, մարդին ատաւ՝ ինքն փքաց,
Ով ոք այս բանին համբերի, էլ նամուսն ո՞րտեղ մնաց:

Շատ ազգիւնք տանն են մնում, հողեղէն են, չեն դիմանում,
Շատերն աննար մնալով՝ ուրիշ ազգերի են գնում:

Մին ազգիկ մօրս պէս կոչս էր, Մայիճն խնամախօս էր,
Թէպէտ պրիդանով գնաց, էլի ազգիկն ափսոս էր:

Զարկեար, դու փողով չես առել, այլոց օրինակն դառել,
Տեսնում ես ազգին հաճոյ է, պարտաւոր ես դու էլ լռել:

58.

Պիւլպիւլի վերայ.

Պիւլպիւլի, դու էլ ինձ պէս 'ի դուր ես տանջում,
Աշխարհի ախմաղն մէկ ես եմ, մէկ դու.

Միրուններից հաստատ սէր ենք պահանջում,
Միշտ կռոց մատաղն մէկ ես եմ, մէկ դու:

Ի՞նչ եարս ինձանից սիրուն եար ունի,
Քո վարդը հանապաղ մօտին խար ունի,
Ամենն իւր ցաւին պատրաստ ճար ունի,
Զուրկ մնացող վաղն մէկ ես եմ մէկ դու:

Ո՞վ կասէ թէ սիրոյ գործն խալիս է,
Երբ մէկն գնում է, մէկն գալիս է,
Ըստ առակողին թէ՛ թուրքից էլ փիս է
էն անկանչ զոնաղն՝ մէկ ես եմ, մէկ դու:

Դու վարդից ձեռ քաշիր, ես Անթառամից,
Պատմողք կասեն մայեա չի լինիլ հարամից,
Առաւել չենք իլնիլ Փարհատ քարամից,
Տեսնող նորանց դաղն մէկ ես եմ, մէկ դու:

Զարկեար, ինչ դու ասար՝ Մայիճն լսաւ,
Մանուշակ ցանեցիր՝ ճանճախոտ բուսաւ.
Գնացողն գնաց, հասնողն հասաւ,
Տեղից անշարժ կաղն մէկ ես եմ, մէկ դու:

59.

Երբ ստացար ծերութիւն, էլ չի
անես սէրութիւն.

Միրուններն էլ քեզի սիրով չեն նայում,
Դու ու՞մ որ տեսնում ես, ասում ես արի,
Ե՛կ մին դադարի:

Այդ երեսն ոչ թուրքումն կայ, ոչ հայում,
Բարեաւ մաշես, զնա՛ աստառն էլ ճարի,
Հագի՛ր տասը տարի:

Այլոց բամբասում ես՝ թէ վարքդ ցած է,
Ուրեմն քեզ ասեն հանդարտակաց է.

Աղամայ այծի պէս միշտ պոչդ բաց է,
Դմակն տեսնելու մին խեղճ ոչխարի՝
Գցում ես շարի:

Սիրտուզանքն կուլինի ջերմող հիւանդում,
Կամ թէ պարսկաց մէջին մնացած բանդում,
Սորանցով ծեր մարդկանց դու սիրտն ես քանդում,
Թէպէտ պառաւ ձին էլ ուտում է դարի,
Մարսելն է բարի:

Փորացաւ չունենայ չաղ միս սիրողն,
Իւր կայքին կու նայի զոնաղ բերողն,
Զուարթ ջահիլ պիտի ակն բերողն,
Իողող ձեռն ո՞նց կուծակի միւրվարի,
Յիմար մուշտարի:

Ես քո ձեռից ո՞ւմ արդ անեմ, ծե՛րութիւն,
Քեզնից լաւ էր ինձ պատահէր կուրութիւն,
Ո՛չ տեսնէիմ, ո՛չ անէիմ չարութիւն,
Ման դայիմ արխային ես մարդաւարի,
Ի մէջ աշխարհի:

Անվարձ մշակ ես, թէ առնովին զո՞ւլ ես,
Ահա՛ քեզի զանգակ, եթէ որ խուլ ես,
Շատ վախտ տեսնում են, որ գործքիդ մէջ ծուլ ես,
Քացով տամ են, ասում՝ դէ՛ վեր կաց կորի,
Գնա՛ էլ քորի:

Զարկեալ, դու երեսուն ութ տարօք ես,
Ներիք ա Մայի՛ն սիրտն բորբոքես,
Երբ երգել սկսես, սաղդ լաւ քօքես՝
Կապանքն է թուլանում շատ ցաւադարի,
Ընկնում են բարի:

60.

Զ զ ջ ու մ ն.

Սէր, քեզանից զահլես դնաց, խնդրում եմ ինձ մօտ չի մնաս,
Մատաղ կլինեմ ես այն օրին, բռատ իլնես, կորչես, գնաս.
Մի՛թէ քեզի խղճմտանք չունես, քանի՞ մի տաս ինձի վնաս.
Է՞ր չես ուզում չիմարի մօտ մնաս, նորանից լիանաս,
Կարողութիւնս հատվել ա, եթէ կամիս լաւն իմանաս,
Թէպէտ շատ տարուայ ծանօթ ես, բայց էս մասին չի նեղանաս:

Նաւատիր, անկեղծ եմ ասում, ձեռիցդ իլել եմ բեղար,
Աներես աղքատի նման՝ ո՞ր դուռն հասար, փայ ուղար,
Որ տեղ մեղրի կճուճ տեսար, երեւակալութեամբ լրդար,
Քո երեսիդ թուք տեսնալն՝ ես հարիւր ասեմ, դու հազար,
Մինչ այժմս ինձ խաբելով՝ չալացած մուրուքս խուղար,
Ժամանակս անց է կացել, ուզում եմ պահեմ ծո՞մ ու պաս:

Քառասուն տարիս լրանում է, դնում եմ դէպի ծերութիւն,
Իմ ձեռագեալ ժամանակին ո՞նց անեմ քեզի հետ սէրութիւն.
Աճօթ է, եթէ որ չլինի ծեր մարդումն համբերութիւն,
Քեամբաղդ եղն լղարելիս՝ միշտ կլինի տարին չորութիւն,
Ահա՛ քեզ յայտնի օրինակ՝ անում եմ անտուտ զրութիւն,
Խղճմտանքս ինձ ներում է՝ բաւ է քեզի էլ չի զգաս:

Անսէր մարդկանց վիզն հաստ է, իմ վիզն ինչպէս տանձի կոթ,
Ես կտաւ հազիւ եմ ճարում, նորա հազին մախմուր է, ճօթ,
Շատ ես մանացուրել դու ինձի մութն զիշերներ փորասոթ,
Սեղք է առաջի Աստուծոյ կամ առաջի մարդկանց ամօթ,
Վերջումն ինձի իմ տանս շինեցիր մին անտուրբ անօթ,
Յանդիմանում են երեսիս, ահա՛ վերջդ ո՞րտեղ եհաս:

Թէ ասում եմ՝ քեզ սիրում եմ հօրն ու մօրիցդ շատ ի շատ,
Ինձ ասում են՝ զանդ ես ուտում, զլուխդ տամ ես պատ ի պատ,
«էն վաղ էր, որ էշն կաղ էր,» քեզ համար աշխարհն էր առատ,

Երեսիդ չալ բրթին նայիր, զնա՛, ճարիր քեզ համեմատ.
Փռթով խօսքս փոխարկում եմ, սկսում եմ խօսալ խրատ,
Ասում եմ՝ այլ բան մի՛ կարծիր, դու մեզ բարեկամ ես, չհաս,

Արի՛ մնաս բարեալ ասեմք՝ հեռանամ, ո՛վ սէր, քեզանից,
Գիտեմ չի իշնիլ այսուհետեւ քեարվան պրկող մեզանից,
Յիմար շունն կ'տանի ճուտով փլաւր դազանից,
Այսուհետեւ կամաց կամաց համ ստանանք տան խեղանից,
Սազր դէն գգենք՝ պիրք բռնենք երկու ձեռօք դաւազանից,
Գոնէ տէրտէրի մէջլիսում ինձի ձգեն ողորմաթաս:

Զարեար, քեզի չեն հաւատիլ՝ մինչև չմեռնես ու լողանաս,
Վաթիւ մտած բնութիւնից հնար չկայ, որ նեղանաս,
Ո՛ւմ գլուխն ես բարձի դնում, ժամանակ ճարես, գողանաս,
Ծուռ շրջես բոլոր աշխարհն, Մայի՛ճի մօտ չի կազանաս,
Այսքան տարի ի՛նչ չաղացար, այսուհետեւ ի՛նչ չազանաս,
Ճաւկիթի համն դիփ մէկ է, եթէ կտորես, մէջն բանաս:

61.

Մ ա ղ կ ա ն զ վ ա ը ք ն փ ո խ վ ե լ ա, ճ շ մ ա ը ի տ ն
ճ ա խ վ ե լ ա.

Վրդովմունք ունի աշխարհին, ամպեր, դուր է՞ր էք որոտում,
Ձեր կայծակն է կպչում չարին, սորանք ճշմարտին են նետում:

Նախնիք չէին բստ աղահի, փող կու տալին առանց շահի,
Այժմեանքն ՚ի ձեռն թամահի՝ մուրհակաւ փողեր են ուտում:

Ձեն հաւատում դատաստանքն, որ զղջան իրանց չար բանքն,
Կորաւ ճշմարիտ պիտանին, սուտն սուտով են կարկատում:

Վախում է քոյրն ելբօրից, որ երկուսն էլ են մին հօրից,
Շատ ենք տեսնում մուրբաւորից բնական օրէնք են ատում:

Զարեար, Մայի՛ճիցն էլ վախէ՛, չլինի մին օր նա քեզ ծախէ,
Զրախօս մի՛ լեր, նահախ է, ո՛ւմ ձեռից ո՛ւմ ես զանդատում:

62.

Կ ո շ կ ա կ ա ը ն ս ի ը ա հ ա ը վ ա ծ է ը մ է կ պ ա ո ա լ ա զ ջ կ ա ջ
վ ե ը ա ջ.

ԱՂԶԻԿՆ ԱՍԷ.

Վե՛ր կաց, զնա՛ խեղճ ես, բանիդ, չեմ ուզում պղինձ մատանիդ,
Քո իմ մօտ գալն ՚ի գուր է, այս հուրն աննահախ հուր է,
Այլքն քեզի ծաղր են անում, թամբալացել ես, չես բանում,
Բեզ ու քեզ փիթր չես անում, ես քեզի սիրել չեմ կարալ:

ԿՕՇԿԱԿԱՐՆ ԱՍԷ.

Ցաւդ ջանիս, սիրուն խանում, մին տարի է ես չեմ բանում,
Մինչի ասածս չի անես, ինձ այս ցաւիցն չի հանես,
Առել եմ ձեռս քո փէշդ, դառել եմ ուլախդ, էշդ,
Բերել եմ ամեն փէշքէշդ, աղաչում եմ, ինձի սիրիլ:

ԱՂԶԻԿՆ ԱՍԷ.

Ամօթ ա քեզ, կնկատէր ես, մի տուն երեխերքի հէր ես,
Երեխալքդ տանն սոված, այդպէս սիրելն նզոված.
Թէպէտ ես աղջիկ եմ ահիլ, սիրում եմ նորահաս շահիլ,
Պիտեմ աշխատիլ քեզ պահիլ. ես քեզի սիրել չեմ կարալ:

ԿՕՇԿԱԿԱՐՆ ԱՍԷ.

Մէկ շիբումս թթու խիար, միւս շիբումս լիքն կազար,
Տէս, ինչքան ձեռս առատ է, թէ իմանաս՝ սա էլ շատ է,
Ձի ասես թէ ես քասիբ եմ, ինձի ե՛լա տար, թասիբ եմ,
Ի վերուսէն քեզ նասիբ եմ, աղաչում եմ, ինձի սիրիլ:

ԱՂԶԻԿՆ ԱՍԷ.

Ո՛չ պատկեր ունես սիրելի, ո՛չ խօսքեր ունես ներելի,
Ո՛չ շահիլ ես քեզդ սրած, ոչ ջիբդ փողով լքցրած.
Ղահաթ է կարազով դաթան, պաս ուտեմ նա էլ չորաթան.
Վե՛ր կաց, հեռազուր այս խաթան, ես քեզի սիրել չեմ կարալ:

ԿՕՇԿԱԿԱՐՆ ԱՍԷ.

Բռնօթաման ունեմ կաշի, ուզես՝ քեզ էլ տամ քաշի,
Ամեն օր կու սրբեմ տուճոյ, ինձ համարիր դռան շունդ,
Իսկի չի լինի՝ թող մին պագեմ, եթէ ոչ՝ հիմիկ կու ճաքեմ,
Մշակից պէս քար հաւաքեմ, աղաչում եմ, ինձի սիրիր:

ԱՂԶԻԿՆ ԱՍԷ.

Քաչալ գլուխդ մի քորիր, բռնատ իլիր, վե՛ր կաց կորիր,
Լաւերն ինձի անհաս է, խելօքներն մեղի պաս է,
Իչես Մայի՞ն՝ զուրբանը, նա էլ լսել ա այս բանը,
Այ սարերի արչ հայվանը, ես քեզի սիրել չեմ կարալ:

Զարիւթըն է ինձի հարկաւոր, ոչ շատ շահիլ, ոչ մուրքաւոր,
Խօսազնում է քաղցր նազով, սէր նորոզդ մուխամմազով.
Ով որ նորա հետ սէրանայ, չի թողիլ երբէք ձերանայ,
Թէ ասեմ, լեզուս չորանայ. ես քեզի սիրել չեմ կարալ:

63.

ՎԵՐՁԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Ո՛վ որ կամի ինձ նանանչել՝ մեծ ինքնահաւանն ես եմ,
Որ ի շարս բանաստեղծից ասում են Ֆլանն ես եմ.
Տանկաց լեզուից ձեռ քաշեցի, այժմ հայաստանն ես եմ,
Հայաստանի կորած որդեոց առանց աստիջանն ես եմ,
Ազգասիրութեան պողիցն նոր ճաշակող շանն ես եմ:

Ո՛չ քերականութիւն գիտեմ, ոչ անսխալ գրութիւն,
Ի՞մ բանաստեղծութիւնս է միմիայն մտազս սրութիւն,
Կամ անթերի գատողութեամբ ունիմ լեզու, ճարտարութիւն.
Մուլութեան զերեզմանից ես նոր եմ առած յարութիւն,
Յոյս ունեմ, որ էլ չի մեռնեմ, ազգի մէջ կենդանն ես եմ:

Եթէ ունենամ ժամանակ, ասենք, ինձի թէ մին տարի,
Կարող եմ շատ տեսակներն ես յօրինել «Նոր Քնարի» 1).
Սուերես ինի աշխարհն, ինձի տալով դործ զարիւթըն,
Պակասութիւնն չի թողում խելքս ու միտքս մին դադարի,
Սրտիս ումիզն եմ բարբառում, ոչ թէ մեծաբանն ես եմ:

Հաւատէ՛ք, ինչպէս հայ եղբարք, ի՞մ այս առաջին տեսարակս*)
Վեց ամսոյ մէջ եմ յօրինել՝ կիւրակին ի՞մ ժամանակս.
Սա մին նախնեաց ասած բան է, անխտակի է առակս,
Հագս, փորս ինձ չի թողում, խնդիր է տալիս քսակս,
Եթէ սորանցով պարսպեմ՝ վերջի մուրացկանն ես եմ:

Բանաստեղծութիւնն աճում է օր քսա օրէ տանկաստանում,
Քանցի նորանց բանաստեղծքն մեծ ռօճիկներ են ստանում,
Հողս չունեն մին այլ բանի, նորագիւտ երգեր են հանում,
Ներէ՛ք, ուղում եմ բազն ասեմ, որովհետեւ չեմ զիմանում,
Հայոց փողասլաշա իշխանաց դիւշմանն ես եմ:

Ո՛ր իշխանի մօտ ես դնամ, խոնարհեմ, գլուխ վեր բերեմ,
Նորանիցն պաշտօն խնդրեմ, ասելով այս դործի տէր եմ,
Տան դռնիցն շուղաբ կանի, իբր թէ ես մարդակեր եմ.
Գործով կատարող չեմ տեսած, լեզուաւ կասեն ազգասէր եմ.
Ինչպէս անուամբ քրիստոնեայ՝ դործով աննմանն ես եմ:

Ես հայաստանի կողմանէ դեռ ոչինչ չեմ շարունակել,
Ուխտաւոր եմ ես այս մասին, նա է սրտիս դուռն փակել,
Տեսնեմ կա՞յ ինձ առաջ քաշող, ապա պատրաստ եմ պսակել,

1) «Նոր Քնարը» ազգային երգիչների օրգան էր, որ, 1855 թուից սկսած, հրատարակվում էր Մոսկվայում, գրքովիներով, Երեսնցի Ոսկան Տէր-Գրիգորեան Յովհաննիսեանցի աշխատութեամբ:

*) Հանդուցեալը, ասում են, բաւական գրուածք է ունեցել, ինչպէս և Սաղեանի, Մատրասու, Գիւրջիվանի զինիների և նոցա կարասների զովասանքը, բայց ցաւումենք, որ մինչի այսօր այդ գրուածքը մեր ձեռք չհասան:

Գր. քահ. Գրիգորեանց:

Յանձս առնեմ լուծն ազգային, կարենամ բեռն շարակել,
էն ժամանակ կու տեսնեն, որ ազգի օգնականն ես եմ:

Տանկաց օրէնքն կախեալ է բանաստեղծից շահերիցն,
Առհասարակ հազեր զիտեն իրանց ազգային սէրիցն,
Կամ լսում է կամ սովորում բնկերն իրան բնկերիցն,
Մեր ռամիկներն ի՞նչ լսեն զիւզականի տէրտէրիցն.
Միթէ միմիայն չի հաւանող հայոց այս սահմանն ես եմ:

Ինչքան ռամիկ հայ որ լինի, տանկերէն հազեր կիմանայ,
Իրան լեզուին կարօտ մարդն օրէնքի մէջ ո՞նց զիմանայ,
Որովհետեւ մեր իշխանքն ազգ չեն սիրում, այլ մամոնայ.
Ով որ հայ է, գործն սա է, թո՛ղ բերանս անհամանայ.
Գիտեմ, որ քաղցրագնող չկայ, միշտ դառնաբերանն ես եմ:

Այս, ժամանակ, ա՛յն ժամանակ, մինչի ե՞րբ պիտի քեզ չունենամ,
Դու մեր ազգի թշնամին ես, չես թողնում բերանս բանամ,
Ես քո վայելչութիւնից իմ թամահ ատամս հանամ,
Ազգին լսացնելոյ համար՝ սա մին փոքրիկ սերմ էր՝ գանամ,
Թէ տեսնամ հարցնող չկայ, էլի առաջուանն ես եմ:

Ես տանկերէն հազ գրելուս՝ շատ ընծաներ եմ ստացել,
Բոլոր Շամախին վկայ է, որ նեղութիւն չեմ հասկացել,
Հայրենեաց սէրն զգալով՝ այն օգտից ձեռ. եմ լուսացել,
Հայերից ինձ օգտող չկայ, նեղութեան մէջ եմ մնացել,
Աստուած չի տայ փոշիմանութիւն, չեմ ասում փոշիմանն ես եմ:

Ինձի ոչ ով չի նանաչում, բացի երկու ամուր անձանց,
Մէկն ազգին քաջ յայտնի է՝ իշխան Մովսէսն Զոհրաբեանց 1),

1) Մովսէս Զոհրաբեան Զոհրաբեանցը (այժմ հանգուցեալ) Արցախեցի էր եւ աստիճանով մ ա յ օ ր: Նա բաւական տարիներ պետութեան ծառայու-
թեան մէջ զանազան պաշտօններ վարելով, արժանացել էր ատանձին համա-
կրութեան, զանազան կարգի շքանշաններ ստանալով: Հանգուցեալը Բագուի
Հայոց „Մարդասիրական Ընկերութեան“ նախագահ ընտրվեցաւ 1870 թուին,

Միւսն իմ Յարութիւն աղէս՝ լուսաւորիչն Նաջարեանց 2)
Երբէք չեմ կարող մոռանալ նախախնամութիւնն նորանց.
Թէ հազար ծառայք ունենան՝ էլի սիրականն ես եմ:

Զարկեարի մտաց աղբւրի, արդեօք, ակն բանողն ո՞վ է.
Մի տարույ մէջ երէ՛ հարկե՛ք երբ հանել խոստանողն ո՞վ է.
Թո՛ղ ինձ առաջ քաշի, փորձի, ասածիս զարմանողն ո՞վ է.
Նեախ ծայրը նոր եմ սրել, առաջիս զիմանողն ո՞վ է.
Ում մէջքն զեանին չի կպել, կա՛սի փահլիճանն ես եմ:

Երջանկայիշատակ եւ հիմնադիր նոյն Ընկերութեան, բժշկապետ Բագուի
Նահանգի, Դաւիթ Յարութիւնեան Ռոստոմեանցից 2) յետոյ եւ երեք տարուայ
ընծացքում նա ամենայն ձշտութեամբ և բարի զգացմունքով կատարեց իւր
վսեմ պարտականութիւնները: Հանգուցեալ Մովսէս Զոհրաբեանցը 1873 թուին
զնաց Թիֆլիս՝ այքերը բժշկել տալու եւ այնտեղ վախճանուեցաւ նոյն թուին,
որի դիակը բերան Բագու եւ անփոփեցին:

2) Հանգուցեալ Դաւիթ Ռոստոմեանցի անձնուէր, ազգային գործունէու-
թեան հետ կաշխատեմ մի ուրիշ անգամ ծանօթացել մեր Հայ հասարա-
թեանը:

3) Հանգուցեալ Յարութիւն Նաջարեանցը, որ Շամախեցի էր, „Զարկեարի
նախկին բարերարն է՝ եղել, որին մեծ օգնութիւններ է հասցրել երբեմն
դրամական նուէրներով:

Գր. քահ. Գրիգորեանց:

Զարկեարի յիշատակին.

Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի,
Զարկեարն անգին ա, նորան զին չունի.
Թէև «Սոխակն» էլ սիրական մին ունի,
Զարկեարին էլ Մայիֆ ընտրած հին ունի.
Հայն հաւատ ունի, թուրքն զին ունի,
Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի:

Ով որ հաւատ ունի, նորան յոյս ունի.
Ով բարի վարք ունի, նորան լոյս ունի.
Ով արախն սերմ ունի, նորան բոյս ունի.
Զարկեարն էլ մէկ օրիորդ կոյս ունի 2),
«Սոխակի» երգերն ականջին ունի.
Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի:

Ինձ յայտնի ա, «Սոխակը» վարդ սիրում ա,
Հողն մշակում ա, կարգին բրում ա,
Սշխատելով՝ ծառն հասակի բերում ա,
Ինչ որ խոստանում ա, խօսքին տիրում ա.
Ամեն եղանակ իւր քամին ունի.
Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի:

Երրորդ հատորն անգաւ, դամ է Չորսն 3),
Յոյսով սպասողն կստանայ որսն,
Փեսի մօտն պարզերես է կոյս հարսն,
Մայիֆ-Յարու թիւն, ումից առեցիր դարսն,
Ով յանձն առաւ՝ վզին լուծ սամին ունի.
Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի:

1) Որովհետև այս գրութիւնները վերաբերում են Զարկեարի յիշատակին, ուստի աւելորդ չըհամարեցի սոցա եւս աւելացնել «Բ ն ա թ» մէջ, իբրև լաւելուածք:

2) Յաւելով լսեցինք, որ Զարկեարի դուստրը, ամուսնանալով, նորերս վախճանել է:

3) Իմ հրատարակութեան «Սոխակ Հայաստանի» երգարանի չորրորդ հատորի համար է ատում:

Արծաղանք Զարկեարի 1).

Նոր կը ծագէ մեզ արև՝ իմոյ բաղդին տայ բարև,
Ի՞մ աւերակ բուրաստան արծակէ նոր նոր տերև:

Շատ ժամանակ է, ես էլ մտածում էի խորին
Հոյս ընծայել ամեն տեղ՝ զովասանել զարկեարին:

Զիմացայ ինձմէ առաջ դուրս էր եկած հանդիսում
Բանաստեղծ Զարկեար անուն Բաղուայ բաղաբի միջում:

Սչստեղից ես կը ծայնեմ՝ արհեստակիցն ի՞մ կեցցէ՛,
Ազգի բուրաստանի մէջ ամեն ծաղիկ թո՛ղ ծլէ:

Բուրաստանէն կը բուրեն անուշահոտ վարդերն,
Որից հեռի է մնացել ողորմելի Զարկեարն 2):

Կեցիր, կեցիր, բարեկամ, մինչ հասանեմ ես քեզի,
Շատ շտապով դնում ես, չես նայում երբէք ինձի:

Ես էլ քեզ պէս զարկեար եմ, թէ Տէր ինձ էլ յաջողէ՛
Ես զրածներ շատ ունեմ, սպարանի կարօտ է:

Ի՞նչ բաղդն յաջողեր է, ուղածից պէս եղեր է,—
Աւագ 3) Գրիգորեանցը քեզի շուտով օգներ է:

Թէ գտնէի օղնական, և ներէր ինձ ժամանակ՝
Ես էի յառաջ կանգնած զարկեարութեան յաղթանակ:

Ի՞նչ չես պանդուխտ ինձի պէս Պարսից մի անկիւնումն՝
Հայրենիքէն զրկուած՝ օտարների հողումն:

Կը տանջուի՞մք հանապաղ և եմք ի մէջ փորձութեանց,
Այս զաւերէն արդեօք երբ զերծանի Մ. Բժշկեանց:

1) Այս «Արծաղանք Զարկեարի» վերնագրով ոտանաւորը ստացել եմ Թէհրանից, ոսկերիչ (զարկեար) պ. Մկրտիչ Յ. Բժշկեանից, որը, կարգաւով «Սոխակ» հատորների մէջ հանդուցեալ Զարկեարի գրութիւնները, գրել է սորան, կարծելով նորան կենդանի:

2) Պ. Բժշկեանցը իւր համար է ատում:

3) Այժմ՝ Գրիգոր քահանայ:

Ն ու է ր հ ա ն զ ու զ ե ա լ Ջ ա ր կ ե ա ր ի ն, ո ր է Ա ք ր ա -
հ ա մ Մ ար ա ի ր ո ս ե ա ն, Շ ա մ ա խ ե զ ի .

Ջարկեար, վեր կաց, ինչ ես քնել
Սև հողումն պառկելով.
Բոլոր աշխարհքը բեզ գովում է,
Գրածներդ կարգալով:

Ձր գիտէին ինչ մարդ էիր.
Քեզի նոր են ճանաչում,
Ափսոսում են քո ետքիցն
Եւ միշտ «Ջարկեար» են կանչում:

Դու աշխարհում մարդ չես եղած,
Այլ ճշմարիտ մարդարէ.
Ով գրածներդ կարդում է՝
Ճենց մնում է հիացած:

Քո խօսքերդ զիւի խրատ են
Այս աշխարհի մարդկերանց.
Եա զու երկինք ես վեր էլած,
Եա խօսքերդ վեր բերած:

Քո երգերդ լոյս հանողն
Գրիգորեանց Աւագն է 1).
Դիւի տալիս է տպագրութեան,
Ասելով թէ՛ «ափսոս է»:

Կտոր մտոր էս, էն անձնից
Նա խնդրելով է առնում,
Բոլոր ջնջուածն ջոկում է,
Ջահիլ օրն է նա մաշում:

1) Աստժ Գրիգոր քահանայ:

Վեր կաց, Ջարկեար, վեր կաց, նայի՛,
Տես գրուածքդ ինչ տեղ է.-
«Սոխակումն» է «Տայաստանի» 1),
Խմբագրութեամբ Աւագի:

Լաւ բան կըլինէր խեղճ Մխակն էլ
Անդ վեր իլէր, զար քովդ,
էն բաժակէն տալիր խմել՝
էն ինքնափոր 2) թատովդ:

1) Ճիշտ է. Ջարկեարի հատուկոր գրուածները սկզբում հրատարակում էի «Սոխակ Տայաստանի» վերնագրով ազգային երգարանի հատորների մէջ:

2) Տես Ջարկեարի 51 երգի 5-րդ տան մէջ:

Գր. քահ. Գրիգորեանց:

« ԶԱՐԿԵԱՐԻ ՔՆԱՐԻ » ՑԱՆԿԸ

Երկու խօսք: Գ. Ք. Գրիգորեանց:
 Զարկեարի կենսագրութիւնը: Գ. Ք. Գրիգորեանց:
 Մայիֆի կեանքից: Գ. Ք. Գրիգորեանց:

Արդար դատաւոր, զու հասիր	1
Արդեօք սէրն ո՞նց թարգմանեմ	»
Անիրաւ աշխարհն ինձի առելով	2
Ազամ պապիւ թողը ես եմ	4
Աղանի, ի՞նչ լաւ թռչուն ես	5
Աշխարհ, քո սիրած ծարղիկն	6
Աբրահամն եմ, լաւ իմացէք	7
Անցեալ օրն ինձ տարան	8
Աշխարհին փրկիչն ազատաւ	9
Ա՛ղշիկ, մի՛ դնալ, զայլս եմ	11
Ազամ դրախտի մէջ	12
Ասամ, աղջի՛կ պարոն	13
Ամեն միտս ընկնելուս	14
Աշխարհն ինձի կուրացրել ա	15
Աշխարհիս մէջին	17
Գարնան եղանակ, ե՛կ	18
Գինեառներն քիչ պիտէին	20
Գարուն է բացուել	21
Գոհունակ եմ քեզանից	25
Դու խնդրում ես, որ քեզ զովեմ	26
Դու տասնուչորս տարեկան ես	27
Եարա՞ք Աստուած, սա ո՞վ է	»
Ես խմած եմ, դու հարբած ես	28
Երկու աղանի տեսամ	29
Ես սիրոյդ հարբածն եմ	30
Զարթի՛ր, թմրեալ իմաստութիւն	31


Է՞ր ես դու ինձի խաբում	33
Թէպէտ ամեն ստեղծուածի անունը	34
Ի՞նչ անմխիթար լաց ես իլում	35
Լոյս ես լուսատու	36
Խաբեբայ ես դու	7
Խնդրելով, չ՛առնելով է՞ր չի բեզարում	38
Կարօտ աչքեր, մի լաւ նայիր	39
Կայր մի քասիբ Մկտի անուն	»
Ճերիք ա, ոխ պահար	43
Ճալած արե՛նի պիտի ածել բերանն	44
Մարդ կայ՝ մարդ է աշխարհումս	45
Մին զիշեր քաղցր քնումն	46
Մին ուրախ բիւլբիւլ ունեմ	48
Մի՛ թողիր մէկ մազն պակսի	49
Մայիլ եմ, եա՛ր, աչքերիդ	50
Մէկ լաւ նայէք	51
Յեա այսու բարեաւ մնաս	53
Նամակ, իմ բարեաւս տա՛ր սիրականիս	55
Նազդ քաշելոյ հալ չունեմ	56
Շքեղաշուք մայրաքաղաք Անի եմ	57
Շնորհաւոր ձեր զալուստն	59
Շատ մի՛ հպարտացիր, Անթառամ խանում	60
Ո՛վ Հայրենական այգի բազմասէր	61
Ո՛վ որ Հայաստանցի հայ է	62
Ուզում եմ ես այն զինին	63
Ո՞վ է հարցնում մարդկութիւնը	64
Ոսկով զուզուած ոսկույ ծառ ես	65
Ոտիդ իւզուրիցն Աստուած ազատի	66
Ո՛վ իմ սիրականս, մատաղ քեզի շանս	67
Պիւլպիւլն զարթնել է վարդին ծոցումն	68
Պրիդանը վարք քցողն	70
Պիւլպիւլ, դու էլ ինձ պէս	»

Սիրուններն էլ քեզի սիրով չեն նայում . . . 71
 Սէ՛ր, քեզանից զահլես զնաց . . . 73
 Վրդովմունք ունի աշխարհին . . . 74
 Վէ՛ր կաց, զնա՛, խեղճ ես, բանիւ . . . 75
 Ո՛վ որ կամի ինձ նանաչել . . . 76


ՅԱԻԵԼՈՒԱԾՔ.

Բանաստեղծներ շատ կայ . . . 80
 Նոր կը ծաղէ մեզ արեւ . . . 81
 Վէ՛ր կաց, Զա՛րկեար . . . 82


«ԿՐԻՍՏՈՍ ԿՐԻՍՏՈՍ»



ՐԲՄՁՄՆ պարտք եմ համարում իմ
 սրտազին շնորհակալութիւնս մա-
 տուցանել՝



Արժ. Գրիգոր քահ. Յովսէփեանին,
 պ. Աբրահամ Սարուճեանին,
 պ. Աղաչան Մխիթարեանին,
 պ. Աղեքսանդր Տէր-Ստեփանեանին,
 պ. Աղեքսանդր Ղազարեանին,
 պ. Գերասիմ Օհանեանին,
 պ. Եփրեմ Մելիք-Ստեփանեանին,
 պ. Իսրայէլ Մանկասարեանին,
 պ. Խաչատուր Շահբաղեանին,
 պ. Յարութիւն Բարխուղարեանին,
 պ. Ներսէս Սանամեանին,
 պ. Նիկ. Մալխասեանին,
 պ. Պօղոս Մալխասեանին,
 պ. Սամուէլ Սերգէյեանին,



Մրոնք բարի եղան և «Զարկեարի Քնարի»
 համար, զանկազողներին, բաժանորդ ըն-
 դունեցին իւրեանց մօտ:

ԳՐԻԳՈՐ ԿԱԶ. ԳՐԻԳՈՐԵԱՆՅ.

«ՋԱՐԿԵԱՐԻ ՔՆԱՐԻ»

արդոյ բաժանորդաց ազգանունները: Բաժանորդագիրն էր 50 կ.

Ա Ս Խ Ա Բ Ա Դ Ի Ց.

Ահարօնեանց Կարապետ	2
Աղաբէզեանց Համբարձում	1
Ալթայեանց Եսայի	1
Աւագեանց Աղեքսանդր	1
Աբրահամեանց Ղուկաս	1
Աւագեանց Բէզլար, Կղարծեցի	1
Բարդամեանց Դաւիթ	1
Եսայեան Մկրտիչ, Բանանցեցի	1
Զօրինեանց Յովսէփ, Հալիձորեցի	1
Թարայեանց Սամուէլ	2
Իւան	1
Լալաբէզեանց Աւագ	1
Լուարսաբեանց Աբէլ	1
Խուբլարեանց Եփրեմ	1
Կիրակոսեանց Աբրահամ, Շուշեցի	1
Կիւրճիեանց Միքայէլ	1
Հայրապետեանց Համբարձում, Շուշեցի	1
Ղուկասեանց Աստուածատուր	1
Միրզայեանց Նիկողայոս	1
Միրզայեանց Եգոր, Օրդուբադցի	1
Մարգարեանց Կարապետ	1
Յովհաննէսեանց Սերգէյ, Շուշեցի	1
Յարութիւնեանց Բարայ, Ղափանցի	1
Նալբանդեանց Դաւիթ, Շուշեցի	1
Նասիրբէկով Ձէնալ-Աբղին-բէդ	1
Շահնազարեանց Ռափայէլ, Շամախեցի	1
Յ	2
Չախմախսաղեանց Կարապետ	1

Չէրբէզեանց Յովսէփ	2
Սանամեանց Աբրահամ	1
Տէր-Վարդանեանց Իվան-բէդ	2
Տէր-Գրիգորեանց Անդրէաս	1
Տէր-Յովհաննիսեանց Նիկոլայ	1
Տէր-Սարգսեանց Յովհաննէս	1
Տէր-Մկրտչեանց Նիկոլայ	2
Տէր-Բաղասարեանց Բաղասար, Ննդեցի	1
Փերիեանց Փարաւոն*)	1
Փերիեանց Մարտիրոս	1
Քարամեանց Աղասերոպ	2

Ա Բ Դ Ա Բ Ի Լ Ի Ց.

Ահարօնեանց Սամսոն	1
Արդաբիլի Ընթերցարան	1
Բէչանեանց Կարապետ	1
Եզանեանց Սիմէօն	1
Էլչիբէզեանց Յակոբ	1
Էլչիբէզեանց Աւետիս	1
Թիւնիեանց Մնացական	1
Խաչիկեանց Արմենակ	1
Մելիք-Մնացականեանց Հայրապետ	1
Մահաեսի-Օհանեանց Թովմաս	1
Մ.-Սարգսեանց Համբարձում	1
Մ.-Պետրոսեանց Յովհաննէս	1
Շահբաղեանց Խաչատուր	2
Տէր-Յակոբեանց Սահակ	1
Տէր-Յակոբեանց Կարապետ	1

Բ Ա Լ Ա Ն Ա Ն Ի Ց.

Աւագեանց Կարապետ, Կուտկում գիւղացի	1
Առաքելեանց Խաչատուր, Սեւ քարեցի	1

*) Նուիրում է պ. Յակոբ Բ. Տէր-Յովհաննէսեանց Բագրեցի:

Անտոնեանց Աղաջան, Խնձորիակ զիւղացի	1
Առափելեանց Ներսէս	1
Բաղիրեանց Ներսէս, Զանգաղուրցի	1
Գէորգեանց Համբարձում, Քալբանացի	1
Դասեանց Աւագ, Շուշեցի	1
Դանիէլեանց Յակոբ, Նորշինացի	1
Եղիարեանց Արշակ, Շուշեցի	1
Իսրայէլեանց Սիմէօն, Խնձորիակ զիւղացի	1
Ղազիեանց Միրզաջան, Աշան զիւղացի	1
Ղարախանեանց Աւետիս, ձկղին զիւղացի	1
Մալխասեանց Մալխաս	1
Մելիք-Քարամեանց Աղաբէդ	1
Մելիք-Քարամեանց Մկրտիչ-բէդ	1
Մելիք-Քարամեանց Փաշա-բէդ	1
Մելիք-Քարամեանց Արշակ-բէդ	1
Մկրտչեանց Աղաբէդ, ձկղեն զիւղացի	1
Մելիք-Ղարաջօղեանց Աւագ, հաղորդ զիւղացի	1
Մամիկոնեանց Յովհաննէս, Շուշեցի	1
Միրայէլեանց Մակար, ձալէթ զիւղացի	1
Մելրուճեանց Մկրտիչ, նոյն զիւղացի	3
Մելրուճեանց Մկրտիչ, Փիփ զիւղացի	1
Յովհաննէսեանց Յարութիւն, Քալբանացի	1
Յարութիւնեանց Թաղէս, Գանձակեցի	1
Յովսէփեանց Աւագ, Նորշէնացի	1
Յովհաննէսեանց Հայրապետ, հաղորդ զիւղացի	1
Յովհաննէսեանց Կարապետ, Շուշեցի	1
Յովսէփեանց Մովսէս, Ղշլաղեցի	1
Յակոբջան-բէդեանց Իսահակ, Շուշեցի	1
Շահսուարեանց Շահսուար, Գանձակեցի	1
Սափարեանց Պետրոս, Քալբանացի	1
Մմբաեանց Գէորգ, Շնաթաղցի	1
Սարգսեանց Մարգարէ, Քելխուրդեցի	1
Սարգսեանց Խոսրով, Շուշեցի	1

Յիսուսի

Տէր-Յովհաննէսեանց Գրիգոր, Նորշէնացի	1
Տէր-Աստուածատուրեանց Անտոն, Խնածախցի	1
Տէր-Մատթէոսեանց Իսրայէլ, Բռաթումբ զիւղացի	1

Ս Ե Ի - Ք Ա Ղ Ա Ք Ի Ց .

Արամեանց Սարգիս, Շուշեցի	2
Արամեանց Արամ, Գանձակեցի	2*
Առաքելեանց Բարսեղ, Շուշեցի	2
Արամեանց Զուճշուտ, Շուշեցի	2
Արգարեանց Մովսէս	1
Արղուճանեանց Յակոբ	1
Բաբայեանց Ներսէս	2
Բաղասանեանց Արշակ	1
Բաղրեանց Արտաշէս	1
Բաբաջանեանց Սերոբէ	1
Բաբաջանեանց Համբարձում	1
Գրիգորեանց Բակի	1
Դանիէլեանց Հայրապետ	1
Եղանեանց Յովհաննէս	1
Ղահրմանեանց Առաքել	1
Մելիք-Մտեփանեանց Եփրեմ	2
Մարգուլեանց Ներսէս	1
Մկրտչեանց Հայրապետ, Քարահունջցի	1
Մելիք-Քարխուղարեանց Նիկոլայ	1
Մխիթարեանց Մկրտիչ	1
Յարութիւնեանց Աթանէս	2
Յարութիւնեանց Բէհրուտ	1
Յակոբեանց Յովհաննէս	2
Յովհաննէսեանց Աղաջան	2
Յովհաննէսեանց Յովհաննէս	2
Նալբանդեանց Յովակիմ, Շուշեցի	1

*) Մի օրինակը նուիրում է Սաղիանցի Մ. Աթաբէգեանին:

Պետրոսեանց Յովհաննէս, Գանձակ զիւղացի	-	-	-	-	1
Պապեանց Նաւասարդ	-	-	-	-	1
Պետրոսեանց Յովհաննէս	-	-	-	-	1
Ստեփանեանց Բէհրուզ	-	-	-	-	1
Սարգսեանց Մկրտիչ	-	-	-	-	1
Վարդազարեանց Գալուստ	-	-	-	-	1
Տէր-Փաղէսեանց Արսէն	-	-	-	-	1
Տէր-Մարտիրոսեանց Եզոր	-	-	-	-	1
Փիրվերդեանց Մարտին, Ղալակեցի	-	-	-	-	2
Փիրվերտեանց Իսահակ, նոյնպէս	-	-	-	-	1
Քալանթար Մուշեղ	-	-	-	-	1

Մրովհետև Բագուի մէջ գտնուեցան և այնպիսի բարեւէր անձինք, որոնք զրքի 50 կոպ. նշանակած բաժանորդագնից աւելի վնարեցին. ուստի, այդպիսիներին յայտնելով իմ խորին շնորհակալութիւնը, տպագրուած եմ այստեղ, առանձին գուցակով, նոցա ազգանունները:

	Օր.	Բուք.	Կոպ.
Ասլանեանց Կարապետ, Օրդուբադցի	1	—	60
Բաղիրեանց Սամուէլ	1	10	—
Բալաբէգեանց Սիմօն	1	—	80
Բալիեանց Աւետիս	1	—	60
Բարայեանց Ստեփան, Հանդամիշեցի	1	—	60
Բարայեանց Ներսէս, Շուշեցի	1	—	60
Բարսեղեանց Մովսէս, Գիրքեցի	1	—	80
Գալստեանց Յովհաննէս, Հակաշէնցի	1	—	60
ԹԼեանց Արշակ, Մեղրեցի	1	—	80
Հարայեանց Սմբատ	3	3	—
Խրամիխ Ն.	1	1	—
Հախումեանց Կարապետ, Շուշեցի	1	—	80
Հալապետեանց Արդուման, Տանակերտցի	1	—	80
Հալրիեանց Աղաբէգ	1	—	60

	Օր.	Բուք.	Կոպ.
Հալրիեանց Ամիրջան	1	—	60
Հասրաթեանց Մարտին	1	1	—
Ղուկասեանց Միք. Շուշեցի, Ասխաբադ	1	1	—
Մայիսսեանց Պօղոս	1	1	—
Մխիթարեանց Աղաջան, Շուշեցի	1	1	—
Մուսայէլեանց Զօհրապ, նոյնպէս	1	—	60
Մելիք-Աղաւէլեանց Առաքել, Մեղրեցի	1	—	80
Մատթէոսեանց Յովհաննէս, Շուշեցի	1	—	80
Մուսայէլեանց Կոստանդին	1	—	60
Մխիթարեանց Յովակիմ, Հակաշէնցի	1	—	60
Միրզայեանց Աբրահամ, նոյնպէս	1	—	60
Մանասեանց Գրիգոր, նոյնպէս	1	—	60
Մելքումեանց Ալէքսան, նոյնպէս	1	—	60
Մնացականեանց Խուրշիդ, Սիւնեցի, Ասխաբադ	2	1	50
Մանկասարեանց Իսրայէլ, Շուշեցի	1	1	—
Մելիք-Եօլչիեանց Յովհաննէս, Մեղրեցի	1	—	55
Զլինկարեանց Սամուէլ	1	1	—
Սերգէյեանց Սամուէլ	3*	3	—
Վարդանեանց Պեարոս	1	—	60
Տէր-Յովհաննէսեանց և Ընկ. Ասխաբադ	1	1	—
Տէրաւերեանց Հալապետ, Միրշէնցի, Ասխաբադ	1	—	75
Փիրումեանց Թէոդորոս, Շուշեցի	1	—	80



*) Երկու օր. նուիրում է Բագուի երկսեռ դպրոցին:

Բ Ա Պ Վ Ո Ւ Ս.

Միրզաբեգեանց Խորէն աւագ քահանայ	2
Տէր-Վարդանեանց Վարդան քահանայ	2
Տէր-Աստուածատուրեանց Ղևոնդ քահանայ	2
Այվաղեանց Գրիգոր	10
Առևարական տուն Ա. Յ. Յ. Աղամեանց	20
Առևարական տուն Ա. Ծատուրեանց և Ընկ.	20
Ասլանեան Սամուէլ	2
Ապրէսեան Աբէլ, Աղստափայ,	2
Արղուճանեան Գաբրիէլ	1
Արղուճանեան Սերգէյ	1
Ակունեան Համբարձում	2
Աղամջանեան Լևոն	1
Արղուճանեան Լևոն, Ծամախեցի	1
Աթաբեգեան Արշակ	2
Աւետիսեանց Հայրապետ, Շուշեցի	1
Աբրահամեանց Սամուէլ, Սաղիանցի	1
Աւետիսեանց Հայրապետ, Խաչմաչ զիւղացի	1
Աստուածատուրեանց Իսահակ	1
Ապրէսեանց Մ.	1
Ահարօնեանց Գէորգ, Նուխեցի	1
Այդինեանց Սիմէօն	1
Աղաջանեանց Սողոմօն, Աղբուլաղեցի	1*
Բուղաղեանց եղբարբ	10
Բաբաջանեանց Արսէն	1
Բարխուղարեանց Խաչատուր, Սաղիանցի	1
Բարխուղարեանց Յարութիւն, նոյնպէս	2
Բունիաթեանց Մ.	1
Գրիգորեանց Գէորգ	1
Գանջունցեանց Սահակ	1

*) Նուիրում է Հայրապետ Աղաջանեանցը.

Գալստեանց Մարտիրոս, Զարգարանցի	1
Գալստեանց Հայրապետ, Երեզվան զիւղացի	1
Գրիգորեանց Աստուածատուր, Զարգարանցի	1
Գալստեան Հայրապետ, Տար զիւղացի	1
Դաւթեան Մարտիրոս, Կամերակուշեցի	1
Դաւթեան Յովհաննէս, նոյնպէս.	1
Դանիէլեան Սողոմօն, Շուշեցի	1
Դանիէլեան Զինանդիր	1
Եարամիշեան Եարամիշ	1
Էլչիրեղեանց Բախիշ, Ղափանցի	1*
Թաղէոսեանց Սմբատ, Սալմաստցի	1
Թորոսեանց Գաբրիէլ, Սաղիանցի	1
Թաթոսեանց Ղևոնդ	1
Թուճանեանց Գէորգ, Ղափանցի	1
Թաւրիղեանց Արսէն	1
Ժամհարեան Սերգէյ	1
Իսախանեան Գրիգոր, Խնածախ զիւղացի	1
Խաչատրեան Յակոբ	1
Խալաթեանց Մովսէս, Կամենակաչ ստանիցս	1
Խաչիեան Թաղէոս, Սաղիանցի	1
Հալաբեան Ա.	1
Ղարամանեանց Արտէմ, տպագրող, Մատրասցի	1**
Ղարազեան Աղաջան	2
Ղարախանեան Մարտիրոս, Ծամախեցի	1
Ղաղարեան Աղեքսանդր	2
Ղևոնդեան Համբարձում, Քարբանջեցի	1
Ղարողլանեան Սերօբէ, Սաղեանցի	1
Ղարողլանեան Խաչատուր, նոյնպէս	1
Ղասաբեան Աւագ	2
Միրզաբեգեան Գէորգ	3***

*) Նուիրում է Արղարիի Ընծերցասիրաց Ընկերուժեան.

***) Նուիրում է Կարի Ղարամանեանցին.

****) Մի օր. նուիրում է Նոր-շինի Առստակէս քահանային.

Մխիթարեան Վահան, Սաղիանցի	2
Մնացականեան Առաքել	2
Մելիքեան Խաչատուր	1
Մելիք-Աբրահամեան Յովսէփ, Թաւրիղեցի	2
Մանուչարեան Յովհաննէս	1
Մելիք-Շահնազարեան Աղեբս. Շուշեցի, Ուղուն-Աղա	2
Միրզաբէգեան Միրզաչան	3
Մելիքեանց Յովհաննէս	1
Մելիքեանց Սմբատ	1
Մելիք-Հախնազարեան Զուճշուա	1
Մախճուրեան Ներսէս, Շուշեցի	1
Յովսէփեանց Հայրապետ	1
Յովհաննէսեան Կարապետ, Զարգարանցի	1
Յօնանեան Յարութիւն, Սաղիանցի	1
Յարութիւնեան Աստուածատուր, Կարճեանցի	1
Յարութիւնեան Քրիստափոր, նոյնպէս	1
Յարութիւնեան Սիմէօն, նոյնպէս	1
Նազարեան Արսէն	1
Նազարէթեան Գէորգ, Նուխեցի, Տեչան,	2
Նաչարեան Միքայէլ	2*
Շաճչիեան Աղեբսանդր	1
Զախճախսազեան Ստեփան	2**
Պօղոսեան Յովհաննէս	1
Ռոստոմեան Աշոա	1
Սահակեան Խաչատուր	2
Սուլէյմանեան Արսէն	1
Ստեփանեան Զաւատ	1
Ստեփանեան Աղասի	1
Սեչանեան Յարութիւն, Շուշեցի	1
Սանամեան Ներսէս	1

*) Մի օր. նուիրում է Ղուբալի դպրոցին.

***) Մի օր. նուիրում է Բագուի «Մարդ. Հնկ.» գրադարանին.

Սարուճեան Աբրահամ	1
Ստեփանեան Գրիգոր	1
Ստեփանեան Յովհաննէս	1
Ստեփանեան Սամուէլ, Զարգարանցի	1
Սարուխանեան Պետրոս, Շուշեցի	1
Սարուխանեան Սարգիս, Շամախեցի	1
Սերգէյեանց Գաբրիէլ	1
Սերգէյեանց Միքայէլ	1
Ստեփանեան Սամուէլ	1
Սմբատ Սիմէօնեան Տէր-Յովհաննէսեանց	1 ¹
Տիգրան Սիմէօնեան Տէր-Յովհաննէսեանց	1 ²
Տէր-Գասպարեան Յովհաննէս-բէգ	1
Տէր-Մարգարեանց Յարութիւն, Շամախեցի	1 ³
Տէր-Յովհաննէսեան Միքայէլ, Զարգարանցի	1
Տէր-Ստեփանեան Մարտիրոս, Շամախեցի	1
Տէր-Մատթէոսեան Մարտիրոս	1
Տէր-Ստեփանեան Նիկօլայ	2
Տէր-Սահակեան Անդրէաս	1
Քալանթարեան Սամսոն	2
Քալանթարեան Յովհաննէս	10 ⁴
Օհանեան Գերասիմ	1


1, 2) Նուիրում է պ. Յակոբ Բ. Տէր-Յովհաննէսեանցը:

3) Նուիրում է պ. Թովմայ Տէր-Մարգարեանցը.

4) Սոցանից 2-ական օր. նուիրում է—Սաղիանի, Մատրասի և Շամախու երկսեռ դպրոցներին.

ՂԵԶԼ-ԱՐՎԱՏԻՑ.

Բաղայեանց Մարտիրոս, Թաղաւարեցի - - -	1
Գասպարեանց Ներսէս, Նորշէնացի - - -	1
Խուզայեանց Արտեմ, Շամախեցի - - -	1
Մելիք-Շահնազարեանց, Իսրայէլ, Աւետարանոց զիւղ - - -	1
Մերգարեգեանց Մկրտիչ, Շուշեցի - - -	1
Մարգարեանց Մովսէս, Գանձակեցի - - -	1
Յարութիւնեանց Աստուածաւոր, Շուշեցի - - -	1
Փոլիեանց Մելքիսէթ, Թաղարեցի - - -	1



ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ՏՊԱԳՐՈՒԱԾ ԵՆ.

1. Հնդկացւոյ անգրք անձարդարեակ կղզիներում: 1872 թ. »
2. Մանկական Լեզու (ալբերենարան): 1874 թիւ . . . »
3. Սոխակ Հայաստանի (աղգային լիակատար երգարան), հատոր I. 1874 թիւ . . . »
4. Հայկական զեղազրութիւն (վիմատիպ) Մոսկվայում ապա-
գրած, հայոց ծխական ուսումնարանաց համար: 1875 թ. »
5. Սոխակ Հայաստանի. հատոր II. 1875 թ. . . . »
6. Русская азбука съ картинками. 1876 г. . . . »
7. Սոխակ Հայաստանի (հայոց ժողովրդական երգեր և
բանաստեղծութիւններ) երկատիրութիւնը աղգային եր-
զիւների. հատոր III. 1876 թ. . . . »
8. Սոխակ Հայաստանի (աղգային և ժողովրդական երգեր
և բանաստեղծութիւններ). հատոր IV. 1878 թ. . . . »
9. Սոխակ Հայաստանի. (աղգային լիակատար երգարան) »
1881 թ. Բ. ախպ. »
10. Սոխակ Հայաստանի. հատոր V. 1888 թ. »
11. Չարկեարի Քնարը. 1890 թ. 60 կ.

Օտարաբաղաբացիք, որոնք ջանկանում են ունենալ
«Չարկեարի Քնարը», չաչանելով իւրեանց հասցէն, կարող են
բարեհաճել դիմել ինձ, Բաղու, հետևեալ հասցէով.

Священнику Григорию
Григоріанцъ,
Въ Баку.



THE HISTORY OF THE

REPUBLIC OF THE UNITED STATES

- 1. The first Congress met in 1789.
- 2. The second Congress met in 1791.
- 3. The third Congress met in 1793.
- 4. The fourth Congress met in 1795.
- 5. The fifth Congress met in 1797.
- 6. The sixth Congress met in 1799.
- 7. The seventh Congress met in 1801.
- 8. The eighth Congress met in 1803.
- 9. The ninth Congress met in 1805.
- 10. The tenth Congress met in 1807.
- 11. The eleventh Congress met in 1809.

The history of the Republic of the United States is a story of growth and progress. It is a story of the struggle for freedom and justice for all. It is a story of the triumph of the American people over adversity and oppression. It is a story of the founding of a new nation, a nation of hope and promise.

Continued on next page


Page 10

Vol. 10



ՈՅՆ «Զարկեարի Քնարը» վաճառվում է Լանքարանցի Մայիֆի օգտին:

Իւրաքանչիւր օրինակի գինն է, ճանապարհածախքով, 60 կոպ.



Թարաբաղաբացի ցանկացողները, յայտնելով իւրեանց հասցէն, կարող են գիմել Բագու, «Քնարի» Հրատարակիչ Գրիգոր քահանայ Գրիգորեանցին՝ հասցէովս.

Священнику Григорию

Григориану,

Въ Баку.

145
145

6971

2018

